



Ստրասբուրգ, 2014 թվականի հունվարի 15

ECRML (2014) 2

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՁՈՒՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ**

ԽԱՐՏԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դիտանցման 3-րդ փուլ

Ա. Խարտիայի վերաբերյալ Փորձագետների կոմիտեի զեկույցը

**Բ. Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ
Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի
հանձնարարականը**

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայով նախատեսվում է ներդնել հսկողական այնպիսի մեխանիզմ, որով կգնահատվի կողմ հանդիսացող պետությունում Խարտիայի կիրառումը եւ, անհրաժեշտության դեպքում, հանձնարարականներ կներկայացվեն դրա օրենսդրությունը, քաղաքականությունն ու գործելակերպերը կատարելագործելու համար: Այդ ընթացակարգի համար պատասխանատու կենտրոնական մարմինը Խարտիայի 17-րդ հոդվածի համաձայն ստեղծված Փորձագետների կոմիտեն է: Կոմիտեի գլխավոր նպատակը Կողմի ստանձնած պարտավորությունների կատարումը գնահատելու վերաբերյալ Նախարարների կոմիտեին զեկույցելն է, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների հետ կապված պետությունում տիրող փաստացի իրավիճակն ուսումնասիրելը եւ, անհրաժեշտության դեպքում, Կողմին հանձնառություններն աստիճանաբար ավելի լավ կատարելու կոչ անելն է:

Այս առաջադրանքը դյուրացնելու նպատակով Նախարարների կոմիտեն, 15-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան, ընդունել է այն պարբերական զեկույցների կառուցվածքը, որը Կողմը պետք է ներկայացնի Գլխավոր քարտուղարին: Զեկույցը պետք է հրապարակվի պետության կողմից: Նշված կառուցվածքի համաձայն՝ պետությունը պետք է տեղեկություններ ներկայացնի Խարտիայի կոնկրետ կիրառման, Խարտիայի II մասով պաշտպանվող լեզուների նկատմամբ կիրառվող ընդհանուր քաղաքականության եւ, ավելի կոնկրետ, III մասով պաշտպանված յուրաքանչյուր լեզվի համար ընտրված դրույթների կիրառման նպատակով ձեռնարկված բոլոր միջոցների մասին: Ուստի, Փորձագետների կոմիտեի առաջնային խնդիրը տվյալ պետության տարածքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների բոլոր համապատասխան լեզուների մասին պարբերական զեկույցում ներառված տեղեկություններն ուսումնասիրելն է:

Փորձագետների կոմիտեի դերը յուրաքանչյուր պետությունում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ կիրառվող իրավական ակտերը, կանոնակարգերը եւ իրական գործելակերպը գնահատելն է: Այն

համապատասխանաբար սահմանել է իր աշխատանքի մեթոդները: Փորձագետների կոմիտեն տվյալ պետությունում համապատասխան մարմիններից եւ անկախ աղբյուրներից տեղեկություններ է հավաքում, որպեսզի կարողանա ստանալ լեզվի հետ կապված փաստացի իրավիճակի արդար եւ անկողմնակալ պատկերը: Առաջին պարբերական զեկույցի նախնական ուսումնասիրությունից հետո, Փորձագետների կոմիտեն, անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր Կողմի ուղղում է մի շարք հարցեր մարմիններից՝ բուն զեկույցում բավարար կերպով չներկայացված հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Որպես կանոն, գրավոր այս ընթացակարգին հաջորդում է Փորձագետների կոմիտեի պատվիրակության աշխատանքային այցը տվյալ պետություն: Այդ այցի շրջանակներում պատվիրակության անդամները հանդիպում են այն մարմինների եւ ընկերակցությունների հետ, որոնց աշխատանքը սերտորեն կապված է համապատասխան լեզուների գործածության հետ, եւ նրանց հետ խորհրդակցում են այն հարցերի շուրջ, որոնք ներկայացվել են իր ուշադրությանը: Տեղեկությունների հավաքման այս գործընթացը նախատեսված է Փորձագետների կոմիտեին՝ տվյալ պետությունում Խարտիայի կիրառումն առավել արդյունավետորեն գնահատելու հնարավորություն տալու համար:

Այդ գործընթացն ավարտելուց հետո Փորձագետների կոմիտեն ընդունում է իր իսկ զեկույցը: Սույն Ջեկույցը եւ հանձնարարականների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են Նախարարների կոմիտե, որն էլ որոշում է կայացնում դրանք կողմ հանդիսացող պետությանը հասցեագրելու վերաբերյալ:

Բովանդակություն

Ա. Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ զեկույց.....

Գլուխ 1. Ընդհանուր տեղեկություններ.....

1.1 Խարտիայի վավերացումը Հայաստանի կողմից

1.2 Փորձագետների կոմիտեի աշխատանքը

1.3 Հայաստանում Խարտիայի կիրառման գործընթացի գնահատումից բխող կոնկրետ հիմնահարցեր

1.4 Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակի նկարագրություն. թարմացված

Գլուխ 2. Նախարարների կոմիտեի հանձնարարականների առնչությամբ պետական մարմինների արձագանքի վերաբերյալ Փորձագետների կոմիտեի եզրակացությունները RecChL(2009)4.....

Գլուխ 3. Փորձագետների կոմիտեի գնահատականը Խարտիայի II եւ III մասերի առնչությամբ.....

3.1 Գնահատականը Խարտիայի II մասի առնչությամբ

3.2 Գնահատականը Խարտիայի III մասի առնչությամբ

3.2.1 Ասորերենը

3.2.2 Հունարենը

3.2.3 Քրդերենը

3.2.4 Ռուսերենը

3.2.5 Եզդիերենը

Գլուխ 4. Փորձագետների կոմիտեի եզրակացությունները դիտանցման երրորդ փուլում.....

Հավելված I. Վավերացման փաստաթուղթ.....

Հավելված II Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները.....

Բ. Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը.....

Ա. Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ զեկույց

ընդունվել է Փորձագետների կոմիտեի կողմից 2013 թվականի հունիսի 20-ին եւ ներկայացվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Խարտիայի 16-րդ հոդվածին համապատասխան

Գլուխ 1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Խարտիայի վավերացումը Հայաստանի կողմից

1. Հայաստանի Հանրապետությունն ստորագրել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիան (այսուհետ՝ Խարտիա) 2001 թվականի մայիսի 11-ին եւ վավերացման իր փաստաթուղթն ի պահ է հանձնել 2002 թվականի հունվարի 25-ին: Հայաստանի համար Խարտիան ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ին:

2. Վավերացման փաստաթուղթը ներկայացվում է սույն Ձեկույցի I հավելվածում:

1.2 Փորձագետների կոմիտեի աշխատանքը

3. Հայաստանն իր երրորդ պարբերական զեկույցը պետք է ներկայացնէր 2011 թվականի փետրվարի 12-ին, սակայն այն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացվել է միայն 2012 թվականի հոկտեմբերի 11-ին: Սույն զեկույցը Եվրոպայի խորհուրդ ուղարկելուց հետո այն տեղադրվել է Կառավարության կայքէջում:

4. Գնահատման երրորդ զեկույցը պատրաստվել է Փորձագետների կոմիտեի կողմից Հայաստանի երրորդ պարբերական զեկույցից, ինչպես նաեւ 2013 թվականի մարտի 5-7-ը Հայաստան կատարված աշխատանքային այցի ընթացքում փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչների եւ

Հայաստանի իշխանությունների հետ ունեցած հանդիպումների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա:

5. Սույն Ձեկույցում մանրամասնորեն ներկայացված են այն դիտարկումներն ու հանձնարարականները, որոնք Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ իրենց քաղաքականությունը մշակելիս: Այդ իսկ պատճառով, Փորձագետների կոմիտեն սահմանել է նաեւ Խարտիայի 16-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ այն հանձնարարականների վերաբերյալ առաջարկությունների ցանկ, որոնք Նախարարների կոմիտեն պետք է ներկայացնի Հայաստանին:

6. Սույն Ձեկույցն ընդունվել է Փորձագետների կոմիտեի կողմից 2013 թվականի հունիսի 20-ին:

1.3 Հայաստանում Խարտիայի կիրառման գործընթացի գնահատումից բխող կոնկրետ հիմնահարցեր

7. Փորձագետների կոմիտեն ափսոսանքով է նշում, որ Հայաստանն իր երրորդ պարբերական զեկույցը ներկայացրել է գրեթե 20 ամիս ուշացումով, եւ որ զեկույցը ոչ բոլոր դեպքերում է պարունակում Խարտիայի կիրառման վերաբերյալ համապարփակ եւ թարմացված տեղեկություններ: Ձեկույցում հաճախ ներկայացվում են չափազանց ընդհանուր տեղեկություններ, ինչը հնարավորություն չի տալիս Փորձագետների կոմիտեին եզրակացնելու, թե որքանով է կատարված յուրաքանչյուր պարտավորություն: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է նաեւ, որ զեկույցը կազմվել է առանց փոքրամասնությունների միավորումների հետ խորհրդակցելու: Այս հանգամանքը բացասաբար է անդրադարձել նաեւ զեկույցում ներկայացված տեղեկությունների որակի վրա, քանի որ փոքրամասնությունների լեզուներով խոսողների տեսակետները եւ նրանցից ստացված տեղեկությունները չեն ընդգրկվել զեկույցում: Քանի որ համապարփակ տեղեկությունների բացակայությունը խոչընդոտում է դիտանցման արդյունավետ իրականացումը, Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին իրենց չորրորդ պարբերական զեկույցում ընդգրկել յուրաքանչյուր փոքրամասնության լեզվի առնչությամբ ստանձնած բոլոր պարտավորությունների կատարման

վերաբերյալ կոնկրետ գործնական տեղեկություններ, ինչպես նաև պատշաճորեն ներկայացնել փոքրամասնությունների լեզուներով խոսողներից ստացված հաղորդումները:

8. Դիտանցման մեխանիզմների պատշաճ գործունեությունն ապահովելու նպատակով չափազանց կարեւոր է, որ կողմ հանդիսացող պետությունները հարգեն դիտանցման կոմիտեների անդամների անձեռնմխելիությունն ու անկախությունը: Դիտանցման այդ ժամանակահատվածում Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանը ներկայացնող անդամին կոչ է արվել չմասնակցել կոմիտեի հանդիպմանն առանց հիմնավոր պատճառի: Փորձագետների կոմիտեի կարծիքով մտահոգիչ է այն հանգամանքը, որ կառավարություններն անհարկի խոչընդոտում են Եվրոպայի խորհրդի դիտանցման անկախ կառույցների աշխատանքը: Փորձագետների կոմիտեն պնդում է, որ Կոմիտեի կազմում նշանակված փորձագետները պետք է անկախ գործելու հնարավորություն ունենան, եւ Խարտիայի կիրառման հետ կապված իրենց աշխատանքներն իրականացնելիս չպետք է ենթարկվեն որեւէ պատժամիջոցի կամ սահմանափակման: Ցանկացած այլ գործելակերպ կհակասի Խարտիայի վավերացումից հետո տվյալ պետության ստանձնած պարտավորությունները պատշաճորեն կատարելու սկզբունքին:¹

1.4 Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակի նկարագրություն. թարմացված

II մասում նշված լեզուներ

9. Հայաստանի վավերացման մասին փաստաթղթում նշվում են միայն Խարտիայի III մասում նշված լեզուները (ասորերեն, հունարեն, քրդերեն, ռուսերեն, եզդիերեն): Այնուամենայնիվ, առաջին, երկրորդ եւ երրորդ պարբերական զեկույցների II մասի վերաբերյալ գլուխներում Հայաստանի իշխանությունները ներառել են նաև տեղեկություններ III մասում չնշված լեզուների մասին (բելառուսերեն, վրացերեն, գերմաներեն, լեհերեն, ուկրաիներեն եւ իդիշ):

¹ Տե՛ս Խորհրդարանական վեհաժողովի Իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների վերահսկման առանցքային մեխանիզմների հարցերով փորձագետների ընտրության գործընթացի կատարելագործում, Փաստաթուղթ թիվ 13133, 2013 թվականի փետրվարի 14, <http://assembly.coe.int>

Փորձագետների կոմիտեն գնահատման իր առաջին եւ երկրորդ զեկույցներում որոշել է անդրադառնալ II մասում նշված այս լեզուներին եւ դիմել է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք լրացուցիչ տեղեկություններ տրամադրեն Հայաստանում նշված լեզուների ավանդական գործածության եւ այդ լեզուներով խոսողների թվի վերաբերյալ: Չնայած երրորդ պարբերական զեկույցում այս հարցերի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ ներառված չեն, Փորձագետների կոմիտեն կարողացել է աշխատանքային այցի ընթացքում եւ դրանից հետո ձեռք բերել հետեւյալ տեղեկությունները:

10. Ըստ ուկրաինական «Ուկրաինացիների ասոցիացիայի» կողմից տրամադրված եւ գիտական աշխատություններից ձեռք բերված տեղեկությունների² Հայաստանում *ուկրաիներեն* ավանդաբար գործածվել է 1858 թվականից, երբ մի խումբ ուկրաինացիներ, տեղափոխվելով Վրաստանից, բնակություն են հաստատել ներկայիս Լոռու *մարզում* եւ հիմնադրել այժմյան Ամրակից գյուղը: Խորհրդային Միության ստեղծումից հետո Հայաստան են արտագաղթել մեծ թվով ուկրաինացիներ, հատկապես մասնագիտացած աշխատողներ եւ գիտնականներ: Հայաստանում չկան ուկրաինացիներով խիտ բնակեցված տարածքներ: 2001 թվականի մարդահամարի ժամանակ հաշվառվել է 1640 ուկրաինացի: Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնություն կազմող ուկրաինացիների ներկայացուցիչների հաշվարկներով՝ Հայաստանում բնակվում է մոտ 3000 ուկրաինացի: Ըստ նրանց կողմից տրամադրված տեղեկությունների՝ ազգային փոքրամասնություն կազմող ուկրաինացիների մոտ 40 տոկոսը խոսում է ուկրաիներեն: Ազգային փոքրամասնություն կազմող ուկրաինացիները ներկայացված են Ազգային փոքրամասնությունների հարցերը համակարգող խորհրդում եւ ֆինանսական աջակցություն են ստանում Հայաստանի իշխանություններից:

11. Հայաստանի իշխանությունների եւ ԵԱՀԿ-ի օժանդակությամբ

² Гарник Асатрян/Виктория Аракелова: Национальные меньшинства Армении [Հայաստանի ազգային փոքրամասնությունները], Երեւան 2002; Долженко И. В. Славянский обряд славянского православного населения Армении [Ի.Վ. Դոլժենկո, Հայաստանի ուղղափառ սլավոնական բնակչության սլավոնական ծեսը], 1985

հրապարակված ուսումնասիրությունների³, գիտական այլ աշխատությունների⁴ եւ ազգային փոքրամասնություն կազմող գերմանացիների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Հայաստանում *գերմաներեն* ավանդաբար գործածվել է 1805 թվականից, երբ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գերմանացիները Հայաստան են եկել Ռուսաստանից: 1891 թվականին Վրաստանից Հայաստան է գաղթել գերմանացիների մի երկրորդ խումբ: 1941 թվականին Կովկասում բնակվող գերմանացիներին Ղազախստան եւ Սիբիր վտարելու ժամանակ Հայաստանում ապրող ոչ բոլոր գերմանացիներն են վտարվել, իսկ 1956 թվականից հետո վտարվածների մի մասը վերադարձել է: Գերմանացիները ներկայացված են Ազգային փոքրամասնությունների հարցերը համակարգող խորհրդում: Չնայած 2001 թվականի մարդահամարի ժամանակ հաշվառվել է 133 գերմանացի, փոքրամասնության ընկերակցությունը գրանցել է 430 գերմանացի, որոնցից մոտ 25 տոկոսը խոսում է գերմաներեն: Ընկերակցության հիմնական գործունեությունը գերմաներենի խթանումն է, որն իր գործունեությունն իրականացնելու համար ֆինանսական աջակցություն է ստանում Հայաստանի իշխանություններից:

12. Եղած տեղեկությունների հիման վրա՝ Փորձագետների կոմիտեն եզրակացնում է, որ ուկրաիներենն ու գերմաներենը համապատասխանում են 1(ա) հոդվածում նշված՝ «տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի» սահմանմանը, եւ որ այս լեզուների վրա տարածվում են II մասի դրույթները՝ համաձայն 2(1) հոդվածի:

13. Փոքրամասնություն կազմող բելառուսների ընկերակցությունից տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ *բելառուսերենը* գործածվում է միգրանտների կողմից եւ Հայաստանում չունի ավանդական գործածություն: Այս

³ Alexander Yaskorski/Rudolf Yaskorski: Schwaben im Schwarzmeergebiet und im Kaukasus [Շվաբները սեւծովյան տարածաշրջանում եւ Կովկասում], Երեւան 2003. Гарник Асатрян/Виктория Аракелова, նույնը

⁴ Suren Zolyan: National Minorities in Armenia and Educational State Policy, Council of Europe, European Centre for Modern Languages, Graz 2001; European Centre for Modern Languages: Valuing all languages in Europe, Graz 2007

տեղեկությունները հաստատվել են գիտական աղբյուրների կողմից⁵: Ուստի, բեյառուսերենը չի համապատասխանում 1(ա) հոդվածում նշված՝ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի սահմանմանը:

14. Փորձագետների կոմիտեն *վրացերենի, լեհերենի եւ իդիշի* վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չի ստացել: Ուստի, Փորձագետների կոմիտեն դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք իրենց հաջորդ պարբերական զեկույցում լրացուցիչ տեղեկություններ ներկայացնեն Հայաստանում վրացերենի, լեհերենի ու իդիշի ավանդական գործածության եւ այդ լեզուներով խոսողների թվի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես առաջին եւ երկրորդ պարբերական զեկույցները, այնպես էլ երրորդ պարբերական զեկույցը տեղեկություններ են պարունակում վրացերենի, լեհերենի եւ իդիշի գործածության խթանման վերաբերյալ, եւ ակնկալելով ստանալու նշված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, Փորձագետների կոմիտեն նշված լեզուներին կանդրադառնա նաեւ սույն Ձեկույցի II մասում:

15. Հղում կատարելով Ռասսայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի⁶ կողմից պատրաստված՝ Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցին եւ հետեւելով դրանում 2011 թվականի մարդահամարի առնչությամբ ներկայացված պահանջին՝ Փորձագետների կոմիտեն դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք տեղեկություններ ներկայացնեն աղբյուրներենով խոսողների թվի եւ Հայաստանում դրա ավանդական գործածության վերաբերյալ:

⁵ Տե՛ս նույնը

⁶ CERD/C/ARM/CO/5-6, 10-րդ պարբերություն

Գլուխ 2. Նախարարների կոմիտեի հանձնարարականների առնչությամբ պետական մարմինների արձագանքի վերաբերյալ Փորձագետների կոմիտեի եզրակացությունները RecChL(2009)4

Հանձնարարական թիվ 1.

«մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ բոլոր մակարդակներում ասորերենի, եզդիերենի եւ քրդերենի ուսուցիչների բավարար թվով վերապատրաստման դասընթացներ եւ նշված լեզուներով թարմացված ուսումնական նյութերի հասանելիություն ապահովելու համար»

16. Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը, ապա Հայաստանի իշխանությունները փորձել են եզդիերենի ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն եզդիերենի ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ ձեռնարկված միջոցների, ինչպես նաեւ հիմնական վերապատրաստման վերաբերյալ ավելի կոնկրետ տեղեկություններ չի ստացել: Ավելին, ասորերենի ու քրդերենի ուսուցիչների վերապատրաստման վերաբերյալ եւս կոնկրետ տեղեկություններ չեն ներկայացվել: Ինչ վերաբերում է ուսումնական նյութերին, ապա Հայաստանի իշխանությունները ֆինանսավորել են ասորերենով, քրդերենով եւ եզդիերենով որոշ դասագրքերի հրատարակումը: Մյուս գրքերը գտնվում են պատրաստման փուլում:

Հանձնարարական թիվ 2.

«ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքների եւ պարտականությունների մասին»

17. Որոշ գործերի շրջանակներում փոքրամասնությունների լեզուներով խոսողների խնդրանքով նրանց համար պետության հաշվին կատարվել է բանավոր եւ փաստաթղթերի գրավոր թարգմանություն: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե նշված գործերի շրջանակներում փոքրամասնությունների որ լեզուներն են շոշափվել: Չկան կոնկրետ տեղեկություններ իրազեկության բարձրացմանն ուղղված

միջոցառումների մասին:

Հանձնարարական թիվ 3.

«միջոցներ ձեռնարկել՝ ռադիոյով ասորերենով ու հունարենով եւ հեռուստատեսությամբ ասորերենով, եզդիերենով ու քրդերենով հեռարձակվող հաղորդումների թիվն ավելացնելու ուղղությամբ»

18. Հայաստանի հանրային ռադիոն ամեն օր ասորերենով հեռարձակում է (15 րոպե տեւողությամբ) հաղորդում, սակայն ներկայումս հունարենով ռադիոհաղորդումներ չեն հեռարձակվում: Մինչ այժմ հունարենով հաղորդում հեռարձակելու ուղղությամբ ձեռնարկված նախապատրաստական աշխատանքները հաջողություն չեն ունեցել: Ասորերենը, հունարենը, քրդերենը եւ եզդիերենը չեն գործածվում ո՛չ հանրային հեռուստատեսությամբ եւ ո՛չ էլ հեռարձակող մասնավոր լրատվամիջոցներում:

Հանձնարարական թիվ 4.

«պարզաբանել, թե արդյոք Հայաստանում գործածվում են Հայաստանի վավերացման մասին փաստաթղթում նշված լեզուներից բացի, այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ»

19. Երրորդ պարբերական զեկույցում նոր տեղեկություններ չկան այն մասին, թե արդյոք Հայաստանում գործածվում են Հայաստանի վավերացման մասին փաստաթղթում նշված լեզուներից բացի, այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ: Այնուամենայնիվ, հիմնվելով աշխատանքային այցի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների վրա, Փորձագետների կոմիտեն եզրակացրել է, որ ուկրաիներենն ու գերմաներենը համապատասխանում են Խարտիայի՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների սահմանմանը եւ ըստ այդմ նշվում են II մասում: Վրացերենի, լեհերենի եւ իդիշի առնչությամբ իշխանությունները պետք է հետազայում պարզաբանումներ ներկայացնեն:

Գլուխ 3. Փորձագետների կոմիտեի գնահատականը Խարտիայի II և III մասերի առնչությամբ

3.1 Գնահատականը Խարտիայի II մասի առնչությամբ

20. Փորձագետների կոմիտեն II մասն ուսումնասիրելիս դիտողություններ չի ներկայացնի այն դրույթների վերաբերյալ, որոնց առնչությամբ լուրջ հարցեր չեն բարձրաձայնվել գնահատման նախորդ զեկույցում, եւ որոնց հետ կապված՝ Փորձագետների կոմիտեն որեւէ նոր տեղեկություն չի ստացել: Այդ դրույթներն են 7(1)(բ), (ե) եւ 7(5) հոդվածները:

21. Ինչ վերաբերում է III մասում նշված լեզուներին, ապա Փորձագետների կոմիտեն հղում է կատարում Խարտիայի III մասի (ստորեւ ներկայացված 3.2 գլխում) առնչությամբ ներկայացված իր գնահատականին:

Հոդված 7. Նպատակներն ու սկզբունքները

Պարբերություն 1

Տարածաշրջանային եւ փոքրամասնությունների լեզուների գործածության փարածքներում՝ այդպիսի լեզուների առնչությամբ եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերն իրենց քաղաքականության, օրենսդրության եւ գործելակերպի համար հիմք են ընդունում հետևյալ նպատակներն ու սկզբունքները.

ա. փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն.

22. Դիտանցման երկրորդ փուլի ընթացքում Հայաստանի իշխանությունները մշակում էին «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծ, ինչը նույնպես կարող էր ամրապնդել փոքրամասնությունների լեզուների իրավական կարգավիճակը: Փորձագետների կոմիտեն դիմել է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք երրորդ պարբերական զեկույցում առավել մանրամասն տեղեկություններ ներկայացնեն այս նախաձեռնության մասին:

23. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ Հայաստանի

իշխանությունները, խորհրդակցելով ազգային փոքրամասնությունների ընկերակցությունների հետ, մշակել են «Ազգային եւ էթնիկ փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծ: Այդ նախագծի շուրջ կազմակերպված հետազա քննարկումների ժամանակ ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ այն կարծիքն էին հայտնում, որ նախագծում արտացոլված չեն իրենց կարիքները: Ներկայումս, օրենքի նախագծի շուրջ իրականացվող աշխատանքները կասեցվել են:

գ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանման նպատակով դրանց գործածությունը խթանելու համար վճռական գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը.

24. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն դիմել է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք երրորդ պարբերական զեկույցում տեղեկություններ ներկայացնեն ազգային փոքրամասնություններին տրամադրվող ֆինանսական աջակցության ծրագիրը վերանայելու վերաբերյալ: Ավելին, Փորձագետների կոմիտեն խնդրել էր պարզաբանում ներկայացնել այն մասին, թե արդյոք ազգային փոքրամասնությունների ընկերակցությունների կրթական եւ մշակութային գործունեության համար տրամադրվող ֆինանսական միջոցներն ավելացվելու են եւ թե որքանով են այդ աջակցությունից շահելու ազգային փոքրամասնությունների լեզուները:

25. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ Հայաստանի իշխանությունները շարունակել են ֆինանսական աջակցություն տրամադրել «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդում» (այսուհետեւ՝ Ազգային փոքրամասնությունների հարցերը համակարգող խորհուրդ) ներկայացված ազգային փոքրամասնությունների ընկերակցությունների կրթական ու մշակութային գործունեության համար: Չնայած ծախսերի ավելացմանը, այդուհանդերձ, ֆինանսական աջակցության ծավալը 2000 թվականից ի վեր չի ավելացել: Տասը միլիոն դրամ կազմող տարեկան ընդհանուր գումարից (մոտավորապես 18 600 եվրո) ինը միլիոն դրամը (մոտավորապես 16 700

եվրո) հավասարաչափ բաշխվում է տասնմեկ ազգային փոքրամասնությունների միջև, իսկ մեկ միլիոն դրամն ուղղվում է ծրագրերի եւ միջոցառումների իրականացմանը: 2012 թվականին իշխանությունները լրացուցիչ տասը միլիոն դրամ են հատկացրել, ի թիվս այլ նպատակների, բոլոր փոքրամասնությունների կրթական ու մշակութային ծրագրերի իրականացման համար: Այնուամենայնիվ, իշխանությունների ներկայացուցիչներն աշխատանքային այցի ընթացքում նշել են, որ այս գումարները միայն որոշ չափով են ուղղվում լեզվի ավելի լայն գործածությունը խթանելուն, դրանք հիմնականում օգտագործվում են տեղեկագրեր հրատարակելու համար: Ավելին, իշխանությունները հայրենիք չունեցող ազգային փոքրամասնություններին տրամադրում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

26. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է նաեւ, որ ընդառաջելով փոքրամասնությունների ընկերակցությունների խնդրանքներին, քննարկման է դրվել ազգային փոքրամասնությունների ֆինանսավորման ծավալներն ընդհանրապես ավելացնելու հարցը: Աշխատանքային այցի ընթացքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խստորեն քննադատել են, որ իշխանությունների տրամադրած ֆինանսական աջակցությունը չափազանց փոքր է, եւ դրանով հնարավոր է ծածկել միայն շենքի վարձակալության եւ մի քանի ու փոքրածավալ ծրագրերի իրականացման հետ կապված ծախսերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, իրականում, այս ծրագրերից միայն մի քանիսն են առնչվում փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանելու հարցին, Փորձագետների կոմիտեն համարում է, որ նշված գումարները, իսկապես, բավարար չեն Խարտիայի գործնական իրականացման հարցում լուրջ ներդրում ունենալու համար: Ուստի, Փորձագետների կոմիտեն ողջունում է ֆինանսավորման ծավալներն ավելացնելու հարցի շուրջ իշխանությունների եւ փոքրամասնությունների ընկերակցությունների միջև ընթացող քննարկումները եւ ակնկալում է, որ ֆինանսավորման ծավալներն այնքան կավելանան, որ իշխանությունները հնարավորություն կունենան, փոքրամասնությունների ընկերակցությունների հետ համագործակցությամբ, վճռական գործողություններ ձեռնարկել փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանելու համար:

Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին փոքրամասնությունների ընկերակցություններին տրամադրել համարժեք ֆինանսավորում, ինչը հնարավորություն կպահանջի փոքրամասնությունների լեզուների գործածությունը՝ խարտիայով սպանձնած իրենց պարտավորություններին համապատասխան:

27. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեի ուշադրությունը գրավել է նաև մարդահամարին վերաբերող հարցը: Մի քանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ցանկություն են հայտնել մարդահամարի հարցաթերթիկում ընդգրկելու լեզվի վերաբերյալ բազմաբնույթ հարցեր՝ հաշվի առնելով այն փաստը, որ ազգային փոքրամասնություններին պատկանող շատ անձինք բավարար մակարդակով չեն տիրապետում իրենց փոքրամասնության լեզվին, սակայն այն սովորելու մեծ ցանկություն ունեն:

դ. բանավոր եւ գրավոր խոսքում, հասարակական եւ անձնական կյանքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության խթանումը եւ (կամ) խրախուսումը.

28. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Հայաստանի իշխանությունները ֆինանսական աջակցություն են տրամադրում փոքրամասնություն կազմող վրացիների, լեհերի եւ ուկրաինացիների ասոցիացիաների վերաբերյալ տեղեկագրերի հրատարակման համար, մասնավորապես, մասամբ վրացերենով հրատարակվող տեղեկագրի, լեհերենով, հայերենով ու ռուսերենով հրատարակվող եռամսյակային պարբերականի եւ ուկրաիներենով ու ռուսերենով հրատարակվող ամենամսյա տեղեկագրի հրատարակման համար: Այդ հրատարակությունները պարունակում են լրատվական նորություններ ազգային փոքրամասնությունների կրթական, հասարակական եւ մշակութային կյանքի վերաբերյալ: Գերմաներենով տեղեկագիր չկա, սակայն Երեւանում գերմանական ընթերցասրահում կարելի է գտնել գերմաներենով թերթեր եւ տեսաձայնային նյութեր:

29. Ազգային փոքրամասնություն կազմող վրացիների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին աշխատանքային այցի ընթացքում տեղեկացրել են, որ

վրացերենով ռադիոծրագիր է հեռարձակվում, այդ թվում՝ լրատվական հաղորդում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վրացերենով այդ ռադիոծրագրի հեռարձակումը դադարեցվել էր դիտանցման նախորդ փուլում, Փորձագետների կոմիտեն ողջունում է դրա վերահեռարձակումը: *Գերմաներենով, լեհերենով եւ ուկրաիներենով* հեռարձակում իրականացնող լրատվամիջոցներ չկան: Այնուամենայնիվ, «Գերմաներենով խոսողների հայկական ասոցիացիան», որը միավորում է գերմաներենով՝ որպես օտար լեզվով խոսող հայերին, պարբերաբար ֆիլմեր է ցուցադրում գերմաներենով:

30. Հայաստանի իշխանությունները ֆինանսապես օժանդակել են վրացերենով մի շարք գրքերի (այդ թվում՝ մանկական գրքերի) հրատարակությանը:

31. Գործում են փոքրամասնությունների երգչախմբեր, որոնք ելույթ են ունենում *վրացերենով, լեհերենով, ուկրաիներենով* ու *եզդիերենով* եւ պարբերաբար մասնակցում են Հայաստանի տարբեր շրջաններում անցկացվող տոնակատարություններին: Երգչախմբերի գործունեության միջոցով փոքրամասնությունների ընկերակցությունները նաեւ հնարավորություն են տալիս երիտասարդ սերնդին փոքրամասնության լեզուն գործնականում կիրառելու համար:

զ. *տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման եւ ուսուցման համար համապատասխան ձեւերի ու միջոցների ապահովումը բոլոր համապատասխան փուլերում.*

32. Ինչ վերաբերում է կրթության պետական ծրագրին, ապա աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հաշվետու ժամանակահատվածում *գերմաներենը* որպես այլընտրանքային առարկա ուսանող աշակերտների թիվն ավելացել է: Գերմաներեն հնարավոր է ուսումնասիրել նաեւ չորս համալսարանում: Հայաստանի եւ Գերմանիայի իշխանությունների աջակցությամբ՝ Գերմանական կրթական եւ մշակութային կենտրոնը կազմակերպում է գերմաներենի ուսուցիչների լրացուցիչ վերապատրաստում, լեզվի դասընթացներ, փոքրամասնություն կազմող գերմանացիներին աջակցող մշակութային իրադարձություններ եւ միջոցառումներ:

33. Հաշվետու ժամանակաշրջանում կրթության պետական ծրագրում *լեհերենի*

եւ ուկրաիներենի դասընթացներ ներդնելու փորձերը ձախողվել էին՝ հետաքրքրված աշակերտների ոչ բավարար թվի պատճառով:

34. Կրթության պետական ծրագրի շրջանակից դուրս՝ ազգային փոքրամասնություններ կազմող վրացիների, գերմանացիների, լեհերի եւ ուկրաինացիների ընկերակցությունները շարունակում են կազմակերպել կիրակնօրյա դպրոցներ՝ երեխաներին եւ չափահասներին դասավանդելով համապատասխան փոքրամասնությունների լեզուները: Աշխատանքային այցի ընթացքում փոքրամասնությունների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են Հայաստանի բոլոր փոքրամասնությունների լեզուների համար համացանցային ուսուցման ծրագիր ստեղծելու մտադրության մասին (հեռավար ուսուցում):

է. պայմանների ապահովումը, ինչը հնարավորություն կընձեռի փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով չխոսող, սակայն տվյալ լեզվի գործածության փարածքում ապրող անձանց, ցանկության դեպքում, սովորել այն.

35. Փոքրամասնությունների լեզուներով չխոսողների համար ասորերեն, վրացերեն, գերմաներեն, հունարեն, քրդերեն, լեհերեն, ռուսերեն, ուկրաիներեն եւ եզդիերեն սովորելու պայմաններ են ստեղծվել:

ը. փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցման եւ գիտական հետազոտությունների խթանումը համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում.

36. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Գիտությունների ազգային ակադեմիայի, գիտահետազոտական ինստիտուտների եւ ուսումնական հաստատությունների գրադարաններում կան *վրացերեն, գերմաներեն, լեհերեն* եւ *ուկրաիներեն* բազմաթիվ գրքեր: Փորձագետների կոմիտեն դիմում է իշխանություններին, որպեսզի նրանք կոնկրետ տեղեկություններ տրամադրեն համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում փոքրամասնությունների լեզուների ուսուցման եւ գիտական հետազոտությունների վերաբերյալ:

թ. սույն հարտիայում ներառված ոլորտներում ազգամիջյան փոխանակումների համապատասխան ձեւերի խթանում՝ երկու կամ ավելի պետություններում նույնական կամ նույնարիպ ձեւով գործածվող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների համար:

37. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ *վրացերեն* խոսողները, ֆինանսական օժանդակություն ստանալով Հայաստանի իշխանություններից, մասնակցել են Վրաստանի հետ փոխանակման ծրագրերին: Բացի դրանից՝ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է Հայաստանում եւ արտերկրում *եզդիերեն* խոսողների միջեւ վերջերս հաստատված կապերի մասին: Կոմիտեն ողջունում է այս առաջընթացը:

38. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն *հունարեն* խոսողների ներկայացուցիչների կողմից տեղեկացվել է, որ նրանք հետաքրքրված են Վրաստանում փոքրամասնություն կազմող հույների հետ ավանդական համագործակցությունը պահպանելու հարցով, սակայն հաճախ հանդիպում են դժվարությունների: Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել միջսահմանային կապերը Հայաստանի հունարեն խոսողների եւ Վրաստանի հունարեն խոսողների միջեւ:

39. Փորձագետների կոմիտեն այլ լեզուների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ չի ստացել եւ դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք այդ տեղեկությունները տրամադրեն հաջորդ պարբերական զեկույցում:

Պարբերություն 2

Կողմերը պարտավորվում են վերացնել, եթե նրանք դեռեւս չեն կատարել դա, տարբերակման, բացառման, սահմանափակման կամ նախապարվության ցանկացած չարդարացված դրսեւորում՝ կապված տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածության հետ եւ ուղղված փվյալ լեզվի պահպանումը կամ զարգացումը խոչընդոտելուն կամ վրանգելուն: Այս լեզուները գործածողների եւ բնակչության մյուս մասի միջեւ իրավահավասարության հաստատմանը նպաստելու նպատակով կամ նրանց հատուկ պայմանները պատշաճ կերպով հաշվի առնող հատուկ միջոցառումների ձեռնարկումը՝ ի նպաստ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների, չի համարվում

խտրականության դրսևորում ավելի լայն տարածում ունեցող լեզուները գործածողների նկատմամբ:

40. Հայաստանի քրեական օրենսգրքի (2003) 143-րդ հոդվածով արգելվում է խտրականությունը լեզվի հիմքով: Դիտանցման երրորդ փուլում Փորձագետների կոմիտեն որեւէ բողոք չի ստացել փոքրամասնությունների լեզուների գործածության հետ կապված խտրականության առնչությամբ:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներով նպաստել երկրի բոլոր լեզվական խմբերի միջև փոխըմբռնում հաստատելուն եւ, մասնավորապես, իրենց երկրներում կազմակերպվող կրթության եւ վերապատրաստման նպատակներից համարել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ հարգանքի, ըմբռնման եւ հանդուրժողականության սերմանումը, ինչպես նաեւ կոչ անել զանգվածային լրատվամիջոցներին հետապնդել նույն նպատակը:

41. Ինչպես Փորձագետների կոմիտեն նկատել է դիտանցման նախորդ փուլերի ընթացքում, Հայաստանում փոքրամասնությունների լեզուների նկատմամբ հիմնականում տիրում է հանդուրժողականության մթնոլորտ, եւ այդ լեզուներով խոսողները չեն հանդիպում թշնամական կամ մերժողական վերաբերմունքի բնակչության մեծամասնության կողմից:

42. Երրորդ պարբերական զեկույցին համապատասխան՝ հանրակրթական ծրագրերում ներառված են ազգային փոքրամասնությունների պատմությանն ու մշակույթին առնչվող թեմաներ: Մասնավորապես, «Հասարակագիտություն» առարկայի ուսումնական ծրագրում ներառված են «Ազգային փոքրամասնությունների իրավունքները» թեմաները: Դասագրքերում հաշվի են առնվում այս թեմաները:

43. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 28-րդ հոդվածի՝ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է մատուցել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումներ: Այդ հաղորդումներում ներկայացվում են նաեւ փոքրամասնությունների

պատմությունը, կրթություն, մշակույթը, լեզուն եւ իրավունքները: Փոքրամասնությունների կողմից կազմակերպված միջոցառումների մասին տեղեկատվությունը նպաստում է երկրի բոլոր լեզվական խմբերի միջեւ հարգանքի եւ փոխըմբռնման մթնոլորտի ձեւավորմանը: Այնուամենայնիվ, տեղեկատվություն չկա այն մասին, թե արդյոք այդ ծրագրերն իրականում գոյություն ունեն, թե ոչ: Փորձագետների կոմիտեն դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք կոնկրետ տեղեկություններ տրամադրեն հաջորդ պարբերական զեկույցում:

Պարբերություն 4

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ իրենց քաղաքականությունը որոշելիս կողմերը պետք է հաշվի առնեն այդ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները: Նրանց կոչ է արվում, անհրաժեշտության դեպքում, ստեղծել մարմիններ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին առնչվող բոլոր հարցերի շուրջ իշխանություններին խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

44. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, փոքրամասնությունների լեզուներին առնչվող խնդիրների շուրջ Հայաստանի իշխանություններին խորհրդատվություն է տրամադրում երկու մարմին՝ Ազգային փոքրամասնությունների հարցերը համակարգող խորհուրդը, որը ինստիտուցիոնալ առումով կցված է Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդականին, եւ Հանրային խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողովը (Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից՝ ընկերակցությունների ներկայացուցիչներից ստեղծված խորհրդատվական մարմին, որի նպատակը քաղաքացիական հասարակության ձեւավորմանն օժանդակելն է եւ բնակչության տարբեր շերտերի կարիքները հաշվի առնելը): Հանրային խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողովն ունի կրթության, մշակույթի եւ լեզվական հարցերով ենթահանձնաժողով, որը նույնպես զբաղվում է Խարտիայի իրականացման հետ կապված հարցերով:

45. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Հայաստանի իշխանություններն այդ զեկույցի մշակման ընթացքում խորհրդակցել են Հանրային

խորհրդի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ փոքրամասնությունների ուսումնական հաստատությունների հետ: Այնուամենայնիվ, աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների խորհուրդը տեղեկացվել է, որ որեւէ խորհրդակցություն տեղի չի ունեցել, եւ Հանրային խորհուրդը չի ստացել որեւէ ծանուցում զեկույցի մշակման վերաբերյալ:

3.2 Գնահատականը Խարտիայի III մասի առնչությամբ

3.2.1 Ասորերենը

46. Փորձագետների կոմիտեն մեկնաբանություններ չի ներկայացնի այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք գնահատման նախորդ զեկույցում համարվել են կատարված, եւ որոնց վերաբերյալ Փորձագետների կոմիտեն՝ դրանք կատարելու մասին արված իր եզրակացությունը վերանայելու համար հիմք հանդիսացող որեւէ նոր տեղեկություն չի ստացել: Այդ պարտավորությունները սահմանված են ստորեւ ներկայացված տեղեկություններում:

Հոդված 8. Կրթությունը

Ուսուցիչների վերապատրաստումը եւ ուսումնական նյութերը

47. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն նշել է, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցում հիմնական խոչընդոտը դեռեւս կրթական բոլոր մակարդակներում վերապատրաստված ուսուցիչների, ինչպես նաեւ համապատասխան ուսումնական նյութերի պակասն է: Բացի դրանից, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ բոլոր մակարդակներում ուսուցիչների բավարար թվով վերապատրաստման դասընթացներ եւ ասորերենով թարմացված ուսումնական նյութերի հասանելիություն ապահովելու համար:

48. Փորձագետների կոմիտեն ասորերենի ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չի ստացել եւ, հետեւաբար, դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք այդ տեղեկությունները տրամադրեն հաջորդ պարբերական զեկույցում: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն տեղեկացվել էր, որ ուսուցիչների պակասի պատճառներից մեկը զբաղվածության եւ վճարման առկա համակարգն է, որտեղ հաշվի չեն առնվում փոքրամասնությունների լեզուների ուսուցման

առանձնահատկությունները (փոքր խմբեր, դասաժամերի անբավարար քանակ եւ երբեմն էլ կամընտրական դասընթացներ):

49. Երրորդ պարբերական զեկույցին համապատասխան՝ Հայաստանի իշխանությունները 2009 թվականին ֆինանսավորել են «Խոսի՛ր ասորերեն» (առաջին դասարան) եւ «Գրի՛ր ու կարդա՛ ասորերեն» (երկրորդ դասարան) դասագրքերի հրատարակումը: Միջնակարգ կրթության դասագրքի կազմման աշխատանքները շարունակվում են: Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հրատարակել վերոնշյալ դասագիրքը եւ ապահովել, որ համապատասխան ուսումնական նյութերը հասանելի լինեն վավերացմամբ նախատեսված բոլոր դասարանների համար:

50. Ավելին, երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ 2009 թվականին 1-12-րդ դասարանների համար ասորերենի կրթական չափանիշ եւ ծրագիր է ներկայացվել:

51. Փորձագետների կոմիտեն նշում է, որ 2009 թվականից ի վեր որեւէ առաջընթաց չի գրանցվել:

52. Փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ միջնակարգ կրթության ոլորտի բարեփոխումը շարունակվում է: Միջնակարգ կրթությունը տարանջատվել է կրտսեր եւ ավագ միջնակարգ կրթության. ընդ որում, վերջինս գործում է միայն առանձին դպրոցներում: Փորձագետների կոմիտեն դիմում է իշխանություններին, որպեսզի նրանք տեղեկություններ տրամադրեն այն մասին, թե ինչպես է այս փաստն ազդում ասորերենի ուսուցման վրա ավագ միջնակարգ դպրոցում:

Պարբերություն 1

Այդպիսի լեզուների գործածության փարածքներում, յուրաքանչյուր լեզվի հրավիճակին համապատասխան եւ չհակասելով պետության պաշտոնական լեզվի (լեզուների) ուսուցման պահանջին, կրթության առնչությամբ կողմերը պարտավորվում են.

Նախադպրոցական կրթությունը

- ա. i. մափչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ**
- ii. մափչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ**
- iii. կիրառել վերոհիշյալ i եւ ii կետերով նախատեսված միջոցառումներից որեւէ մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար, կամ**
- iv. եթե պետական մարմինները նախադպրոցական կրթության ոլորտում չունեն անմիջական իրավասություն, աջակցել եւ (կամ) նպաստել վերոնշյալ i-iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը.**

53. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ փոքրամասնությունների լեզուներով համապատասխան նախադպրոցական կրթության համակարգի ստեղծմանն աջակցելու եւ (կամ) նպաստելու համար:

54. Համաձայն Հայաստանի իշխանությունների եւ ասորերենով խոսողների ներկայացուցիչների՝ ասորերենը դեռեւս չի գործածվում նախադպրոցական կրթության մեջ, քանի որ ծնողների կողմից դիմումներ կարծես թե չեն ներկայացվել: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ պահանջարկի բացակայությունը հաճախ փոքրամասնությունների լեզվի ուսուցման առավելությունների մասին ծնողների եւ տեղական իշխանությունների շրջանում տեղեկացվածության ու իրազեկվածության պակասի արդյունքն է: Աշխատանքային այցի ընթացքում ասորերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են իրենց հետաքրքրվածությունը մանկապարտեզներում ասորերենի գործածության հարցում: Հետեւաբար,

Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է, փոքրամասնություն կազմող ասորիների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, խթանեն ասորերենի դասավանդման հնարավորությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում այդ լեզվով խոսողների շրջանում: Այդ համատեքստում այն նշում է, որ համաձայն պարբերական զեկույցի, արդեն կարող են ստեղծվել ութից տասը երեխաներից բաղկացած նախադպրոցական խմբեր, որոնք ավելի փոքր են սովորաբար նվազագույնը 25-30 երեխայից կազմվող խմբերից: Այնուամենայնիվ, փոքրամասնությունների լեզվով մանկապարտեզների համար կարծես թե կա լրացուցիչ ֆինանսավորման կարիք, ինչը հնարավորություն կընձեռի փոքր քաղաքների քաղաքապետարաններին մատչելի դարձնել նախադպրոցական կրթությունն ասորերենով:

55. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին խրախուսել ասորերենի գործածությունը նախադպրոցական կրթության ոլորտում:

Տարրական կրթությունը

- բ. i. մադչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մադչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. տարրական կրթության շրջանակներում նախապեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ*
- iv. կիրառել վերը նշված i եւ iii կետերով նախապեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար:*

56. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

57. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերեն է դասավանդվում ընդհանուր թվով 228 աշակերտի՝ Վերին Դվին, Դիմիտրով, Արզնի եւ Նոր Արտագերս գյուղերում, ինչպես նաեւ Երեւանում: Որոշ դասարաններ էլ բացվել են նույնիսկ երկու աշակերտի համար: Համաձայն ասորերենով խոսողների ներկայացուցիչների՝ ասորերենը դասավանդվում է շաբաթը երկու ժամ՝ առաջինից երրորդ դասարաններում: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն համարում է, որ ներկայիս առաջարկը բավարար չէ աշակերտների համար ասորերեն լեզվի վարժ տիրապետման եւ գրագիտության այնպիսի մակարդակ ապահովելու համար, ինչն իրագործելի կդարձներ լեզվի ակտիվ գործածությունը հանրային կյանքում:⁷

58. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, ասորերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ընդլայնել ասորերենի դասավանդման առաջարկի շրջանակը:

Միջնակարգ կրթությունը

- գ. i. մադչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- ii. մադչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- iii. միջնակարգ կրթության շրջանակներում նախապեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ***
- iv. կիրառել վերոնշյալ i-iii կետերով նախապեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության***

⁷ Տե՛ս Փորձագետների կոմիտեի՝ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ զեկույցի 274-րդ պարբերությունը

դեպքում, որոնց ընդանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար

59. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

60. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենը դասավանդվում է 318 աշակերտի՝ Արարատ, Կենտրոն, Կոտայք եւ Արմավիր մարզերի միջնակարգ դպրոցներում: Ասորերենով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին հայտնել են, որ ասորերենը դասավանդվում է շաբաթական երեք ժամ՝ չորսից տասներկուերորդ դասարաններում:

61. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին, ասորերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ընդլայնել ասորերենի դասավանդման առաջարկի շրջանակները:

Տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը

- դ. i. մադչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մադչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. տեխնիկական եւ մասնագիտական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ*
- iv. կիրառել վերոնշյալ i-iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընդանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար*

62. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս

պարտավորությունը համարել է չկատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին շարունակել իրենց ջանքերը փոքրամասնությունների լեզուներով կամ այդ լեզուների դասավանդման առաջարկը տեխնիկական եւ մասնագիտական կրթության ծրագրում ապահովելու ուղղությամբ:

63. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենով կրթության համար դիմումներ չեն ներկայացվել տեխնիկական եւ մասնագիտական կրթության ոլորտներում: 8(1)(ա)(iii) հոդվածի հիման վրա կատարված դիտարկումների համաձայն եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը վավերացրել է այս պարտավորությունը՝ Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է, ասորերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ասորերենով խոսողների շրջանում խթանեն տեխնիկական եւ մասնագիտական դպրոցներում ասորերենով կրթության հնարավորությունը:

64. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն խստորեն հորդորում է Հայաստանի իշխանություններին, ասորերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, մատչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթությունն ասորերենով կամ նախատեսել այդ լեզվի դասավանդումը որպես առարկա:

Համալսարանական եւ բարձրագույն կրթությունը

- ե. i. մատչելի դարձնել համալսարանական եւ բարձրագույն կրթության այլ տեսակներ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- ii. հարմարություններ ապահովել այդ լեզուների՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկայի ուսուցման համար***
- iii. եթե բարձրագույն ուսումնական հաստատությունների ոլորտում պետության ունեցած դերակատարման հետեւանքով հնարավոր չէ կիրառել i եւ ii ենթապարբերությունները, ապա խրախուսել եւ (կամ) թույլատրել համալսարանական կամ բարձրագույն կրթության այլ ձեւերի ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ հարմարությունների ապահովումը՝ որպես***

համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկա այդ լեզուներն ուսուցանելու համար,

65. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին առավել մեծ ջանքեր գործադրել համալսարանական եւ բարձրագույն կրթությունը փոքրամասնությունների լեզուներով մատչելի դարձնելու համար, մասնավորապես՝ ուսուցիչների վերապատրաստման ոլորտում:

66. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ դասական ասորերենը դասավանդվում է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում՝ առաջին ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում եւ մագիստրատուրայի երկրորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակում: Համալսարանը նախատեսում է ժամանակակից ասորերենի դասավանդման առաջարկ ներկայացնել: Ավելին, երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (Մանկավարժություն եւ մեթոդիկա) ասորերեն խոսող ուսանողին անվճար տեղ է հատկացվել: Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը, ապա Փորձագետների կոմիտեն նշում է, որ ներկայումս չկան ուսուցիչներ, որոնք կարող են գործածել ասորերենը նախադպրոցական եւ տեխնիկական ու մասնագիտական կրթության ոլորտներում:

67. Ասորերենի ուսուցման առումով՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն, այնուամենայնիվ, կոչ է անում Հայաստանի իշխանություններին զարգացնել ժամանակակից ասորերենի ուսուցումն ու դասավանդումը:

Չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթությունը

զ. iii. Եթե պեղական մարմիններն անմիջական իրավասություն չունեն չափահասների կրթության ոլորտում աջակցելու եւ (կամ) նպաստելու այդ լեզուների մարուցմանը՝ որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկաներ

68. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս

պարտավորությունը համարել է չկատարված:

69. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենով չափահասների կամ շարունակական կրթության պահանջարկ չի ներկայացվել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը վավերացրել է այս պարտավորությունը, Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է, փոքրամասնություն կազմող ասորիների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, նպաստեն ասորերենով խոսողների շրջանում չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության մեջ ասորերենի առաջարկի տարածմանը:

70. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին աջակցել եւ (կամ) նպաստել չափահասների եւ շարունակական կրթության մեջ ասորերենը որպես առարկա ներառելու առաջարկին:

Հոդված 9. Դատական մարմինները

Պարբերություն 1

Կողմերը պարտավորվում են՝ այն դատական փորձքներում, որտեղ սփորել նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է փորձաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, այդ լեզուներից յուրաքանչյուրի հետ կապված իրավիճակին համապատասխան եւ պայմանով, որ սույն պարբերությամբ նշված հարմարությունների կիրառությունը չհամարվի դատավորի կողմից որպես արդարադատության պարզաճ իրականացումը խոչընդոտող հանգամանք՝

Քրեական վարույթը

ա. ii. երաշխավորել մեղադրյալի՝ իր փորձաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը

71. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել

Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ 9(1)(ա)(ii) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով հանրությանը եւ դատարաններին փոքրամասնությունների լեզուները դատարաններում գործածելու իրավունքի մասին: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «ապահովել դատարաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:

72. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ չեն եղել դեպքեր, երբ դատական վարույթին մասնակցող՝ ազգային փոքրամասնությունների լեզվով խոսող որեւէ անձ զրկվի համապատասխան փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքից՝ նույնիսկ եթե այդ անձը տիրապետել է հայերենին: Ավելին, զեկույցում նշվում է, որ նաեւ հայերենին տիրապետող եւ փոքրամասնությունների լեզուներով խոսողները պահանջել են բանավոր թարգմանիչ, ինչն ապահովվել է պետության հաշվին (16 դեպք): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե նշված գործերի շրջանակներում փոքրամասնությունների որ լեզուներն են շոշափվել:

73. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ երկու դեպքերում ապահովվել է թարգմանություն ասորերենից:

74. Չկան կոնկրետ տեղեկություններ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն հաստատում է իր այն տեսակետը, որ Հայաստանի իշխանությունները պետք է նախաձեռնողական բնույթի միջոցներ ձեռնարկեն՝ 9(1)(ա)(ii) հոդվածի գործնական կիրառությունն ապահովելու համար: Օրինակ՝ դատական համակարգի աշխատողները կարող են խրախուսել փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարանների շենքերում (շենքերի վրա)՝ երկլեզու կամ բազմալեզու գրություններ եւ (կամ) նշաններ տեղադրելով եւ հանրային հայտարարություններում կամ դատական ձեւաթղթերում նշված տեղեկատվության միջոցով:⁸

⁸ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Հունգարիայի վերաբերյալ չորրորդ զեկույցի (ECRML(2009)13) 112-րդ պարբերությունը

75. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին տեղեկացնել ասորերենով խոսողներին եւ դատարաններին դատական վարույթներում ասորերենի գործածության իրավունքի մասին:

iii. ապահովել, որ հարցումները եւ ապացույցները (գրավոր թե բանավոր) անընդունելի չհամարվեն զուրպ այն պատճառով, որ դրանք ձեւակերպված են տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով

76. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

iv. պահանջի դեպքում՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով կազմել դատական վարույթներին առնչվող փաստաթղթեր:

77. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(iv) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով դատարաններին վարույթների ընթացքում փոքրամասնությունների լեզուներով փաստաթղթեր կազմելու պարտականության մասին:

78. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ փոքրամասնությունների լեզուներով խոսողները պահանջել են եւ նրանց, պետության հաշվին, տրամադրվել են թարգմանված փաստաթղթեր (14 դեպք): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե նշված գործերի շրջանակներում փոքրամասնությունների որ լեզուներն են շոշափվել:

79. Իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ չկան կոնկրետ տեղեկություններ: Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 74-րդ պարբերության (9(1)(ա)(ii) հոդված) մեջ նշված իր հանձնարարականներին, որոնք համապատասխանաբար կիրառվում են:

80. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, պահանջի դեպքում, դատարաններին տեղեկացնել ասորերենով քրեական վարույթների հետ կապված փաստաթղթեր կազմելու իրենց պարտականության մասին:

Քաղաքացիական վարույթները

բ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջև կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու:

81. Գնահատման երկրորդ զեկույցում, անդրադառնալով 9(1)(ա)(ii) հոդվածում նշված իր դիտարկումներին, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հանրությանը եւ դատարաններին՝ դատարաններում քաղաքացիական վարույթներում փոքրամասնությունների լեզուները գործածելու իրավունքի մասին եւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ նաեւ ազգային օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին **«ապահովել դատարաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:**

82. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ փոքրամասնությունների լեզուները կարող են գործածվել քաղաքացիական վարույթներում, եթե անգամ դատավարության կողմերից որեւէ մեկը խոսում է հայերեն: Ավելին, զեկույցում նշվում է, որ փոքրամասնությունների լեզուներով խոսողները, որոնք նաեւ տիրապետում են հայերենին, պահանջել են, եւ նրանց տրամադրվել է բանավոր թարգմանիչ (ութ դեպք) եւ փաստաթղթերի թարգմանություն (վեց դեպք): Այնուամենայնիվ, Հայաստանի իշխանությունները կոնկրետ տեղեկություններ չեն տրամադրել դատարաններում ասորերենը գործածելու իրավունքի կամ վերը նշված

դեպքերում շոշափված փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ:

83. Իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների առնչությամբ՝ երրորդ պարբերական զեկույցում պարզապես նշվում է, որ ազգային փոքրամասնությունները կանոնավոր կերպով տեղեկացվում են ազգային օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով սահմանված իրենց իրավունքների մասին:

84. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ազգային օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար եւ տեղեկացնել ասորերենով խոսողներին քաղաքացիական վարույթներում ասորերենը գործածելու իրենց իրավունքի մասին:

Վարչական վարույթները

Գ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, եւ (կամ)

iii. թույլատրել, որ փաստաթղթերը եւ վկայությունները ներկայացվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, անհրաժեշտության դեպքում՝ կատարելով բանավոր եւ գրավոր թարգմանություններ:

85. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն սույն պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

86. Համաձայն երրորդ պարբերական զեկույցի՝ վարչական վարույթներն իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 9(1)(բ)(ii) հոդվածի առնչությամբ կատարված իր դիտարկումներին եւ հանձնարարականներին, որոնք համապատասխանաբար կիրառվում են:

87. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ազգային օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար եւ տեղեկացնել ասորերենով խոսողներին վարչական վարույթներում ասորերենը գործածելու իրենց իրավունքի մասին:

դ. քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ վերոհիշյալ (բ) եւ (գ) պարբերությունների (i) եւ (iii) ենթապարբերությունների կիրառությունը եւ, ցանկացած դեպքում, բանավոր թարգմանիչների ծառայություններից եւ գրավոր թարգմանություններից օգտվելու անհրաժեշտությունը համապատասխան անձանց համար չառաջացնեն լրացուցիչ ծախսեր:

88. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

89. Քանի որ Փորձագետների կոմիտեն բազմիցս եւ ապարդյուն խնդրել է իրեն տրամադրել տեղեկատվություն, այն ստիպված է եզրակացնել, որ պարտավորությունը չի կատարվել:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հասանելի դարձնել ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը, ինչպես նաեւ այն ակտերի, որոնք վերաբերում են մասնավորապես այդ լեզուներով խոսողներին, եթե դրանք այլ կերպ չեն տրամադրվում:

90. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակն է ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը հասանելի դարձնել ասորերենով:

91. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ ազգային օրենսդրական ակտերի տեքստերը չեն թարգմանվել ասորերեն՝ ֆինանսական միջոցների եւ ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների կողմից նման

պահանջարկի բացակայության պատճառով:

92. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակը ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը ասորերենով հասանելի դարձնելն է :

Հոդված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Խրախուսման միջոցները

93. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացել է ազգային փոքրամասնություն կազմող ասորիների ներկայացուցիչներից, որ իրենց լեզուն հազվադեպ է գործածվում վարչական մարմինների կողմից կամ նրանց հետ հաղորդակցվելիս: Փորձագետների կոմիտեն նշում է, որ վարչական մարմինների կողմից փոքրամասնության լեզվի գործածության համար անհրաժեշտ են ինչպես կազմակերպական միջոցառումներ, օրինակ՝ հանրային ծառայությունների աշխատակիցների կողմից տվյալ լեզվի իմացության բավարար մակարդակի ապահովում (ինչպես նախատեսված է 10(4)(գ) հոդվածով), այնպես էլ խրախուսական միջոցներ, որպեսզի իշխանությունների հետ հաղորդակցվելիս՝ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կարողանան օգտվել իրենց լեզուն գործածելու հնարավորությունից: Խրախուսական միջոցներն անհրաժեշտ են հատկապես այն դեպքում, երբ փոքրամասնությունների լեզուներով խոսողները իշխանությունների հետ հաղորդակցվելիս իրենց լեզուն գործածելու սովորություն չունեն:

94. Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել կոնկրետ միջոցներ՝ տեղական եւ տարածքային մարմինների կողմից ասորերենի գործածությունը խթանելու համար, ինչպես նաեւ ասորերենով խոսողներին՝ այդ մարմինների հետ հաղորդակցվելիս իրենց լեզվի գործածումը խթանելու համար: Նման միջոցները կարող են ներառել աշխատակազմի անդամների շրջանում փոքրամասնության լեզվի իմացության մակարդակի

բարձրացումն աշխատանքի ընդունման եւ վերապատրաստման միջոցով, ասորերենով կազմված փաստաթղթերի ավելի լայն կերպով ավտոմատ հասանելիության ապահովումը (այդ թվում՝ կայքէջերում), Խարտիայից բխող պարտավորությունների մասին տեղեկությունների տրամադրումն ասորերենով, ինչպես նաեւ ասորերենի գործածության ապահովումը վարչական նշանակության ցուցանակներում:

Պետական մարմինները

Պարբերություն 1

Պետության այն վարչական շրջաններում, որտեղ սպորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

ա. ...

iv. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողները կարողանան սահմանված կարգով փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով,

95. (ա)(iv) եւ (ա)(v) պարտավորություններն այլընտրանքային տարբերակներ են: Քանի որ Հայաստանն ընտրել է (ա)(iv) տարբերակը, ա.v տարբերակն ավելորդ է դառնում: Հավատարիմ մնալով իր գործելակերպին՝ Փորձագետների կոմիտեն կուսումնասիրի միայն (ա)(iv) տարբերակը:

96. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ 10-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների գործնական կատարումը խթանելու

համար:

97. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենը հազվադեպ է գործածվում վարչական մարմինների հետ բանավոր կամ գրավոր հաղորդակցության մեջ: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ ստանձնելով այս պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները հանձն են առել իրականացնելու նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ պետական մարմիններ ներկայացվող բանավոր կամ գրավոր դիմումներում փոքրամասնությունների լեզուների արդյունավետ գործածությունն ապահովելու համար:

98. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել գործնական միջոցներ, որպեսզի ասորերենը գործածողները կարողանան այդ լեզվով գրավոր եւ բանավոր դիմումներ ներկայացնել պետական մարմինների տեղական կառույցներ:

բ. բնակչության համար հասանելի դարձնել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ երկլեզու տարբերակներով,

99. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

100. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ բնակչությանը հասանելի չէ լայնորեն կիրառվող որեւէ վարչական բնույթի տեքստ կամ ձեւաթուղթ ասորերենով կամ երկլեզու տարբերակներով:

101. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին՝ բնակչության համար ապահովել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերի եւ ձեւաթղթերի հասանելիությունը ասորերենով կամ երկլեզու տարբերակներով:

Տեղական եւ տարածքային մարմիններ

Պարբերություն 2

Այն տեղական եւ տարածքային մարմինների առումով, որոնց տարածքում ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել.

բ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների՝ այդ լեզուներով բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնելու հնարավորությունը,

102. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակելու կառուցվածքային քաղաքականություն՝ տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցության ընթացքում փոքրամասնությունների լեզուների բանավոր եւ գրավոր գործածությունն ապահովելու համար:

103. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ իրավիճակը չի փոխվել: Տեղական եւ տարածքային մարմիններ հազվադեպ են ներկայացվում բանավոր կամ գրավոր դիմումներ ասորերենով: Աշխատանքային այցի ընթացքում ասորերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են, որ կարողանում են գործածել իրենց լեզուն տեղական մարմինների՝ ազգությամբ ասորի պաշտոնյաների հետ հաղորդակցվելիս: Այնուամենայնիվ, որոշ տեղական մարմինների կողմից ասորերենով խոսողներին աշխատանքի ընդունելու փաստը պայմանավորված չէ այս լեզվով խոսողներին աշխատանքի ընդունելուն ուղղված քաղաքականությամբ եւ, հետեւաբար, չի կարող երաշխավորվել ապագայում:

104. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցության ընթացքում ասորերենի բանավոր եւ գրավոր գործածությունն ապահովելու համար:

գ. տեղական մարմինների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունն իրենց ժողովների

ընթացքում կազմակերպվող բանավեճերում՝ չբացառելով, այնուամենայնիվ, պետության պաշտոնական լեզվի (լեզուների) գործածությունը,»

105. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

է. տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերի գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնական լեզվում (լեզուներում) առկա անվանումների հետ համապեղ:

106. Փորձագետների կոմիտեն դիտանցման նախորդ փուլերում այս պարտավորությունը համարել է կատարված:

107. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն ասորերենով խոսողներից տեղեկացավ, որ ասորական տեղանունները պաշտոնապես գործածվում են որոշ համայնքներում: Այնուամենայնիվ, տեղական մարմինները չեն ապահովում այդ տեղանունների ասորատառ գրությունը: Ավելին, չկան նշումներ այն մասին, որ ասորական տեղագրական անվանումները, բացառությամբ գյուղերի անվանումների, ունեն պաշտոնական գործածություն:

108. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է միայն մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին գործածել կամ ընդունել տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերն ասորերենով եւ տեղեկացնել ձեռնարկված միջոցների մասին հաջորդ պարբերական զեկույցում:

Պարբերություն 3

Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց կողմից մատուցված հանրային ծառայությունների առնչությամբ, այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ կողմերը, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են.

գ. թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողներին հայտ ներկայացնել այդ լեզուներով:

109. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 4

Իրենց կողմից ընդունված՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների դրույթները գործողության մեջ դնելու նպատակով՝ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

...

գ. հնարավորության սահմաններում բավարարել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ:

110. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ համապատասխան փոքրամասնության լեզվին տիրապետող հանրային ծառայողների շարժունությունը խթանելու համար:

111. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Քաղաքացիական ծառայության խորհուրդն առաջարկ է ներկայացրել թափուր աշխատատեղերի համար կազմակերպվող մրցույթներում նախապատվությունը տալ, մասնավորապես, ասորերենին տիրապետող թեկնածուներին:

112. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հնարավորության սահմաններում բավարարել ասորերենին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ, եւ հաջորդ պարբերական զեկույցում նշել, թե գործնականում ինչ միջոցներ են կիրառվել:

Պարբերություն 5

Կողմերը պարտավորվում են շահագրգիռ փոքրամասնությունների պահանջով

թույլատրել ազգանունների գործածումը կամ ընդունումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը:

113. Փորձագետների կոմիտեն դիտանցման նախորդ փուլերում այս պարտավորությունը համարել է կատարված:

114. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն ասորերենով խոսողներից տեղեկացավ, որ ծննդյան վկայականներում եւ այլ համանման փաստաթղթերում իշխանությունները չեն ապահովում ասորական ազգանունների ասորատառ գրությունը:

115. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին թույլատրել ազգանունների գործածությունը կամ ընդունումն ասորերենով եւ ապահովել համապատասխան վարչական մարմինների կողմից այդպիսի անունների գործածությունը ասորերեն տարբերակով:

Հոդված 11. Լրատվամիջոցներ

Պարբերություն 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության տարածքներում, հաշվի առնելով այդ լեզուներով խոսողների շահերը, ցանկացած լեզվի իրավիճակ, ինչպես նաեւ պեղական մարմինների՝ այս ոլորտում ունեցած ուղղակի կամ անուղղակի իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում եւ պահպանելով լրատվամիջոցների անկախության ու ինքնավարության սկզբունքը՝ Կողմերը պարտավորվում են՝

ա. ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից հանրային ծառայությունների մատուցման գործառույթի շրջանակներում՝

...

iii. ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հեռարձակող կազմակերպությունները հաղորդումներ հեռարձակեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

116. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին մշակել համակարգեր, որոնք կխթանեն հեռուստահաղորդումների հեռարձակումն ասորերենով: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին **միջոցներ ձեռնարկել՝ ռադիոյով եւ հեռուստատեսությամբ ասորերենի գործածությունը բարելավելու համար**:

117. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (28-րդ հոդված), այնուամենայնիվ, նախատեսվում է սահմանափակում՝ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումների եթերային ժամանակի առումով, ըստ որի հաղորդումների ընդհանուր ժամաքանակը յուրաքանչյուր լեզվի համար չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչեւ երկու ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչեւ մեկ ժամը: Այդուհանդերձ, Փորձագետների կոմիտեն նշում է, որ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումների եթերային ժամանակի նման սահմանափակումները կարող են խոչընդոտել «համապատասխան դրույթների սահմանումը»՝ այս պարտավորությանը համապատասխան: Այս պարտավորությունը կատարելու համար կարելի է ապահովել բավարար եթերաժամ, ինչպես նաեւ հաճախակի հեռարձակում: Բացի այդ, Փորձագետների կոմիտեն ընդգծում է փոքրամասնությունների լեզուներով՝ երեխաների համար նախատեսված հաղորդումներ հեռարձակելու կարելիությունը լեզվի պահպանմանը նպաստելու հարցում:

118. Գործնականում իրականացման առումով՝ Հայաստանի հանրային ռադիոն հեռարձակում է օրական 15 րոպե տեւողությամբ ծրագրեր ասորերենով: Հանրային հեռուստատեսությամբ հաղորդումներ չեն հեռարձակվում ասորերենով: Աշխատանքային այցի ընթացքում ասորերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են իրենց լեզվով հեռուստահաղորդումներ ունենալու ցանկությունը

119. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված հանրային ռադիոյի առնչությամբ եւ չկատարված՝ հանրային հեռուստատեսության առնչությամբ:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հանրային հեռարձակողները հեռուստատեսային, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված ծրագրեր առաջարկեն ասորերենով:

բ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումների կանոնավոր հեռարձակումը,

120. Մասնավոր ռադիոընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում ասորերենով:

121. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր ռադիոընկերությունների կողմից հաղորդումների հեռարձակումը ասորերենով:

գ. ...

iii. խրախուսել եւ (կամ) խթանել հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

122. Մասնավոր հեռուստաընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում ասորերենով:

123. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր հեռուստաընկերությունների կողմից հաղորդումների կանոնավոր հեռարձակումը ասորերենով:

ե. i. խրախուսել եւ (կամ) խթանել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով առնվազն մեկ թերթի լույս ընծայումը եւ (կամ) դրա հեփազա գործունեությունը, կամ

124. Փորձագետների կոմիտեն ընդգծում է այն հանգամանքը, որ «թերթ»-ը, ըստ դրա ընդհանրական մեկնաբանության, այս պարտավորության

շրջանակներում պետք է հրատարակվի առնվազն շաբաթական պարբերականությամբ:⁹

125. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

126. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենով հրատարակվող թերթեր դեռևս չկան: Աշխատանքային այցի ընթացքում ասորերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են իրենց լեզվով հրատարակվող թերթ ունենալու ցանկությունը:

127. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խորհրդակցել ասորերենով խոսողների ներկայացուցիչների հետ այն մասին, թե ինչպես պետք է այս պարտավորությունն իրականացնել գործնականում:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել ասորերենով հրատարակվող առնվազն մեկ թերթի լույս ընծայումը:

Պարբերություն 2

Կողմերը պարտավորվում են երաշխավորել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների անարգել եւ ուղիղ հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ դրան համարժեք լեզվով, ինչպես նաեւ չխոչընդոտել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների՝ այդպիսի լեզվով վերահեռարձակումը: Նրանք պարտավորվում են նաեւ բացառել որեւէ սահմանափակման կիրառումը տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ նույնատիպ լեզվով հրատարակվող տպագիր մամուլում խոսքի ազատության ու տեղեկությունների ազատ շրջանառության նկատմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ազատությունների ապահովումը սերտորեն կապված է որոշակի պարտականությունների եւ պարասխանավորության հետ, այն կարող է ենթակա լինել

⁹ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Ռումինիայի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML(2012)3) 174-րդ պարբերությունը

այնպիսի վարչարարության, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարքերի պահպանման, այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի ստացված տեղեկության արտահոսքի կանխման կամ դատական իշխանության հեղինակության ու անկողմնակալության պահպանման համար:

128. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացվեն կամ հաշվի առնվեն լրատվամիջոցների ազատության ու բազմակարծության երաշխավորման համար պատասխանատու այնպիսի մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծվել օրենքին համապատասխան:

129. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

130. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը երաշխավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկված չեն, եւ այն հատուկ ուշադրություն չի դարձնում փոքրամասնությունների շահերին:

131. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն եզրփերենը գործածողների շահերը:

Հոդված 12. Մշակութային գործունեություն եւ մշակութային կառույցներ

Պարբերություն 1

Մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների, հատկապես՝ գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների եւ կինոթատրոնների, ինչպես նաեւ գրական ստեղծագործությունների ու ֆիլմերի արտադրության, ժողովրդական արտահայտչաձեւերի, փառատոնների եւ մշակութային արդյունաբերության՝ ներառյալ, մասնավորապես, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, այդ լեզուների գործածության տարածքում Կողմերը, պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում՝ պարտավորվում են՝

ա. խրախուսել այնպիսի արտահայտչաձեւերի ու նախաձեռնությունների կիրառությունը, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաեւ ապահովել այդ լեզուներով ստեղծված ստեղծագործությունների հասանելիությունը տարբեր եղանակներով,

132. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված, քանի որ աջակցություն էր տրամադրվել մի շարք փառատոնների, թատերական ներկայացումների, գրական եւ այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը: Փորձագետների կոմիտեն ակնկալում է տեղեկություններ ստանալ մշակութային գործունեության ֆինանսավորման ծավալն ավելացնելու վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն նաեւ խրախուսել է Հայաստանի իշխանություններին փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ միասին իրականացնել նրանց կարիքների գնահատում՝ հետագայում վերջիններիս լեզուների եւ մշակույթների պահպանման ու զարգացման համար մեխանիզմներ եւ աջակցության ծրագրեր մշակելու նպատակով:

133. Ինչպես Փորձագետների կոմիտեն նկատել է, վերոնշյալ 7(1)(գ) հոդվածի համաձայն՝ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության համար տրամադրված ֆինանսավորման ծավալը մնացել է անփոփոխ, ինչը կարծես թե բավարար չէ ասորերենի խթանման համար:

134. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել ասորերենով իրականացվող մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների համար իրենց կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալը:

բ. ապահովել, որ տարատեսակ մշակութային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց աջակցելու համար պատասխանատու մարմինները պատշաճ կերպով հաշվի առնեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ մշակույթների իմացությունն ու գործածումը՝ ընդգրկելով դրանք իրենց կողմից կամ իրենց աջակցությամբ կազմակերպվող միջոցառումներում:

135. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ. խրախուսել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածողների համայնքի ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը մշակութային կառույցների տրամադրման եւ մշակութային միջոցառումների պլանավորման գործընթացին,

136. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 2

Այն տարածքներից բացի, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներն ունեն ավանդական գործածություն, այլ տարածքների առումով՝ Կողմերը, նախորդ պարբերությանը համապատասխան, պարտավորվում են թույլատրել եւ խրախուսել իրականացնելու համապատասխան մշակութային գործունեություն կամ տրամադրել համապատասխան մշակութային

կառույցներ, եթե դա հիմնավորվում է տվյալ տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թվով:

137. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս՝ Կողմերը պարտավորվում են համապատասխան պայմաններ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ դրանց միջոցով արտահայտվող մշակույթների համար:

138. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

139. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել: Փորձագետների կոմիտեն կրկին անգամ նշում է, որ ստանձնելով այս պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները պարտավորվում են Հայաստանում փոքրամասնությունների լեզուների առկայության փաստն արտացոլել արտերկրում Հայաստանը ներկայացնող միջոցառումներում:

140. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս, ստեղծել բարենպաստ պայմաններ՝ ասորերենի եւ այդ լեզվով արտահայտված մշակույթի համար:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Պարբերություն 1

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ՝ Կողմերը պարտավորվում են ամբողջ երկրի տարածքում՝

...

բ. արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում եւ առանձին

փաստաթղթերում փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը՝ առնվազն նույն լեզուն գործածողների շրջանում բացառող կամ սահմանափակող որեւէ դրույթ ներառելը

141. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ. հակազդել տնտեսական եւ հասարակական գործունեության ոլորտում փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը խոչընդոտող գործելակերպին,

142. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

դ. խթանել եւ (կամ) խրախուսել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը վերոնշյալ ենթապարբերություններով սահմանված միջոցներից փարբեր՝ այլ միջոցներով:

143. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել ասորերենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

144. Երրորդ պարբերական զեկույցում զետեղված՝ այս պարտավորությանն առնչվող տեղեկությունները վերաբերում են ոչ թե տնտեսական ու հասարակական, այլ մշակութային գործունեությանը: Աշխատանքային այցի ընթացքում ասորերենով խոսողների ներկայացուցիչները հաստատեցին, որ իրենց լեզուն չի գործածվում տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

145. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել ասորերենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

Պարբերություն 2

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմիններն իրավասու են, Կողմերը, փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության փարածքներում, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են՝

...

բ. իրենց (պետական հատվածի) անմիջական հսկողությամբ՝ կազմակերպել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող միջոցառումներ տնտեսական եւ հասարակական ոլորտներում,

146. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն հնարավորություն չի ունեցել եզրակացություն տրամադրել այս պարտավորության կատարման մասին ու ունեցել: Այն պահանջել է Հայաստանի իշխանություններից հաջորդ պարբերական զեկույցում տրամադրել տեղեկություններ ասորերենի գործածման մասին հանրային ծառայությունների մատուցման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանրային տրանսպորտի ծառայությունը, փոստային կապի ծառայությունը եւ օդանավակայանները:

147. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել:

148. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն խրախուսում է Հայաստանի իշխանություններին իրականացնել ասորերենի գործածումը խթանող միջոցառումներ իրենց անմիջական հսկողության տակ գտնվող՝ տնտեսական եւ հասարակական ոլորտներում, ինչպես օրինակ՝ տրանսպորտի եւ փոստային ծառայությունների ոլորտներում:

գ. ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վաղառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողներին ընդունելու եւ նրանց

բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

149. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

150. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ասորերենը հիվանդանոցներում չի գործածվում: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ ցանկանում է նշել, որ Հայաստանի ստանձնած պարտավորության համաձայն՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ հիվանդանոցների կամ ծերանոցների անձնակազմի անդամները (բժիշկները, բուժքույրերը եւ այլք) ունենան անհրաժեշտ հմտություններ խնամքի կարիք ունեցող՝ որեւէ փոքրամասնության պատկանող անձանց սպասարկումն այդ անձանց մայրենի լեզվով իրականացնելու համար: Հայաստանի իշխանությունները պետք է ուղիներ գտնեն այս պարտավորությունն առավել համակարգված մոտեցման կիրառմամբ աստիճանաբար իրականացնելու համար:

151. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ ասորերենը գործածողներին ընդունելու եւ նրանց բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

Հոդված 14. Անդրսահմանային կապերը

Կողմերը պարտավորվում են՝

ա. կիրառել գոյություն ունեցող երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերը,

որոնցով նրանք պարտավորություններ են ստանձնում այն պետությունների նկատմամբ, որոնցում այդ լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեռով, կամ, անհրաժեշտության դեպքում, կնքել այդպիսի համաձայնագրեր՝ համապատասխան պետություններում միեւնույն լեզուն գործածողների միջեւ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման եւ հարատեւ կրթության բնագավառներում կապերի հաստատմանը նպաստելու նպատակով,

152. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

բ. հոգուտ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ խթանել եւ (կամ) ընդլայնել անդրսահմանային համագործակցությունը, մասնավորապես, փարածաշրջանային կամ տեղական այն մարմինների միջեւ, որոնց փարածքում միեւնույն լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեռով:

153. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

3.2.2 Հունարենը

154. Փորձագետների կոմիտեն մեկնաբանություններ չի ներկայացնի այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք գնահատման նախորդ զեկույցում համարվել են կատարված , եւ որոնց վերաբերյալ Փորձագետների կոմիտեն՝ դրանք կատարելու մասին արված իր եզրակացությունը վերանայելու համար հիմք հանդիսացող որեւէ նոր տեղեկություն չի ստացել: Այդ պարտավորությունները սահմանված են ստորեւ ներկայացված տեղեկություններում:

Ընդհանուր հիմնախնդիրները

155. Դիտանցման երկրորդ փուլում հույն փոքրամասնության համայնքն իր ցանկությունը հայտնեց խթանելու եւ զարգացնելու հունարենի գործածությունը: Փորձագետների կոմիտեն խրախուսել է Հայաստանի իշխանություններին հունարենով խոսողների հետ համատեղ մշակել ռազմավարություն՝ Խարտիայի դրույթները հունարենի առնչությամբ կիրարկելու համար:

156. Երրորդ պարբերական զեկույցում չեն նշվում կոնկրետ տեղեկություններ այս հարցի առնչությամբ: Հայաստանի իշխանություններն, այնուամենայնիվ, եւս մեկ անգամ նշում են հունարենի պահպանման եւ խթանման հետ կապված դժվարությունները:

157. Չնայած Փորձագետների կոմիտեն գիտակցում է, որ Խարտիայի III մասի կիրառությունը հունարենի նկատմամբ հավակնոտ քայլ է, այնուամենայնիվ, այն ընդգծում է, որ Հայաստանը պետք է ապահովի իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը գործնականում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր լեզվի իրավիճակը: Խարտիայի դրույթները կիրարկելու համար կողմ պետությունը, սեփական նախաձեռնությամբ կամ տվյալ լեզվով խոսողների հետ համատեղ, պետք է ձեռնարկի դրական միջոցներ՝ ուղղված հասարակական կյանքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանմանը եւ

խթանմանը:¹⁰

158. Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները, հունարեն խոսողների հետ համատեղ, պետք է մշակեն ռազմավարություն՝ Խարտիայի դրույթներն այս լեզվի առնչությամբ կիրարկելու համար: Այս ռազմավարությամբ պետք է սահմանվի այն տարածքը, որտեղ հունարենի գործածությունն ունի պատմական հիմքեր, եւ որի սահմաններում կիրարկվելու են Խարտիայի դրույթները: Ավելին, Խարտիայի դրույթներն իրականում կիրառելու համար իշխանությունները պետք է ճկուն միջոցներ ձեռնարկեն: Նման միջոցները կարող են ներառել համագործակցությունն այլ պետությունների հետ, որտեղ հունարենը գործածվում է (օրինակ՝ լրագրողների վերապատրաստման կամ փոխանակման, մշակույթի բնագավառում իրականացվող աշխատանքների փոխանակման, հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների արտադրությանն առնչվող հարցերի շուրջ), ինչպես նաեւ համագործակցությունը մասնավոր հատվածի հետ շահագրգիռ քաղաքային համայնքներում՝ 13-րդ հոդվածի կիրարկման առնչությամբ:¹¹

Փորձագետների կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին, հունարենով խոսողների հետ սերտ համագործակցությամբ, ձեւավորել կառուցվածքային քաղաքականություն Խարտիայի դրույթները՝ հունարենի առնչությամբ կիրարկելու համար:

Հոդված 8. Կրթությունը

Ուսուցիչների վերապատրաստումը եւ ուսումնական նյութերը

159. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն նշել է, որ

¹⁰ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Լեհաստանի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML (2011) 5) 24-րդ պարբերությունը

¹¹ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Լեհաստանի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML (2011) 109, 25-րդ պարբերությունը

փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցում հիմնական խոչընդոտը դեռևս կրթական բոլոր մակարդակներում վերապատրաստված ուսուցիչների, ինչպես նաև համապատասխան ուսումնական նյութերի պակասն է: Այն ակնկալում էր հաջորդ պարբերական զեկույցում ավելի շատ տեղեկատվություն ստանալ այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

160. Փորձագետների կոմիտեի կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ հունարենի ուսուցումը Հայաստանի դպրոցներում իրականացվում է Հունաստանից ստացված օժանդակության շնորհիվ: Հունաստանն է վճարում ուսուցիչներին եւ տրամադրում բոլոր դասագրքերը: Հունարենով խոսողները նշում են, որ Հունաստանում տիրող դժվար տնտեսական իրավիճակը բացասական ազդեցությունն է ունեցել Հունաստանի կողմից Հայաստանի հույն փոքրամասնությանը տրամադրվող օժանդակության առումով: Փորձագետների կոմիտեն տեղեկություններ չի ստացել Հայաստանի կրթական ծրագրին համապատասխան հունարենի ուսուցիչների վերապատրաստման կամ համապատասխան ուսումնական նյութերի տրամադրման համար Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումների մասին, հետեւաբար, խնդրում է նրանց այդ տեղեկությունները տրամադրել հաջորդ պարբերական զեկույցում: Այնուամենայնիվ Փորձագետների կոմիտեին հայտնեցին, որ ուսուցիչների պակասի պատճառներից մեկը նրանց աշխատավարձերի վճարման ներկայիս համակարգն է, որն անբարենպաստ է փոքրամասնությունների լեզուները դասավանդող ուսուցիչների համար:

161. Փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ միջնակարգ կրթության ոլորտի բարեփոխումը շարունակվում է: Միջնակարգ կրթությունը տարանջատվել է կրտսեր եւ ավագ միջնակարգ կրթության. ընդ որում, վերջինս գործում է միայն առանձին դպրոցներում: Փորձագետների կոմիտեն խնդրում է Հայաստանի իշխանություններին տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես է այս փաստն ազդում հունարենի ուսուցման վրա ավագ միջնակարգ դպրոցում:

Պարբերություն 1

Այդպիսի լեզուների գործածության փարածքներում, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան եւ չհակասելով պետության պաշտոնական լեզվի (լեզուների) ուսուցման պահանջին, կրթության առնչությամբ Կողմերը պարտավորվում են.

Նախադպրոցական կրթությունը

- ա. i. մարչելի դարձնել նախադպրոցական կրթությունը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մարչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. կիրառել վերը նշված i եւ ii կետերով նախատեսված միջոցառումներից որեւէ մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար, կամ*
- iv. եթե պետական մարմիններն անմիջական իրավասություն չունեն նախադպրոցական կրթության ոլորտում, աջակցել եւ (կամ) նպաստել i եւ iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը,*

162. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել իշխանություններին արդյունավետ միջոցներ ձեռնարկել հունարենով համապատասխան նախադպրոցական կրթության համակարգի ստեղծմանն աջակցելու եւ (կամ) նպաստելու համար:

163. Երրորդ պարբերական զեկույցում չեն նշվում տեղեկություններ այս հարցի առնչությամբ: Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել էր, որ հունարենը դեռեւս գործածվում է միայն մեկ նախադպրոցական հաստատությունում: Ավելին, հունարենի ուսուցումը Հայաստանի կրթական համակարգում իրականացվում է Հունաստանի հովանավորության շնորհիվ:

164. Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ այս պարտավորության համաձայն՝ Հայաստանի իշխանություններից պահանջվում է

աջակցել եւ (կամ) խրախուսել հունարենի գործածումը նախադպրոցական կրթության մեջ: Փորձագետների կոմիտեն նաեւ հղում է կատարում 54-րդ պարբերության մեջ նշված իր դիտարկումներին, որոնք համապատասխանաբար կիրառվում են:

165. Ելնելով այս տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին աջակցել եւ (կամ) խրախուսել հունարենի գործածումը նախադպրոցական կրթության մեջ:

Տարրական կրթությունը

- բ. i. մաթչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մաթչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. տարրական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ*
- iv. կիրառել վերը նշված (i) –(iii) կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընդանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար:*

166. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը կատարված է համարել գնահատման նախորդ զեկույցներում:

167. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հունարենը դասավանդվում է Երեւանի դպրոցներից մեկում՝ որպես պարտադիր առարկա եւ երկու այլ դպրոցներում՝ որպես ուսումնական պլանի շրջանակներում կամ ընտրական առարկա: Հունարենի ուսուցումը այս երեք դպրոցում ֆինանսավորվում է Հունաստանի կողմից: Ի հավելումն, հույն փոքրամասնությանը հովանավորող

ընկերակցությունը նաեւ կազմակերպում է այսպես կոչված կիրակնօրյա դպրոցներ (կամավոր ուսուցում ցերեկային ժամերին դպրոցի շենքում) Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Ստեփանավանում եւ Կողես գյուղում:

168. Փորձագետների կոմիտեն ցանկանում է ընդգծել, որ այս պարտավորությամբ Հայաստանի իշխանությունները հանձն են առնում ապահովելու հունարենի ուսուցումը տարրական կրթության բնագավառում: Ուսուցումը կիրակնօրյա դպրոցներում վկայում է այն մասին, որ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում հունարեն լեզվի դասավանդման պահանջարկը չի բավարարվել: Կիրակնօրյա դպրոցներում այդ լեզվի ուսուցումը կազմակերպելը չի նշանակում, որ այս պարտավորության պահանջները բավարարվել են: Հայաստանի իշխանությունները պետք է հունարենով խոսողների հետ համատեղ քննարկեն հունարենը որպես տարրական դպրոցի ուսումնական պլանի անբաժանելի մաս ուսուցանելու հնարավորությունն այն քաղաքային համայնքներում, որտեղ հունարենը դասավանդվում է միայն կիրակնօրյա դպրոցներում:

169. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին, համագործակցելով հունարենով խոսողների ներկայացուցիչների հետ, ընդլայնել հունարենի ուսուցման առաջարկը տարրական կրթության բնագավառում:

Միջնակարգ կրթությունը

- գ. i. մատչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մատչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. միջնակարգ կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ*
- iv. կիրառել վերը նշված i –iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության*

դեպքում, որոնց ընտանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար:

170. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը կատարված է համարել գնահատման նախորդ զեկույցներում:

171. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հունարենը դասավանդվում է երեք միջնակարգ դպրոցներում ուսումնական պլանի շրջանակներում որպես կամընտրական առարկա: Հունարենի ուսուցումը այս դպրոցներում հովանավորվում է Հունաստանի կողմից:

172. Փորձագետների կոմիտեն նաեւ տեղեկացվել է, որ հույն փոքրամասնությանը հովանավորող ընկերակցությունը կիրականորյա դպրոցներ է կազմակերպում Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Ստեփանավանում եւ Կողես գյուղում: Ուսուցանումը կիրականորյա դպրոցում ցույց է տալիս, որ հանրակրթական միջնակարգ դպրոցներում հունարեն լեզվի դասավանդման պահանջարկը չի բավարարվել: Կիրականորյա դպրոցներում այդ լեզվի ուսուցումը կազմակերպելը չի նշանակում, որ այս պարտավորության պահանջները բավարարվել են: Հայաստանի իշխանությունները պետք է հունարենով խոսողների հետ համատեղ քննեն հունարենը որպես միջնակարգ դպրոցի ուսումնական պլանի անբաժանելի մաս ուսուցանելու հնարավորությունը, այն շրջաններում, որտեղ այդ լեզուն դասավանդվում է կիրականորյա դպրոցներում:

173. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին, համագործակցելով հունարենով խոսողների ներկայացուցիչների հետ, ընդլայնել հունարենի դասավանդման առաջարկը միջնակարգ կրթության բնագավառում:

Տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը

դ. i. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթության

հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական եւ մասնագիտական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընտանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար

174. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն հորդորել է իշխանություններին շարունակել իրենց ջանքերը հունարենով կամ հունարենի դասավանդման առաջարկը տեխնիկական եւ մասնագիտական կրթության ծրագրում ապահովելու ուղղությամբ:

175. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հունարենը եւ հույն մշակույթի պատմությունը ներառված են Երեւանի Զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայ հունական պետական քոլեջի ուսումնական պլանում: Աշխատանքային այցի ընթացքում, այդուհանդերձ, Փորձագետների կոմիտեն տեղեկացվեց, որ հունարենի ուսուցումը Հայաստանի կրթական համակարգում իրականացվում է Հունաստանի հովանավորության շնորհիվ:

176. Փորձագետների կոմիտեն պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ընդլայնել հունարենի առաջարկը տեխնիկական եւ մասնագիտական կրթական ծրագրերում:

Համալսարանական եւ բարձրագույն կրթությունը

ե. i. մատչելի դարձնել համալսարանական եւ բարձրագույն կրթության մյուս տեսակները տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. հարմարություններ ապահովել այդ լեզուների՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկայի ուսուցման համար

iii. եթե բարձրագույն ուսումնական հաստատությունների ոլորտում պեպուսյան ունեցած դերակատարման հետեւանքով հնարավոր չէ կիրառել i եւ ii ենթապարբերությունները, ապա խրախուսել եւ (կամ) թույլատրել համալսարանական կամ բարձրագույն կրթության այլ ձեւերի ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ ապահովել հարմարություններ՝ այդ լեզուները որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկա ուսուցանելու համար.

177. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթությունը

q. iii. աջակցել եւ (կամ) նպաստել տվյալ լեզուների առաջարկի ապահովմանը՝ որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկաներ, եթե պեպական մարմիններն անմիջական իրավասություն չունեն չափահասների համար նախատեսված կրթության ոլորտում:

178. Դիտանցման նախորդ փուլերում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված:

179. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հույն փոքրամասնությանը հովանավորող ՀԿ-ն հունարենի դասընթացներ է կազմակերպում Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Ստեփանավանում, Նոյեմբերյանում եւ Կողես գյուղում: Փորձագետների կոմիտեի համար պարզ չէ, թե ինչ չափով են այդ դասընթացները հովանավորվում Հայաստանի իշխանությունների կողմից եւ ինչպես են Հայաստանի իշխանություններն աջակցում եւ (կամ) խրախուսում հունարենը՝ որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկա դասավանդելու առաջարկի:

180. Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին խնդրում է որոշակի տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես են նրանք աջակցում եւ (կամ) խրախուսում հունարենը որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկա դասավանդելու առաջարկի:

Հողված 9. Դատական մարմինները

Պարբերություն 1

Կողմերը պարտավորվում են՝ այն դատական տարածքներում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, այդ լեզուներից յուրաքանչյուրի հետ կապված իրավիճակին համապատասխան եւ պայմանով, որ սույն պարբերությամբ նշված հարմարությունների կիրառությունը չհամարվի դատավորի կողմից որպես արդարադատության պարզաճ իրականացումը խոչընդոտող հանգամանք՝

Քրեական վարույթը

ա. ii. երաշխավորել մեղադրյալի՝ իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը

181. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(ա)(ii) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով հանրությանը եւ դատարաններին փոքրամասնությունների լեզուները դատարաններում գործածելու իրավունքի մասին: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «**ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին**»:

182. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

183. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հունարենով խոսողներին եւ դատարաններին դատական վարույթներում հունարենի գործածության իրավունքի մասին:

iii. ապահովել, որ հարցումները եւ ապացույցները (գրավոր թե բանավոր) անընդունելի չհամարվեն զուտ այն պատճառով, որ դրանք ձեւակերպված են տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով

184. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

iv. պահանջի դեպքում՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով կազմել դատական վարույթներին առնչվող փաստաթղթեր:

185. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(iv) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով դատարաններին վարույթների ընթացքում փոքրամասնությունների լեզուներով փաստաթղթեր կազմելու պարտականության մասին:

186. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

187. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, պահանջի դեպքում, դատարաններին տեղեկացնել հունարենով քրեական վարույթների հետ կապված փաստաթղթեր կազմելու իրենց պարտականության մասին:

Քաղաքացիական վարույթները

բ ...

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու:

188. Գնահատման երկրորդ զեկույցում, անդրադառնալով 9(1)(ա)(ii) հոդվածում նշված իր դիտարկումներին, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հանրությանը եւ դատարաններին՝ դատարաններում քաղաքացիական վարույթների ժամանակ փոքրամասնությունների լեզուները գործածելու իրավունքի մասին եւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ նաեւ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «**ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին**»:

189. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 82-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

190. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ հունարենով խոսողներին քաղաքացիական վարույթներում հունարենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

Վարչական վարույթները

գ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, եւ (կամ)

iii. թույլատրել, որ փաստաթղթերը եւ վկայությունները ներկայացվեն փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, անհրաժեշտության դեպքում՝ կատարելով բանավոր եւ գրավոր թարգմանություններ:

191. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

192. Համաձայն երրորդ պարբերական զեկույցի՝ վարչական վարույթներն իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն վկայակոչում է 9(1)(բ)(ii) հոդվածի վերաբերյալ կատարված դիտարկումները (տե՛ս 82–83-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

193. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ հունարենով խոսողներին վարչական վարույթներում հունարենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

դ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ վերոհիշյալ (բ) եւ (գ) պարբերությունների (i) եւ (iii) ենթապարբերությունների կիրառությունը եւ, ցանկացած դեպքում, բանավոր թարգմանիչների ծառայություններից եւ գրավոր թարգմանություններից օգտվելու անհրաժեշտությունը համապատասխան անձանց համար չառաջացնեն լրացուցիչ ծախսեր:

194. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

195. Քանի որ Փորձագետների կոմիտեն բազմիցս եւ ապարդյուն խնդրել է

իրեն տրամադրել տեղեկություններ, այն ստիպված է եզրակացնել, որ պարտավորությունը չի կատարվել:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հասանելի դարձնել ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը, ինչպես նաեւ այն ակտերի, որոնք վերաբերում են մասնավորապես այդ լեզուներով խոսողներին, եթե դրանք այլ կերպ չեն տրամադրվում:

196. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց՝ ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը III բաժնում նշված լեզուներով, այդ թվում՝ ուսերենով հասանելի դարձնելու նպատակով:

197. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ ազգային օրենսդրական ակտերի տեքստերը չեն թարգմանվել հունարեն՝ ֆինանսական միջոցների եւ ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների կողմից նման պահանջարկի բացակայության պատճառով:

198. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակը ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը հասանելի դարձնելն է հունարենով:

Հոդված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Խրախուսման միջոցները

199. Ելնելով Փորձագետների կոմիտեի կողմից աշխատանքային այցի ընթացքում ստացված տեղեկություններից՝ հունարենը հազվադեպ է գործածվում վարչական մարմինների կողմից կամ նրանց հետ հաղորդակցվելիս:

Փորձագետների կոմիտեն նշում է, որ վարչական մարմինների կողմից որեւէ փոքրամասնության լեզվի գործածության համար պահանջվում են ինչպես կազմակերպական, այնպես էլ խրախուսական միջոցներ, որոնց շնորհիվ այդ մարմինների հետ հաղորդակցվելիս փոքրամասնությունների լեզուներով խոսողները կօգտվեն իրենց լեզուները գործածելու հնարավորությունից (տե՛ս 93-րդ պարբերությունը): Ուստի, Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին որոշակի միջոցներ ձեռնարկել՝ տեղական եւ տարածքային մարմինների կողմից հունարենի գործածությունը խթանելու համար:

Պետական մարմինները

Պարբերություն 1

Պետության այն վարչական շրջաններում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

ա.

iv. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան բնավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան սահմանված կարգով փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով,

200. (ա)(iv) եւ (ա)(v) պարտավորություններն այլընտրանքային տարբերակներ են: Քանի որ Հայաստանն ընտրել է (ա)(iv) տարբերակը, (ա)(v) տարբերակն ավելորդ է դառնում: Հավատարիմ մնալով իր գործելակերպին՝ Փորձագետների կոմիտեն կուսումնասիրի միայն (ա)(iv) տարբերակը:

201. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել

իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ Խարտիայի 10-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների գործնական կատարումը խթանելու համար:

202. Փորձագետների կոմիտեի կողմից աշխատանքային այցի ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ հունարենը չի գործածվում վարչական մարմինների կողմից կամ նրանց հետ հաղորդակցվելիս:

203. Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ ստանձնելով այս պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները հանձ են առել իրականացնելու նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ պետական մարմիններ ներկայացվող բանավոր կամ գրավոր դիմումներում փոքրամասնությունների լեզուների արդյունավետ գործածությունն ապահովելու համար:

204. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել գործնական միջոցներ, որպեսզի հունարենը գործածողները կարողանան այդ լեզվով գրավոր եւ բանավոր դիմումներ ներկայացնել պետական մարմինների տեղական կառույցներ:

բ բնակչության համար հասանելի դարձնել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ երկլեզու տարբերակներով,

205. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

206. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հունարենի առնչությամբ այս պարտավորությունը կատարված չէ:

207. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին՝ բնակչության համար ապահովել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերի եւ ձեւաթղթերի հասանելիությունը հունարենով կամ երկլեզու տարբերակներով:

Տեղական եւ տարածքային մարմիններ

Պարբերություն 2

Այն տեղական եւ տարածքային մարմինների առումով, որոնց տարածքում ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել.

բ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների՝ այդ լեզուներով բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնելու հնարավորությունը,

208. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցության ընթացքում հունարենի բանավոր եւ գրավոր գործածությունն ապահովելու համար:

209. Երրորդ պարբերական զեկույցում Հայաստանի իշխանությունները նշում են, որ տվյալ պարտավորությունը կարող է կատարվել, եթե «ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով»: Սա կիրառելի չէր լինի որեւէ մարզում կամ գյուղում հունարենով խոսողների առնչությամբ, հետեւաբար, հունարենի հետ կապված որոշ պարտավորությունների կատարումը հնարավոր չէր:

210. Փորձագետների կոմիտեն ընդգծում է, որ «համապատասխան լեզվի հետ կապված որեւէ հատուկ դրույթի ընդունումն անպայմանորեն ենթադրում է այդ դրույթը գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու եւ վարչական միջոցներ ձեռնարկելու հանձնառություն»:¹² Ավելին, այս հանձնառությունն ընդունելիս Հայաստանի իշխանությունները տեղյակ էին հունարենի իրավիճակի մասին, ուստի, տվյալ պարտավորությունը պետք է կատարվի Խարտիայի վավերացման գործընթացը չխոչընդոտելու համար:¹³ 10.2

¹²Բացատրական զեկույց, 104-րդ պարբերություն

¹³ Տե՛ս Փորձագետների կոմիտեի՝ Սլովակիայի վերաբերյալ երկրորդ զեկույցի (ECRML(2009)8) 15-րդ

հողվածի համաձայն՝ «[միջոցների կիրառությունը] հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով» հղումով չի նախատեսվում այդ լեզվի բացառումը Խարտիայի պաշտպանությունից, երբ վավերացման ժամանակ ընտրվում է որեւէ դրույթ: Այն միայն ճկուն հնարավորություն է տալիս տեղական եւ տարածքային մարմիններին՝ որոշելու, թե որտեղ կկիրառվեն այդ միջոցները՝ հաշվի առնելով տվյալ լեզվի իրավիճակը եւ նպատակ ունենալով կիրարկելու Խարտիան: Իշխանությունները պետք է գործնական միջոցներ ձեռնարկեն՝ տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցության ընթացքում հունարենի բանավոր եւ գրավոր գործածության փաստացի հնարավորությունն ապահովելու համար:

211. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հունարենը չի գործածվում վարչական մարմինների կողմից կամ նրանց հետ հաղորդակցվելիս: Ավելին, տեղական մարմիններն անտեղյակ են Խարտիայով առաջարկվող՝ հունարենի գործածման հնարավորության համար: Ինչ վերաբերում է պաշտոնյաներին՝ տեղական մարմիններում կան հունարենով խոսող աշխատողներ:

212. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցության ընթացքում հունարենի բանավոր եւ գրավոր գործածությունը ապահովելու համար:

զ. տեղական մարմինների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունն իրենց ժողովների ընթացքում կազմակերպվող բանավեճերում՝ չբացառելով, այնուամենայնիվ, պետության պաշտոնական լեզվի (լեզուների) գործածությունը,»

213. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված:

214. Փորձագետների կոմիտեի ստացած տեղեկությունների համաձայն՝

տեղական մարմինները հունարենը չեն գործածում իրենց բանավեճերի ընթացքում:

215. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խրախուսել տեղական մարմիններին գործածել հունարենն իրենց ժողովների ընթացքում կազմակերպվող բանավեճերում:

է. տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերի գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնական լեզվում (լեզուներում) առկա անվանումների հետ համապեղ:

216. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը դիտանցման նախորդ փուլերում համարել է կատարված:

217. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ տեղական մարմինները պաշտոնապես հունական անվանում կրող վայրերում չեն գործածում հունական տեղանունների հունատառ գրությունը (օրինակ՝ Յաղդան, Կողես):

218. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է միայն մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին գործածել տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերը հունարենով կամ ընդունել դրանք եւ տեղեկացնել ձեռնարկված միջոցների մասին հաջորդ պարբերական զեկույցում:

Պարբերություն 3

Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց կողմից մատուցված հանրային ծառայությունների առնչությամբ, այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են.

գ. թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողներին հայտ ներկայացնել այդ լեզուներով

219. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 4

Իրենց կողմից ընդունված՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների դրույթները գործողության մեջ դնելու նպատակով՝ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

...

գ. հնարավորության սահմաններում բավարարել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ:

220. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն կոչ է արել իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող հանրային ծառայողների շարժունությունն այդ լեզուների ավանդական գործածության տարածքներում խթանելու համար:

221. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Քաղաքացիական ծառայության խորհուրդն առաջարկել է թափուր աշխատատեղերի համար մրցույթներում նախապատվությունը տալ ասորերենին, եզդիերենին եւ քրդերենին տիրապետող թեկնածուներին: Հունարենի հետ կապված տեղեկություն չի տրամադրվել: Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ տեղական մարմիններում որոշ աշխատողներ հունարենով խոսողներ են: Այնուամենայնիվ, որոշ տեղական մարմիններում հունարենով խոսողներին աշխատանքի ընդունելու փաստը պայմանավորված չէ այս լեզվով խոսողներին աշխատանքի ընդունելուն ուղղված քաղաքականությամբ եւ, հետեւաբար, չի կարող երաշխավորվել ապագայում:

222. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին հնարավորության

սահմաններում բավարարել հունարենին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ, եւ հաջորդ պարբերական զեկույցում նշել, թե գործնականում ինչ միջոցներ են կիրառվել:

Պարբերություն 5

Կողմերը պարտավորվում են շահագրգիռ փոքրամասնությունների պահանջով թույլատրել ազգանունների գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ՝ դրանց ընդունումը:

223. Փորձագետների կոմիտեն դիտանցման նախորդ փուլերում այս պարտավորությունը համարել է կատարված :

224. Աշխատանքային այցի ընթացքում հունարենով խոսող համայնքի ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել էին, որ իշխանությունները փաստաթղթերում, ինչպիսիք ծննդյան վկայականներն են, չեն գործածում հունական ազգանունների հունատառ գրությունը: Ավելին, ազգանունների հունարեն տարբերակներն ընդունված չեն, քանի որ գործածվում են ռուսերեն տարբերակները: Փոփոխություն կարելի է պահանջել միայն դատական կարգով:

225. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին թույլատրել ազգանունների գործածությունը հունարենով կամ դրանց ընդունումը եւ ապահովել համապատասխան վարչական մարմինների կողմից այդպիսի անունների գործածությունը հունարեն տարբերակով եւ հունատառ գրությամբ:

Հոդված 11. Լրատվամիջոցները

Պարբերություն 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության

տարածքներում, հաշվի առնելով այդ լեզուներով խոսողների շահերը, ցանկացած լեզվի իրավիճակ, ինչպես նաև պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած ուղղակի կամ անուղղակի իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում եւ պահպանելով լրատվամիջոցների անկախության ու ինքնավարության սկզբունքը՝ Կողմերը պարտավորվում են՝

ա. ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից հանրային ծառայությունների մատուցման գործառույթի շրջանակներում՝

...

iii. ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հեռարձակող կազմակերպությունները հաղորդումներ հեռարձակեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

226. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին մշակել համակարգեր, որոնք կխթանեն հեռուստահաղորդումների հեռարձակումը հունարենով: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին միջոցներ ձեռնարկել՝ **ռադիոյում հունարենի առավել ակտիվ գործածությունն ապահովելու համար:**

227. Հայաստանի օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման ժամանակի սահմանափակումների առնչությամբ՝ Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 117-րդ պարբերության մեջ կատարված իր դիտարկումներին: Ինչ վերաբերում է գործնական կիրառությանը՝ հանրային ռադիոյում հունարենով հաղորդումներ առաջարկելու մինչ այժմ կատարված փորձերը ձախողվել են: Հանրային հեռուստատեսությամբ նույնպես հաղորդումներ չեն հեռարձակվում հունարենով:

228. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հանրային հեռարձակողները

հեռուստատեսային, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված ծրագրեր առաջարկեն հունարենով:

բ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումների հեռարձակումը

229. Մասնավոր ռադիոընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում հունարենով:

230. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր ռադիոընկերությունների կողմից հաղորդումների հեռարձակումը հունարենով:

գ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը,

231. Մասնավոր հեռուստաընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում հունարենով:

232. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր հեռուստաընկերությունների կողմից հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը հունարենով:

ե. i. խրախուսել եւ (կամ) խթանել փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով առնվազն մեկ թերթի լույս ընծայումը եւ (կամ) դրա հեղուկ գործունեությունը, կամ

233. Փորձագետների կոմիտեն ընդգծում է այն հանգամանքը, որ «թերթ»-ը, ըստ դրա ընդհանրական մեկնաբանության, այս պարտավորության շրջանակներում

պետք է հրատարակվի առնվազն շաբաթական պարբերականությամբ:¹⁴

234. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

235. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ իշխանությունները ֆինանսական օժանդակություն են առաջարկում հույն փոքրամասնության «Բյուզանդական օժանդակություն» թերթի հրատարակության համար: Այնուամենայնիվ, այն հրատարակվում է ռուսերենով:

236. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, հունարենով խոսողների հետ սերտ համագործակցությամբ, խթանել հունալեզու թերթի լույս ընծայումը:

Պարբերություն 2

Կողմերը պարտավորվում են երաշխավորել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների անարգել և ուղիղ հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ դրան համարժեք լեզվով, ինչպես նաև չխոչընդոտել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների՝ այդպիսի լեզվով վերահեռարձակումը: Նրանք պարտավորվում են նաև բացառել որեւէ սահմանափակման կիրառումը տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ նույնատիպ լեզվով հրատարակվող տպագիր մամուլում խոսքի ազատության ու տեղեկությունների ազատ շրջանառության նկատմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ազատությունների ապահովումը սերտորեն կապված է որոշակի պարտականությունների և պատասխանատվության հետ, այն կարող է ենթակա լինել այնպիսի վարչարարության, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարքերի պահպանման, այլոց

¹⁴ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Ռումինիայի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML(2012)3) 174-րդ պարբերությունը

համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի ստացված տեղեկության արտահոսքի կանխման կամ դատական իշխանության հեղինակության ու անկողմնակալության պահպանման համար:

237. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացվեն կամ հաշվի առնվեն լրատվամիջոցների ազատության ու բազմակարծության երաշխավորման համար պատասխանատու այնպիսի մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծվել օրենքին համապատասխան:

238. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է արել ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

239. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը երաշխավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկված չեն, եւ այն հատուկ ուշադրություն չի դարձնում փոքրամասնությունների շահերին:

240. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

Հոդված 12. Մշակութային գործունեություն և մշակութային կառույցներ

Պարբերություն 1

Մշակութային գործունեության և մշակութային կառույցների, հատկապես՝ գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների և կինոթատրոնների, ինչպես նաև գրական ստեղծագործությունների ու ֆիլմերի արտադրության, ժողովրդական արտահայտչաձևերի, փառատոնների և մշակութային արդյունաբերության՝ ներառյալ, մասնավորապես, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, այդ լեզուների գործածության տարածքում կողմերը, պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում՝ պարտավորվում են՝

ա. խրախուսել այնպիսի արտահայտչաձևերի ու նախաձեռնությունների կիրառությունը, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև ապահովել այդ լեզուներով ստեղծված ստեղծագործությունների հասանելիությունը տարբեր եղանակներով,

241. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված, քանի որ աջակցություն էր տրամադրվել մի շարք փառատոնների, թատերական ներկայացումների, գրական և այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը: Փորձագետների կոմիտեն ակնկալում է տեղեկություններ ստանալ մշակութային գործունեության ֆինանսավորման ծավալն ավելացնելու վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին նաև կոչ է արել փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ համագործակցությամբ գնահատել նրանց կարիքները՝ հետագայում նրանց լեզուների ու մշակույթների պահպանմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների և օժանդակության ծրագրերի մշակման համար:

242. Ինչպես Փորձագետների կոմիտեն նկատել է վերոնշյալ 7(1)(գ) հոդվածում՝ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալը մնացել է անփոփոխ այն չափով, որը թերեւս բավարար չէ հունարենի կիրառությունը խթանելու համար:

243. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել հունարենով իրականացվող մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների համար տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալը:

դ. ապահովել, որ տարատեսակ մշակութային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց աջակցելու համար պատասխանատու մարմինները պատշաճ կերպով հաշվի առնեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ մշակույթների իմացությունն ու գործածումը՝ ընդգրկելով դրանք իրենց կողմից կամ իրենց աջակցությամբ կազմակերպվող միջոցառումներում:

244. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

զ խրախուսել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածողների համայնքի ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը մշակութային կառույցների տրամադրման եւ մշակութային միջոցառումների պլանավորման գործընթացին,

245. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 2

Այն տարածքներից բացի, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներն ունեն ավանդական գործածություն, այլ տարածքների առումով՝ Կողմերը, նախորդ պարբերությանը համապատասխան, պարտավորվում են թույլատրել եւ խրախուսել իրականացնելու համապատասխան մշակութային գործունեություն կամ տրամադրել համապատասխան մշակութային կառույցներ, եթե դա հիմնավորվում է տվյալ տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թվով:

246. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս՝ Կողմերը պարտավորվում են համապատասխան պայմաններ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ դրանց միջոցով արտահայտվող մշակույթների համար:

247. Դիտանցման երկրորդ փուլում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

248. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել: Փորձագետների կոմիտեն ցանկանում է նշել, որ ստանձնելով սույն պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները պարտավորվում են Հայաստանում փոքրամասնությունների լեզուների առկայության փաստն արտացոլել նաեւ արտերկրում Հայաստանը ներկայացնող միջոցառումներում:

249. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս, ապահովել համապատասխան պայմաններ՝ հունարենի եւ այդ լեզվով արտահայտվող մշակույթների համար:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Պարբերություն 1

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ՝ Կողմերը պարտավորվում են ամբողջ երկրի տարածքում՝

...

բ. արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում եւ առանձին փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը՝ առնվազն նույն լեզուն գործածողների շրջանում բացառող կամ սահմանափակող որեւէ դրույթ ներառելը,

250. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

զ հակազդել տնտեսական եւ հասարակական գործունեության ոլորտում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը խոչընդոտող գործելակերպին,

251. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

դ. խթանել եւ (կամ) խրախուսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը վերոնշյալ ենթապարբերություններով սահմանված միջոցներից տարբեր՝ այլ միջոցներով:

252. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել հունարենի գործածությունը տնտեսական եւ սոցիալական գործընթացներում:

253. Երրորդ պարբերական զեկույցում զետեղված՝ այս պարտավորությանն առնչվող տեղեկությունները վերաբերում են ոչ թե տնտեսական ու հասարակական, այլ մշակութային գործունեությանը: Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել որեւէ միջոցառման մասին, որի հիման վրա այս պարտավորությունը կհամարվեր կատարված:

254. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել հունարենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեության մեջ:

Պարբերություն 2

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմիններն իրավասու են, Կողմերը, տարածաշրջանային կամ

փոքրամասնությունների լեզուների գործածության փարածքներում, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են՝

...

բ. իրենց (պետական հատվածի) անմիջական հսկողությամբ՝ կազմակերպել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող միջոցառումներ փնտեսական եւ հասարակական ոլորտներում,

255. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին խնդրել է հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ տրամադրել հունարենի գործածման մասին հանրային ծառայությունների մատուցման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հասարակական տրանսպորտը, փոստային ծառայությունները եւ օդանավակայանները:

256. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել:

257. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն խրախուսում է Հայաստանի իշխանություններին կազմակերպել միջոցառումներ՝ նպաստելու համար հունարենի գործածմանն իրենց անմիջական հսկողության տակ գտնվող տնտեսական եւ սոցիալական հատվածներում, ինչպես օրինակ՝ տրանսպորտային եւ փոստային ծառայությունների ոլորտում:

գ. ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարանները, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողներին ընդունելու եւ նրանց բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

258. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

259. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ հունարենը հիվանդանոցներում չի գործածվում: Երկրի տարածք կատարած այցի ընթացքում Փորձագետների կոմիտեին տեղեկացրեցին, որ հունական բժշկական կենտրոն է գործում Ալավերդիում, սակայն սա մասնավոր նախաձեռնության արդյունք է:

260. Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ Հայաստանի ստանձնած պարտավորության համաձայն՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ հիվանդանոցների կամ ծերանոցների անձնակազմի անդամները (բժիշկները, բուժքույրերը եւ այլք) ունենան անհրաժեշտ հմտություններ՝ խնամքի կարիք ունեցող՝ որեւէ փոքրամասնության պատկանող անձանց սպասարկումն այդ անձանց մայրենի լեզվով իրականացնելու համար: Հայաստանի իշխանությունները պետք է ուղիներ գտնեն այս պարտավորությունն ավելի համակարգված մոտեցման հիման վրա աստիճանաբար իրականացնելու համար:

261. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված, թեւեւ հունարենով խոսողները հունարենով հաղորդակցվելու հնարավորություն ունեն մասնավոր հաստատություններ դիմելիս եւ բուժում ստանալիս:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարանները, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պատճառներով խնամքի կարիք ունեցող՝ հունարենը գործածողներին ընդունելու եւ նրանց բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

Հոդված 14. Անդրսահմանային կապերը

Կողմերը պարտավորվում են՝

- ա. կիրառել գոյություն ունեցող երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերը, որոնցով նրանք պարտավորություններ են ստանձնում այն պետությունների նկատմամբ, որոնցում այդ լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ***

ձեռով, կամ, անհրաժեշտության դեպքում, կնքել այդպիսի համաձայնագրեր՝ համապատասխան պետություններում միեւնույն լեզուն գործածողների միջեւ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման եւ հարատեւ կրթության բնագավառներում կապերի հաստատմանը նպաստելու նպատակով,

262. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

բ. հոգուր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ խթանել եւ (կամ) ընդլայնել անդրսահմանային համագործակցությունը, մասնավորապես, տարածաշրջանային կամ տեղական այն մարմինների միջեւ, որոնց տարածքում միեւնույն լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեռով:

263. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

3.2.3 Քրդերենը

264. Փորձագետների կոմիտեն մեկնաբանություններ չի ներկայացնի այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք գնահատման նախորդ զեկույցում համարվել են կատարված, եւ որոնց վերաբերյալ Փորձագետների կոմիտեն՝ դրանք կատարելու մասին արված իր եզրակացությունը վերանայելու համար հիմք հանդիսացող որեւէ նոր տեղեկություն չի ստացել: Այդ պարտավորությունները սահմանված են ստորեւ ներկայացված տեղեկություններում:

Հոդված 8. Կրթությունը

Ուսուցիչների վերապատրաստումը եւ ուսումնական նյութերը

265. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն նշել է, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցում հիմնական խոչընդոտը դեռեւս կրթական բոլոր մակարդակներում վերապատրաստված ուսուցիչների, ինչպես նաեւ համապատասխան ուսումնական նյութերի պակասն է: Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին **մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ բոլոր մակարդակներում ուսուցիչների բավարար թվով վերապատրաստման դասընթացներ եւ քրդերենով թարմացված ուսումնական նյութերի հասանելիությունն ապահովելու համար:**

266. Փորձագետների կոմիտեն առավել մեծ թվով քրդերենի ուսուցիչների վերապատրաստման համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չի ստացել: Աշխատանքային այցի ընթացքում քրդերենով խոսողների ներկայացուցիչներն ընդգծեցին, որ դեռեւս կա ուսուցիչների պակաս: Փորձագետների կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին ապահովել ուսուցիչների բավարար վերապատրաստում՝ քրդերենի ուսուցման առումով վավերագրում նշված կրթական բոլոր մակարդակների համար:

267. Ուսումնական նյութերի առումով՝ երրորդ պարբերական զեկույցում հաստատվում է, որ Հայաստանի իշխանությունները 2010 թվականին աջակցել են «Այբբենարան»-ի հրատարակմանը: Բացի դրանից՝ նախապատրաստվում են

դասագրքեր՝ երկրորդ, երրորդ եւ չորրորդ դասարաններում քրդերեն դասավանդելու համար: Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հրատարակել վերոնշյալ դասագրքերը եւ ապահովել, որ համապատասխան ուսումնական նյութերը հասանելի լինեն վավերացմամբ նախատեսված բոլոր դասարանների համար:

268. Ավելին, երրորդ պարբերական զեկույցով հաստատվում է, որ Հայաստանի իշխանությունները հաստատել են քրդերենի՝ մայրենի լեզվի եւ գրականության 1-12-րդ դասարանների չափորոշիչն ու առարկայական ծրագիրը:

269. Փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ միջնակարգ կրթության ոլորտի բարեփոխումը շարունակվում է: Միջնակարգ կրթությունը տարանջատվել է կրտսեր եւ ավագ միջնակարգ կրթության. ընդ որում, վերջինս գործում է միայն առանձին դպրոցներում: Փորձագետների կոմիտեն խնդրում է իշխանություններին տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես է այս փաստն ազդում քրդերենի ուսուցման վրա ավագ միջնակարգ դպրոցում:

Պարբերություն 1

Այդպիսի լեզուների գործածության փարածքներում, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան եւ չհակասելով պետության պաշտոնական լեզվի (լեզուների) ուսուցման պահանջին՝ կրթության առնչությամբ կողմերը պարտավորվում են.

Նախադպրոցական կրթությունը

- ա. i. մարչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- ii. մարչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- iii. կիրառել վերը նշված (i) եւ (ii) կետերով նախատեսված միջոցառումներից***

որելէ մեկը առնվազն այն աշակերտների նկարմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար, կամ

iv. եթե պետական մարմինները նախադպրոցական կրթության ոլորտում չունեն անմիջական իրավասություն, ապա աջակցել եւ (կամ) նպաստել վերոնշյալ i-iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը.

270. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն խրախուսեց Հայաստանի իշխանություններին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ քրդերենով նախադպրոցական կրթական ծրագիր մշակելու նպատակով:

271. Համաձայն Հայաստանի իշխանությունների եւ քրդերենով խոսողների ներկայացուցիչների՝ քրդերենը դեռեւս չի գործածվում նախադպրոցական կրթության մեջ, քանի որ ծնողների կողմից դիմումներ կարծես թե չեն ներկայացվել: Աշխատանքային այցի ընթացքում քրդերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են իրենց հետաքրքրվածությունը մանկապարտեզներում քրդերենի գործածության հարցում: Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է, փոքրամասնություն կազմող քրդերի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, նախադպրոցական մակարդակում խթանեն քրդերենով կրթության հնարավորությունը այդ լեզվով խոսողների շրջանում:

272. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին խրախուսել քրդերենի գործածությունը նախադպրոցական կրթության ոլորտում:

Տարրական կրթությունը

բ. i. մադչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մադչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը

համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տարրական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերը նշված (i) եւ (iii) կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար:

273. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

274. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ քրդերենը դասավանդվում է տարրական դպրոցի 89 աշակերտների՝ շաբաթական երկուսից երեք դասաժամով: Փորձագետների կոմիտեն համարում է, որ ներկայիս առաջարկը բավարար չէ, որպեսզի հնարավոր լինի ապահովել աշակերտների համար քրդերենի վարժ տիրապետման եւ գրագիտության այնպիսի մակարդակ, որն իրագործելի կդարձներ լեզվի ակտիվ գործածումը հասարակական կյանքում:¹⁵

275. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, քրդերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ընդլայնել քրդերենի դասավանդման առաջարկի շրջանակը տարրական կրթության մակարդակում:

Միջնակարգ կրթությունը

գ. i. մարչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մարչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

¹⁵ Տե՛ս Փորձագետների կոմիտեի՝ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ զեկույցի 274-րդ պարբերությունը

iii. միջնակարգ կրթության շրջանակներում նախատեսել փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերը նշված i –iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընտանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար:

276. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

277. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ քրդերենը դասավանդվում է ընդհանուր թվով 305 աշակերտի Արմավիրի, Արարատի եւ Արագածոտնի մարզերի միջնակարգ դպրոցներում շաբաթական երկուսից երեք դասաժամով: Տարրական կրթության առումով՝ Փորձագետների կոմիտեն համարում է, որ ներկայիս առաջարկը բավարար չէ, որպեսզի հնարավոր լինի ապահովել աշակերտների համար քրդերենի վարժ տիրապետման եւ գրագիտության այնպիսի մակարդակ, որն իրագործելի կդարձներ լեզվի ակտիվ գործածումը հասարակական կյանքում:

278. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, քրդերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ընդլայնել քրդերենի դասավանդման առաջարկի շրջանակը միջնակարգ կրթության մակարդակում:

Տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը

դ. i. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը համապատասխան փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական եւ մասնագիտական կրթության շրջանակներում նախատեսել փարաժաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների

դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընտանիքներն այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար

279. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին շարունակել իրենց ջանքերը փոքրամասնությունների լեզուներով կամ այդ լեզուների դասավանդման առաջարկը տեխնիկական եւ մասնագիտական կրթության ծրագրում ապահովելու ուղղությամբ:

280. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ քրդերենով կրթություն ստանալու համար դիմումներ չեն ներկայացվել տեխնիկական եւ մասնագիտական կրթության ոլորտներում: Երեւանի Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջի քրդերենի բաժինը դադարեցրել է իր գործունեությունը՝ պայմանավորված դիմորդների թվի պակասով, սակայն բավարար դիմումների առկայության պարագայում կարող է վերսկսել այն: Հայաստանի իշխանությունները նշում են, որ իրենք հաճախ են կազմակերպում այցեր քրդախոս քաղաքային համայնքներ քրդերենով խոսողների՝ փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Առաջարկվում է նաեւ քրդերենի հեռավար ուսուցում: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ուսուցիչների պակասի պատճառներից մեկը զբաղվածության եւ վճարման գործող համակարգն է, որում հաշվի չեն առնվում փոքրամասնությունների լեզուների դասավանդման առանձնահատկությունները (փոքր խմբերը, դասաժամերի անբավարար քանակը եւ, երբեմն էլ, դասընթացների կամընտրական բնույթը): 8(1)(ա)(iii) հոդվածի հիման վրա կատարված դիտարկումների համաձայն եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը վավերացրել է այս պարտավորությունը, Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները, քրդերենով խոսողների հետ համագործակցությամբ, պետք է քրդերենով խոսողների շրջանում խթանեն

քրդերենով կրթություն ստանալու հնարավորությունը տեխնիկական եւ մասնագիտական դպրոցներում:

281. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, քրդերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, մատչելի դարձնել տեխնիկական ու մասնագիտական կրթությունը քրդերենով եւ նախատեսել այդ լեզվի դասավանդումը որպես առարկա:

Համալսարանական եւ բարձրագույն կրթությունը

- ե. i. մատչելի դարձնել համալսարանական եւ բարձրագույն կրթության մյուս տեսակները տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. հարմարություններ ապահովել այդ լեզուների՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկայի ուսուցման համար*
- iii. եթե բարձրագույն ուսումնական հաստատությունների ոլորտում պետության ունեցած դերակատարման հետեւանքով հնարավոր չէ կիրառել i եւ ii ենթապարբերությունները, ապա խրախուսել եւ (կամ) թույլատրել համալսարանական կամ բարձրագույն կրթության այլ ձևերի ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ ապահովել հարմարություններ՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկա այդ լեզուներն ուսուցանելու համար.*

282. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթությունը

- գ. iii. աջակցել եւ (կամ) նպաստել փվյալ լեզուների առաջարկի ապահովմանը՝ որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկաներ, եթե պետական մարմիններն անմիջական իրավասություն չունեն չափահասների համար նախատեսված կրթության ոլորտում:*

283. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն եզրակացություն

չի տրամադրել այս պարտավորության կատարված լինելու մասին:

284. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Հայաստանի իշխանությունները կարծում են, որ չափահասների համար նախատեսված կամ շարունակական կրթության ուսումնական դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտություն չկա քրդերենով, քանի որ չափահաս քրդերը բավականաչափ տիրապետում են իրենց լեզվին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը վավերացրել է այս պարտավորությունը, Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է խորհրդակցեն քրդերենով խոսողների ներկայացուցիչների հետ այն հարցի շուրջ, թե ինչպես եւ ինչ չափով պետք է գործնականում իրականացվի այս պարտավորությունը:

285. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Հոդված 9. Դատական մարմինները

Պարբերություն 1

Կողմերը պարտավորվում են՝ այն դատական տարածքներում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, այդ լեզուներից յուրաքանչյուրի հետ կապված իրավիճակին համապատասխան եւ պայմանով, որ սույն պարբերությամբ նշված հարմարությունների կիրառությունը չհամարվի դատավորի կողմից որպես արդարադատության պարզաճ իրականացումը խոչընդոտող հանգամանք՝

Քրեական վարույթը

ա. ii. երաշխավորել մեղադրյալի՝ իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը

286. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝

9(1)(ա)(ii) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով հանրությանը եւ դատարաններին փոքրամասնությունների լեզուները դատարաններում գործածելու իրավունքի մասին: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:

287. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

288. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին տեղեկացնել քրդերենով խոսողներին եւ դատարաններին դատական վարույթներում քրդերենի գործածության իրավունքի մասին:

iii. ապահովել, որ հարցումները եւ ապացույցները (գրավոր թե բանավոր) անընդունելի չհամարվեն զուտ այն պատճառով, որ դրանք ձեւակերպված են փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով

289. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

iv. պահանջի դեպքում՝ համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով կազմել դատական վարույթներին առնչվող փաստաթղթեր:

290. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(iv) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով դատարաններին վարույթների

ընթացքում փոքրամասնությունների լեզուներով փաստաթղթեր կազմելու պարտականության մասին:

291. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

292. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, պահանջի դեպքում, դատարաններին տեղեկացնել քրդերենով քրեական վարույթների հետ կապված փաստաթղթեր կազմելու իրենց պարտականության մասին:

Քաղաքացիական վարույթները

բ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու:

293. Գնահատման երկրորդ զեկույցում, անդրադառնալով 9(1)(ա)(ii) հոդվածում նշված իր դիտարկումներին, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հանրությանը եւ դատարաններին՝ դատարաններում քաղաքացիական վարույթների ժամանակ փոքրամասնությունների լեզուները գործածելու իրավունքի մասին եւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ նաեւ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:

294. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման մասին նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացման գործողությունների անհրաժեշտության մասին իր առաջարկներին (տե՛ս 82-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

295. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ քրդերենով խոսողներին քաղաքացիական վարույթներում քրդերենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

Վարչական վարույթները

ա. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, եւ (կամ)

iii. թույլատրել, որ փաստաթղթերը եւ վկայությունները ներկայացվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, անհրաժեշտության դեպքում՝ կատարելով բանավոր եւ գրավոր թարգմանություններ:

296. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն սույն պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

297. Համաձայն երրորդ պարբերական զեկույցի՝ վարչական վարույթներն իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 9(1)(բ)(ii) հոդվածի առնչությամբ կատարված իր դիտարկումներին եւ հանձնարարականներին

(տե՛ս 82-83-րդ պարբերությունները), որոնք համապատասխանաբար կիրառվում

են:

298. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ քրդերենով խոսողներին վարչական վարույթներում քրդերենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

դ. քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ վերոհիշյալ (բ) եւ (գ) պարբերությունների (i) եւ (iii) ենթապարբերությունների կիրառությունը եւ, ցանկացած դեպքում, բանավոր թարգմանիչների ծառայություններից եւ գրավոր թարգմանություններից օգտվելու անհրաժեշտությունը համապատասխան անձանց համար չառաջացնեն լրացուցիչ ծախսեր:

299. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

300. Քանի որ Փորձագետների կոմիտեն բազմիցս եւ ապարդյուն խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ, այն ստիպված է եզրակացնել, որ պարտավորությունը չի կատարվել:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հասանելի դարձնել ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը, ինչպես նաեւ այն ակտերի, որոնք վերաբերում են մասնավորապես այդ լեզուներով խոսողներին, եթե դրանք այլ կերպ չեն տրամադրվում:

301. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակն է ազգային օրենսդրական ամենակարեւոր ակտերի տեքստերը հասանելի դարձնել քրդերենով:

302. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ ազգային օրենսդրական ակտերի տեքստերը չեն թարգմանվել քրդերեն՝ ֆինանսական միջոցների եւ

ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների կողմից նման պահանջարկի բացակայության պատճառով:

303. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակը ազգային օրենսդրական ամենակարեւոր ակտերի տեքստերը հասանելի դարձնելն է քրդերենով:

Հոդված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Խրախուսման միջոցները

304. Ելնելով Փորձագետների կոմիտեի կողմից աշխատանքային այցի ընթացքում ստացված տեղեկություններից՝ քրդերենը դեռեւս հազվադեպ է գործածվում վարչական մարմինների կողմից կամ նրանց հետ հաղորդակցվելիս: Փորձագետների կոմիտեն նշում է, որ վարչական մարմինների կողմից որեւէ փոքրամասնության լեզվի գործածության համար պահանջվում են ինչպես կազմակերպական, այնպես էլ խրախուսական միջոցներ, որոնց շնորհիվ այդ մարմինների հետ հաղորդակցվելիս փոքրամասնությունների լեզուներով խոսողները կօգտվեն իրենց լեզուները գործածելու հնարավորությունից (տե՛ս 93-րդ պարբերությունը): Ուստի, Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին կոնկրետ միջոցներ ձեռնարկել՝ խթանելու համար քրդերենի կիրառությունը տեղական եւ շրջանային իշխանությունների կողմից: Նման միջոցները կարող են ներառել աշխատակազմի անդամների շրջանում փոքրամասնության լեզվի իմացության մակարդակի բարձրացումն աշխատանքի ընդունման եւ վերապատրաստման միջոցով, պաշտոնական փաստաթղթերը քրդերենով հասանելի դարձնելը, Խարտիայից բխող պարտավորությունների մասին տեղեկությունների տրամադրումը քրդերենով, ինչպես նաեւ քրդերենի գործածության ապահովումը վարչական ցուցանակների վրա:

Պետական մարմինները

Պարբերություն 1

Պեպության այն վարչական շրջաններում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

ա. ...

iv. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան սահմանված կարգով փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով,

305. (ա)(iv) եւ (ա)(v) պարտավորություններն այլընտրանքային տարբերակներ են: Քանի որ Հայաստանն ընտրել է (ա)(iv) տարբերակը, (ա)(v) տարբերակն ավելորդ է դառնում: Հավատարիմ մնալով իր գործելակերպին՝ Փորձագետների կոմիտեն կուսումնասիրի միայն (ա)(iv) տարբերակը:

306. Գնահատման իր երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված: Այն, այնուամենայնիվ, կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ 10-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների գործնական կատարումը խթանելու համար:

307. Փորձագետների կոմիտեն քրդերենի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չի ստացել:

308. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել գործնական միջոցներ, որպեսզի քրդերենը գործածողները կարողանան այդ լեզվով գրավոր եւ բանավոր դիմումներ ներկայացնել պետական մարմինների տեղական կառույցներ:

բ. բնակչության համար հասանելի դարձնել լայնորեն կիրառվող վարչական

բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ երկլեզու տարբերակներով,

309. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

310. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ բնակչությանը հասանելի չէ լայնորեն կիրառվող որեւէ վարչական բնույթի տեքստ կամ ձեւաթուղթ քրդերենով կամ երկլեզու տարբերակներով:

311. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին՝ բնակչության համար ապահովել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերի եւ ձեւաթղթերի հասանելիությունը քրդերենով կամ երկլեզու տարբերակներով:

Տեղական եւ տարածքային մարմիններ

Պարբերություն 2

Այն տեղական եւ տարածքային մարմինների առումով, որոնց տարածքում ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել.

բ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների՝ այդ լեզուներով բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնելու հնարավորությունը,

312. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ. տեղական իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումն իրենց ժողովների ընթացքում իրականացվող քննարկումների ժամանակ՝ միեւնույն ժամանակ չբացառելով պեպոլոյան պաշտոնական լեզվի (լեզուների) գործածումը,

313. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Է. տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերի գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնական լեզվում (լեզուներում) առկա անվանումների հետ համատեղ:

314. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց կողմից մատուցված հանրային ծառայությունների առնչությամբ, այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ կողմերը, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են.

...

զ. թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողներին հայտ ներկայացնել այդ լեզուներով

315. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 4

Իրենց կողմից ընդունված՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների դրույթները գործողության մեջ դնելու նպատակով՝ կողմերը պարտավորվում են ձեռնարկել հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

...

զ. հնարավորության սահմաններում բավարարել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ:

316. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել Հայաստանի

իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ համապատասխան փոքրամասնության լեզվին տիրապետող հանրային ծառայողների շարժունությունը խթանելու համար:

317. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Քաղաքացիական ծառայության խորհուրդն առաջարկել է թափուր աշխատատեղերի համար մրցույթներում նախապատվությունը տալ ասորերենին, քրդերենին եւ եզդիերենին տիրապետող թեկնածուներին: Փորձագետների կոմիտեի համար, այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այդ առաջարկն իրագործվել է, թե՛ ոչ: Հայաստանի իշխանությունները պետք է հստակեցնեն այս հարցը հաջորդ պարբերական զեկույցում:

318. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին հնարավորության սահմաններում բավարարել քրդերենին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ, եւ հաջորդ պարբերական զեկույցում նշել, թե գործնականում ինչ միջոցներ են կիրառվել:

Պարբերություն 5

Կողմերը պարտավորվում են շահագրգիռ փոքրամասնությունների պահանջով թույլատրել ազգանունների գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ՝ դրանց ընդունումը:

319. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Հոդված 11. Լրատվամիջոցները

Պարբերություն 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության տարածքներում, հաշվի առնելով այդ լեզուներով խոսողների շահերը, ցանկացած լեզվի իրավիճակ, ինչպես նաեւ պեպրական մարմինների՝ այս ոլորտում ունեցած ուղղակի կամ

անուղղակի իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում եւ պահպանելով լրավորմիջոցների անկախության ու ինքնավարության սկզբունքը՝ կողմերը պարտավորվում են՝

ա. ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից հանրային ծառայությունների մատուցման գործառույթի շրջանակներում՝

...

iii. ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հեռարձակող կազմակերպությունները հաղորդումներ հեռարձակեն փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

320. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին մշակել համակարգեր, որոնք կխթանեն հեռուստահաղորդումների հեռարձակումը քրդերենով: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին միջոցներ ձեռնարկել հեռուստատեսությամբ քրդերենի գործածությունը բարելավելու համար:

321. Հայաստանի օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման տեւողության սահմանափակումների առնչությամբ՝ Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 117-րդ պարբերության մեջ կատարված իր դիտարկումներին: Գործնական իրականացման առումով՝ Հայաստանի հանրային ռադիոյով յուրաքանչյուր օր քրդերենով հեռարձակվում են 30 րոպե տեւողությամբ հաղորդումներ: Հանրային հեռուստատեսությամբ հաղորդումներ չեն հեռարձակվում քրդերենով: Աշխատանքային այցի ընթացքում քրդերենով խոսողների ներկայացուցիչները հաստատել են իրենց լեզվով հեռուստահաղորդումներ ունենալու ցանկությունը, սակայն նշել են նաեւ, որ քիչ են այնպիսի լրագրողները, որոնք կարող են աշխատել քրդերենով:

322. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված՝ հանրային ռադիոյի առնչությամբ եւ չկատարված՝ հանրային հեռուստատեսության առնչությամբ:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հանրային հեռարձակողները հեռուստատեսային, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված ծրագրեր առաջարկեն քրդերենով:

բ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումների հեռարձակումը

323. Մասնավոր ռադիոընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում քրդերենով:

324. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր ռադիոընկերությունների կողմից հաղորդումների հեռարձակումը քրդերենով:

գ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը,

325. Մասնավոր հեռուստաընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում քրդերենով:

326. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել մասնավոր հեռուստաընկերությունների կողմից հաղորդումների կանոնավոր հեռարձակումը քրդերենով:

ե. i. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով առնվազն մեկ թերթի լույս ընծայումը եւ (կամ) դրա հետագա գործունեությունը, կամ

327. Փորձագետների կոմիտեն ընդգծում է այն հանգամանքը, որ «թերթը», ըստ դրա ընդհանրական մեկնաբանության, այս պարտավորության շրջանակներում

պետք է հրատարակվի առնվազն շաբաթական պարբերականությամբ:¹⁶

328. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

329. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ «Ռյա Թագա» եւ «Զագրոս» պարբերականները շարունակում են հրատարակվել քրդերենով: Աշխատանքային այցի ընթացքում քրդերենով խոսողների համայնքի ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ նշված երկու պարբերականը հրատարակվում է ամսական պարբերականությամբ: Այնուամենայնիվ, ամսական պարբերականությամբ հրատարակվող պարբերականները Խարտիայի շրջանակներում որպես «թերթ» չեն որակվում:

330. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է անում խթանել առնվազն մեկ թերթի լույս ընծայումը քրդերենով:

Պարբերություն 2

Կողմերը պարտավորվում են երաշխավորել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների անարգել եւ ուղիղ հեռարձակումը փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ դրան համարժեք լեզվով, ինչպես նաեւ չխոչընդոտել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների՝ այդպիսի լեզվով վերահեռարձակումը: Նրանք պարտավորվում են նաեւ բացառել որեւէ սահմանափակման կիրառումը փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ նույնատիպ լեզվով հրատարակվող տպագիր մամուլում խոսքի ազատության ու տեղեկությունների ազատ շրջանառության նկատմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ազատությունների ապահովումը սերտորեն կապված է որոշակի պարտականությունների եւ պատասխանատվության հետ, այն կարող է ենթակա լինել

¹⁶ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Ռումինիայի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML(2012)3) 174-րդ պարբերությունը

այնպիսի վարչարարության, պայմանների, սահմանափակումների կամ փուզանքների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, փարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարքերի պահպանման, այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի ստացված տեղեկության արտահոսքի կանխման կամ դատական իշխանության հեղինակության ու անկողմնակալության պահպանման համար:

331. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են ապահովել, որ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացվեն կամ հաշվի առնվեն լրատվամիջոցների ազատության ու բազմակարծության երաշխավորման համար պարասխանատու այնպիսի մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծվել օրենքին համապատասխան:

332. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է արել ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

333. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը երաշխավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկված չեն, եւ այն հատուկ ուշադրություն չի դարձնում փոքրամասնությունների շահերին:

334. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն քրդերենը գործածողների շահերը:

Հոդված 12. Մշակութային գործունեություն եւ մշակութային կառույցներ

Պարբերություն 1

Մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների, հատկապես՝ գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների եւ կինոթատրոնների, ինչպես նաեւ գրական ստեղծագործությունների ու ֆիլմերի արտադրության, ժողովրդական արտահայտչաձեւերի, փառատոնների եւ մշակութային արդյունաբերության՝ ներառյալ, մասնավորապես, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, այդ լեզուների գործածության տարածքում Կողմերը, պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում՝ պարտավորվում են՝

ա. խրախուսել այնպիսի արտահայտչաձեւերի ու նախաձեռնությունների կիրառությունը, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաեւ ապահովել այդ լեզուներով ստեղծված ստեղծագործությունների հասանելիությունը տարբեր եղանակներով,

335. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված, քանի որ աջակցություն էր տրամադրվել մի շարք փառատոնների, թատերական ներկայացումների, գրական եւ այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը: Փորձագետների կոմիտեն ակնկալում է տեղեկություններ ստանալ մշակութային գործունեության ֆինանսավորման ծավալն ավելացնելու վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին նաեւ կոչ է արել փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ համագործակցությամբ գնահատել նրանց կարիքները՝ հետագայում նրանց լեզուների ու մշակույթների պահպանմանը եւ զարգացմանն ուղղված միջոցառումների ու օժանդակության ծրագրերի մշակման համար:

336. Ինչպես Փորձագետների կոմիտեն նկատել է վերոնշյալ 7(1)(գ) հոդվածում՝ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալը մնացել է անփոփոխ այն չափով, որը թերեւս բավարար չէ՝ քրդերենի կիրառությունը խթանելու համար:

337. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել քրդերենով իրականացվող մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների համար իրենց կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալը:

դ. ապահովել, որ տարատեսակ մշակութային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց աջակցելու համար պատասխանատու մարմինները պատշաճ կերպով հաշվի առնեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ մշակույթների իմացությունն ու գործածումը՝ ընդգրկելով դրանք իրենց կողմից կամ իրենց աջակցությամբ կազմակերպվող միջոցառումներում:

338. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

զ. խրախուսել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածողների համայնքի ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը մշակութային կառույցների տրամադրման եւ մշակութային միջոցառումների պլանավորման գործընթացին,

339. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 2

Այն տարածքներից բացի, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներն ունեն ավանդական գործածություն, այլ տարածքների առումով՝ Կողմերը, նախորդ պարբերությանը համապատասխան, պարտավորվում են թույլատրել եւ խրախուսել իրականացնելու համապատասխան մշակութային գործունեություն կամ տրամադրել համապատասխան մշակութային

կառույցներ, եթե դա հիմնավորվում է տվյալ տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թվով:

340. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս՝ Կողմերը պարտավորվում են համապատասխան պայմաններ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ դրանց միջոցով արտահայտվող մշակույթների համար:

341. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

342. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ ստանձնելով այս պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները պարտավորվում են Հայաստանում փոքրամասնությունների լեզուների առկայության փաստն արտացոլել արտերկրում Հայաստանը ներկայացնող միջոցառումներում:

343. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս, ապահովել համապատասխան պայմաններ՝ քղերենի եւ այդ լեզվով արտահայտվող մշակույթի համար:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Պարբերություն 1

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ՝ Կողմերը պարտավորվում են ամբողջ երկրի տարածքում՝

...

բ. արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում եւ առանձին փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը՝ առնվազն նույն լեզուն գործածողների շրջանում բացառող կամ սահմանափակող որեւէ դրույթ ներառելը

344. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ. հակազդել տնտեսական եւ հասարակական գործունեության ոլորտում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը խոչընդոտող գործելակերպին,

345. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

դ. խթանել եւ (կամ) խրախուսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը վերոնշյալ ենթապարբերություններով սահմանված միջոցներից տարբեր՝ այլ միջոցներով:

346. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել քրդերենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

347. Երրորդ պարբերական զեկույցում զետեղված՝ այս պարտավորությանն առնչվող տեղեկությունները վերաբերում են ոչ թե տնտեսական ու հասարակական, այլ մշակութային գործունեությանը: Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել որեւէ միջոցառման մասին, որի հիման վրա այս պարտավորությունը կհամարվեր կատարված:

348. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել քրդերենի գործածումը տնտեսական եւ հասարակական գործունեության մեջ:

Պարբերություն 2

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմիններն իրավասու են, Կողմերը, փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության փարածքներում, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են՝

...

բ. իրենց (պետական հատվածի) անմիջական հսկողությամբ՝ կազմակերպել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող միջոցառումներ տնտեսական եւ հասարակական ոլորտներում,

349. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին խնդրել է հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ տրամադրել քրդերենի գործածման մասին հանրային ծառայությունների մատուցման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք հասարակական տրանսպորտը, փոստային ծառայությունները եւ օդանավակայաններն են:

350. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել:

351. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին իրականացնել քրդերենի գործածումը խթանող միջոցառումներ իրենց անմիջական հսկողության տակ գտնվող՝ տնտեսական եւ հասարակական ոլորտներում, ինչպես օրինակ՝ տրանսպորտի եւ փոստային ծառայությունների ոլորտներում:

գ. ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողներին ընդունելու եւ նրանց սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

352. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

353. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ քրդերենը հիվանդանոցներում չի գործածվում: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ Հայաստանի ստանձնած պարտավորության համաձայն՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ հիվանդանոցների կամ ծերանոցների անձնակազմի անդամները (բժիշկները, բուժքույրերը եւ այլք) ունենան անհրաժեշտ հմտություններ՝ խնամքի կարիք ունեցող՝ որեւէ փոքրամասնության պատկանող անձանց սպասարկումն այդ անձանց մայրենի լեզվով իրականացնելու համար: Հայաստանի իշխանությունները պետք է ուղիներ գտնեն այս պարտավորությունն առավել համակարգված մոտեցման կիրառմամբ աստիճանաբար իրականացնելու համար:

354. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վատառողջության, ծերության կամ այլ պատճառներով խնամքի կարիք ունեցող՝ քրդերենի գործածողներին ընդունելու եւ նրանց սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

Հոդված 14. Անդրսահմանային կապերը

Կողմերը պարտավորվում են՝

ա. կիրառել գոյություն ունեցող երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերը, որոնցով նրանք պարտավորություններ են ստանձնում այն պետությունների նկատմամբ, որոնցում այդ լեզուն գործածվում է նույնական կամ նույնափափ ձևով, կամ, անհրաժեշտության դեպքում, կնքել այդպիսի համաձայնագրեր՝

համապատասխան պեղություններում միեւնույն լեզուն գործածողների միջեւ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման եւ հարապեւ կրթության բնագավառներում կապերի հաստատմանը նպաստելու նպատակով,

355. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

բ. հոգուր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ խթանել եւ (կամ) ընդլայնել անդրսահմանային համագործակցությունը, մասնավորապես, տարածաշրջանային կամ տեղական այն մարմինների միջեւ, որոնց տարածքում միեւնույն լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեւով:

356. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

3.2.4 Ռուսերենը

357. Փորձագետների կոմիտեն իր ուշադրությունը կսեւեռի III մասի դրույթների վրա, որոնք, որպես որոշակի խնդիրներ հարուցող դրույթներ, առանձնացվել էին երկրորդ զեկույցում: Հետեւաբար, սույն զեկույցում Կոմիտեն դիտողություններ չի ներկայացնի այն դրույթների վերաբերյալ, որոնց անդրադարձ չի կատարվել գնահատման նախորդ երկու զեկույցներում եւ որոնց առնչությամբ չեն տրամադրվել այնպիսի նոր տեղեկություններ, որոնք անհրաժեշտություն կստեղծեին վերագնահատելու դրանց կատարումը: Այդ դրույթներն են՝

8-րդ հոդվածի (1)(ա)(iv), (բ)(iv), (գ)(iv), (դ)(iv), (ե)(iii), (զ)(iii) պարբերությունները,

9-րդ հոդվածի (1)(ա)(iii), (3) պարբերությունները,

10-րդ հոդվածի (1)(ա)(iv), (ա)(v), (2)(բ), (գ), (3)(գ), (4)(գ), (5) պարբերությունները,

11-րդ հոդվածի (1)(ե)(i), (2) պարբերությունները,

12-րդ հոդվածի (1)(դ),(գ),(2),(3) պարբերությունները,

13-րդ հոդվածի (1)(բ), (գ), (դ), 2(գ) պարբերությունները,

14-րդ հոդվածի (ա), (բ) պարբերությունները:

Հոդված 8. Կրթությունը

Ուսուցիչների վերապատրաստումը եւ ուսումնական նյութերը

358. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն նշել է, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցում հիմնական խոչընդոտը դեռեւս կրթական բոլոր մակարդակներում վերապատրաստված ուսուցիչների, ինչպես նաեւ համապատասխան ուսումնական նյութերի պակասն է: Այն նաեւ նշել է, որ ռուսերենի դասավանդման համար օգտագործվող դասագրքերը հրատարակվում են Ռուսաստանի Դաշնությունում: Հետեւաբար, այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել ռուսերենով ուսումնական նյութեր՝ Հայաստանում

իրականացվող կրթական ծրագրին համապատասխան:

359. Ուսուցիչների վերապատրաստման առնչությամբ երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ Հայաստանի իշխանությունները եւ Ռուսաստանի Դաշնությունը պարբերաբար կազմակերպում են ռուսերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

360. Ինչ վերաբերում է ուսումնական նյութերին, ապա Հայաստանի իշխանություններն ապահովել են հինգերորդ դասարանի համար նախատեսված դասագրքի՝ հայերենից ռուսերեն թարգմանությունը: Ի հավելումն, հանրակրթական դպրոցների ավելի բարձր դասարանների համար մաթեմատիկայի դասագրքերը թարգմանվել են ռուսերեն եւ անվճար բաժանվել աշակերտներին: Ընթացքի մեջ է գտնվում ռուսերենով նոր դասագրքերի հրատարակումը:

361. Աշխատանքային այցի ընթացքում ռուսերենով խոսողները նշեցին, որ ներկայումս չկան խնդիրներ ուսուցիչների վերապատրաստման եւ ուսումնական նյութերի առնչությամբ:

362. Փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ միջնակարգ կրթության ոլորտի բարեփոխումը շարունակվում է: Միջնակարգ կրթությունը տարանջատվել է կրտսեր եւ ավագ միջնակարգ կրթության. ընդ որում, վերջինս գործում է միայն առանձին դպրոցներում: Փորձագետների կոմիտեն խնդրում է իշխանություններին տեղեկատվություն տրամադրել, թե ինչպես է այս փաստն ազդում ռուսերենի ուսուցման վրա ավագ միջնակարգ դպրոցում:

Հոդված 9. Դատական մարմինները

Պարբերություն 1

Կողմերը պարտավորվում են՝ այն դատական փորձքներում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է փորձաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, այդ լեզուներից յուրաքանչյուրի հետ կապված իրավիճակին համապատասխան եւ պայմանով, որ սույն

պարբերությամբ նշված հարմարությունների կիրառությունը չհամարվի դատավորի կողմից որպես արդարադատության պարզաճ իրականացումը խոչընդոտող հանգամանք՝

Քրեական վարույթը

ա. ii. երաշխավորել մեղադրյալի՝ իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը

...

iv. պահանջի դեպքում՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով կազմել դատական վարույթներին առնչվող փաստաթղթեր:

363. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(ա) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով հանրությանը եւ դատարաններին փոքրամասնությունների լեզուները դատարաններում գործածելու իրավունքի մասին եւ իրազեկելով դատարաններին վարույթների ընթացքում փոքրամասնությունների լեզուներով փաստաթղթեր կազմելու պարտականության մասին: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:

364. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները): Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է դատարաններում ռուսերենի գործածման մի քանի դեպքի մասին: Այնուամենայնիվ, առկա տեղեկությունները բավարար չեն, որպեսզի Փորձագետների կոմիտեն

կարողանա դրանց հիման վրա տրամադրել եզրակացություն պարտավորությունը կատարելու մասին:

365. Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ռուսերենով խոսողներին տեղեկացնել ռուսերենը քրեական վարույթներում գործածելու հնարավորության մասին եւ հաջորդ պարբերական զեկույցում տրամադրել կոնկրետ տեղեկություններ դատարաններում ռուսերենի գործածման վերաբերյալ:

Քաղաքացիական վարույթները

բ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու:

366. Գնահատման երկրորդ զեկույցում, անդրադառնալով 9(1)(ա)(ii) հոդվածում նշված իր դիտարկումներին, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հանրությանը եւ դատարաններին՝ դատարաններում քաղաքացիական վարույթների ժամանակ փոքրամասնությունների լեզուները գործածելու իրավունքի մասին եւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ նաեւ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «**ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին**»:

367. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 82-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար: Աշխատանքային այցի ընթացքում

Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է դատարաններում ռուսերենի գործածման մի քանի դեպքի մասին: Այնուամենայնիվ, առկա տեղեկությունները բավարար չեն, որպեսզի Փորձագետների կոմիտեն կարողանա դրանց հիման վրա տրամադրել եզրակացություն պարտավորությունը կատարելու մասին:

368. Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ռուսերենով խոսողներին տեղեկացնել ռուսերենը քաղաքացիական վարույթներում գործածելու հնարավորության մասին եւ հաջորդ պարբերական զեկույցում տրամադրել կոնկրետ տեղեկություններ դատարաններում ռուսերենի գործածման վերաբերյալ:

Վարչական վարույթները

գ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, եւ (կամ)

iii. թույլատրել, որ փաստաթղթերը եւ վկայությունները ներկայացվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, անհրաժեշտության դեպքում՝ կատարելով բանավոր եւ գրավոր թարգմանություններ:

369. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն սույն պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

370. Համաձայն երրորդ պարբերական զեկույցի՝ վարչական վարույթներն իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 9(1)(բ)(ii) հոդվածի առնչությամբ կատարված իր դիտարկումներին եւ հանձնարարականներին

(տե՛ս 82-83-րդ պարբերությունները), որոնք համապատասխանաբար կիրառվում են:

371. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ ռուսերենով խոսողներին վարչական վարույթներում ռուսերենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

դ. քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ վերոհիշյալ (բ) եւ (գ) պարբերությունների (i) ու (iii) ենթապարբերությունների կիրառությունը եւ, ցանկացած դեպքում, բանավոր թարգմանիչների ծառայություններից եւ գրավոր թարգմանություններից օգտվելու անհրաժեշտությունը համապատասխան անձանց համար չառաջացնեն լրացուցիչ ծախսեր:

372. Գնահատման երկրորդ գեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

373. Քանի որ Փորձագետների կոմիտեն բազմիցս եւ ապարդյուն խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ, այն ստիպված է եզրակացնել, որ պարտավորությունը չի կատարվել:

Հոդված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Պետական մարմինները

Պարբերություն 1

Պեպության այն վարչական շրջաններում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

բ. բնակչության համար հասանելի դարձնել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ երկլեզու տարբերակներով,

374. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին խնդրեց պարզաբանել, թե արդյոք Ֆիոլետովո գյուղից բացի Հայաստանի այլ մասերում եւս վարչական բնույթի տեքստերը հասանելի են ռուսերենով:

375. Երրորդ պարբերական զեկույցում չեն տրամադրվում տեղեկություններ այս հարցի առնչությամբ: Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել էր, որ լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը հազվադեպ են հասանելի ռուսերենով կամ երկլեզու տարբերակներով: Ռուս փոքրամասնությունը գրավոր բողոք է ներկայացրել իշխանություններին այս խնդրի վերաբերյալ, որում հղում է արված Խարտիայի այս պարտավորությանը:

376. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին Հայաստանի համապատասխան մասերում լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը, եւ ձեւաթղթերը ռուսերենով կամ երկլեզու տարբերակներով հասանելի դարձնել բնակչության համար, ինչպես դա արվել է Ֆիոլետովոյում:

Տեղական եւ տարածքային մարմիններ

Պարբերություն 2

Այն տեղական եւ տարածքային մարմինների առումով, որոնց տարածքում ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել.

է. տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձեւերի գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնական լեզվում (լեզուներում) առկա անվանումների հետ համատեղ:

377. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը դիտանցման նախորդ փուլերում համարել է կատարված:

378. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ տեղական մարմինները պաշտոնապես ռուսական անվանում կրող վայրերում չեն գործածում ռուսական տեղանունների կիրիլատառ գրությունը (օրինակ՝ Ֆիոլետովո):

379. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է միայն մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝ գործածելու կամ ընդունելու տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձևերը ռուսերենով եւ տեղեկացնելու ձեռնարկված միջոցների մասին հաջորդ պարբերական զեկույցում:

Պարբերություն 5

Կողմերը պարտավորվում են շահագրգիռ փոքրամասնությունների պահանջով թույլատրել ազգանունների գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ՝ դրանց ընդունումը:

380. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը դիտանցման նախորդ փուլերում համարել է կատարված:

381. Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն ռուսերենով խոսողներից տեղեկացավ, որ ծննդյան վկայականներում եւ այլ համանման փաստաթղթերում իշխանությունները չեն ապահովում ռուսական ազգանունների ռուսատառ գրությունը:

382. Ելնելով նոր ստացված տեղեկություններից՝ Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին թույլատրել ազգանունների գործածությունը ռուսերենով կամ դրանց ընդունումը եւ ապահովել համապատասխան վարչական մարմինների կողմից այդպիսի անունների գործածումը, ինչպես նաեւ հայրանունների գործածումը ռուսերեն տարբերակով եւ ռուսատառ գրությամբ:

Հոդված 11. – Լրատվամիջոցներ

Պարբերություն 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության տարածքներում, հաշվի առնելով այդ լեզուներով խոսողների շահերը, ցանկացած լեզվի իրավիճակ, ինչպես նաև պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած ուղղակի կամ անուղղակի իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում եւ պահպանելով լրատվամիջոցների անկախության ու ինքնավարության սկզբունքը՝ կողմերը պարտավորվում են՝

ա. ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից հանրային ծառայությունների մատուցման գործառույթի շրջանակներում՝

...

iii. ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հեռարձակող կազմակերպությունները հաղորդումներ հեռարձակեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

383. Գնահատման առաջին զեկույցում Փորձագետների կոմիտեն համարել է, որ այս պարտավորությունը՝ ռադիոյի հետ կապված, կատարվել է, բայց չկարողացավ եզրակացություն տրամադրել հեռուստատեսության հետ կապված այս պարտավորության կատարված լինելու մասին: Փորձագետների կոմիտեն չի կարողացել այս խնդիրը պարզել դիտանցման երկրորդ փուլում:

384. Հայաստանի օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման ժամանակի սահմանափակումների առնչությամբ՝ Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 117-րդ պարբերության մեջ կատարված իր դիտարկումներին: Գործնական իրականացման առումով՝ ներկայումս Հայաստանի հանրային ռադիոյով յուրաքանչյուր օր ռուսերենով հեռարձակվում են 15 րոպե տեւողությամբ հաղորդումներ, ինչը կարծես թե բավարար չէ: Ի հավելումն, հանրային հեռուստատեսությամբ պարբերաբար հաղորդումներ են հեռարձակվում ռուսերենով, սակայն Փորձագետների կոմիտեն տեղեկություններ չունի այդ հեռարձակումների տեւողության եւ հաճախականության մասին:

385. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ

կատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հանրային հեռարձակողները ծրագրեր առաջարկեն ռուսերենով՝ այդ թվում ծրագրեր՝ նախատեսված երեխաների համար:

բ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումների հեռարձակումը

386. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ մասնավոր ռադիոընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում ռուսերենով:

387. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հեշտացնել մասնավոր ռադիոծրագրերի հեռարձակումը ռուսերենով:

գ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը,

388. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ մասնավոր հեռուստաընկերությունները պարբերաբար հաղորդումներ են հեռարձակում ռուսերենով: Ավելին, երեք ընկերություններ իրականացնում են ռուսերենով հեռարձակվող հեռուստահաղորդումների վերահեռարձակում: Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին խնդրում է հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ տրամադրել մասնավոր հեռուստաընկերությունների՝ ռուսերենով հաղորդումների հեռարձակման տեւողության եւ հաճախականության վերաբերյալ:

389. Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացվեն կամ հաշվի առնվեն լրատվամիջոցների ազատության ու բազմակարծության երաշխավորման համար պարասխանապուս այնպիսի մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծվել օրենքին համապատասխան:

390. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է արել ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

391. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը երաշխավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկված չեն, եւ այն հատուկ ուշադրություն չի դարձնում փոքրամասնությունների շահերին:

392. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն ռուսերենով խոսողների շահերը:

Հոդված 12. Մշակութային գործունեություն եւ մշակութային կառույցներ

Պարբերություն 1

Մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների, հատկապես՝ գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների եւ կինոթատրոնների, ինչպես նաեւ գրական ստեղծագործությունների ու ֆիլմերի արտադրության, ժողովրդական

արտահայտչաձևերի, փառապոհումների եւ մշակութային արդյունաբերության՝ ներառյալ, մասնավորապես, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, այդ լեզուների գործածության տարածքում կողմերը, պեպրական մարմինների՝ այս ոլորտում ունեցած իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում՝ պարտավորվում են՝

ա. խրախուսել այնպիսի արտահայտչաձևերի ու նախաձեռնությունների կիրառությունը, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաեւ ապահովել այդ լեզուներով ստեղծված ստեղծագործությունների հասանելիությունը տարբեր եղանակներով,

393. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված, քանի որ աջակցություն էր տրամադրվել մի շարք փառատոնների, թատերական ներկայացումների, գրական եւ այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը: Փորձագետների կոմիտեն ակնկալում է տեղեկություններ ստանալ մշակութային գործունեության ֆինանսավորման ծավալն ավելացնելու վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանություններին նաեւ կոչ է արել փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ համագործակցությամբ գնահատել նրանց կարիքները՝ հետագայում նրանց լեզուների ու մշակույթների պահպանմանը եւ զարգացմանն ուղղված միջոցառումների ու օժանդակության ծրագրերի մշակման համար:

394. Ինչպես Փորձագետների կոմիտեն նկատել է վերոնշյալ 7(1)(գ) հոդվածում՝ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալը մնացել է անփոփոխ այն չափով, որը թերեւս բավարար չէ՝ ռուսերենի կիրառությունը խթանելու համար:

395. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել ռուսերենով իրականացվող մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների համար իրենց կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալը:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Պարբերություն 2

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմիններն իրավասու են, Կողմերը, փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության փարածքներում, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են՝

...

բ. իրենց (պետական հատվածի) անմիջական հսկողությամբ՝ կազմակերպել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող միջոցառումներ տնտեսական եւ հասարակական ոլորտներում,

396. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել: Այն Հայաստանի իշխանություններին խնդրել է հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ տրամադրել ռուսերենի գործածման մասին հանրային ծառայությունների մատուցման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք հասարակական տրանսպորտը, փոստային ծառայությունները եւ օդանավակայաններն են:

397. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ ռուսերենը հաճախ է գործածվում պետական հատվածում, օրինակ՝ տրանսպորտի, փոստային ծառայությունների ոլորտում եւ օդանավակայանում:

398. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:

3.2.5 Եզդիերենը

399. Փորձագետների կոմիտեն մեկնաբանություններ չի ներկայացնի այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք գնահատման նախորդ զեկույցում համարվել են կատարված, եւ որոնց վերաբերյալ Փորձագետների կոմիտեն՝ դրանք կատարելու մասին արված իր եզրակացությունը վերանայելու համար հիմք հանդիսացող որեւէ նոր տեղեկություն չի ստացել: Այդ պարտավորությունները սահմանված են ստորեւ ներկայացված տեղեկություններում:

Հոդված 8. Կրթությունը

Ուսուցիչների վերապատրաստումը եւ ուսումնական նյութերը

400. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն նշել է, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցում հիմնական խոչընդոտը դեռեւս կրթական բոլոր մակարդակներում վերապատրաստված ուսուցիչների, ինչպես նաեւ համապատասխան ուսումնական նյութերի պակասն է: Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին **մշակել կառուցվածքային քաղաքականություն բոլոր մակարդակներում ուսուցիչների բավարար թվով վերապատրաստման դասընթացներ եւ եզդիերենով թարմացված ուսումնական նյութերի հասանելիություն ապահովելու համար:**

401. Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը, Հայաստանի իշխանությունները 2009 թվականին կազմակերպեցին վերապատրաստման դասընթացներ եզդիերենի տասն ուսուցչի համար: Փորձագետների կոմիտեն եզդիերենի ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաեւ հիմնական վերապատրաստման վերաբերյալ ավելի կոնկրետ տեղեկություններ չի ստացել եւ, հետեւաբար, դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք այդ տեղեկությունները տրամադրեն հաջորդ պարբերական զեկույցում: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ուսուցիչների պակասի պատճառներից մեկը զբաղվածության եւ վճարման գործող համակարգն է, որում հաշվի չեն առնվում փոքրամասնությունների լեզուների

դասավանդման առանձնահատկությունները (փոքր խմբերը, դասաժամերի անբավարար քանակը եւ, երբեմն էլ, դասընթացների կամընտրական բնույթը):

402. Ուսումնական նյութերի առումով՝ երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ Հայաստանի իշխանություններն աջակցել են առաջին, երկրորդ, վեցերորդ, յոթերորդ եւ ութերորդ դասարանների համար «Եզդիերեն» դասագրքի հրատարակմանը: Կազմման փուլում են գտնվում երրորդ, չորրորդ եւ իններորդ դասարանների համար դասագրքերը: Փորձագետների կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հրատարակել վերոնշյալ դասագրքերը եւ նաեւ ապահովել, որ բավարար չափով ուսումնական նյութեր հասանելի լինեն վավերացմամբ նախատեսված մյուս դասարանների համար:

403. Փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ միջնակարգ կրթության ոլորտի բարեփոխումը շարունակվում է: Միջնակարգ կրթությունը տարանջատվել է կրտսեր եւ ավագ միջնակարգ կրթության. ընդ որում, վերջինս գործում է միայն առանձին դպրոցներում: Փորձագետների կոմիտեն խնդրում է իշխանություններին տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչպես է այս փաստն ազդում եզդիերենի ուսուցման վրա ավագ միջնակարգ դպրոցում:

Պարբերություն 1

Այդպիսի լեզուների գործածության փարածքներում, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան եւ չհակասելով պետության պաշտոնական լեզվի (լեզուների) ուսուցման պահանջին՝ կրթության առնչությամբ Կողմերը պարտավորվում են.

Նախադպրոցական կրթությունը

- ա. i. մաթչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***
- ii. մաթչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ***

iii. կիրառել վերը նշված (i) եւ (ii) կետերով նախատեսված միջոցառումներից որեւէ մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար, կամ

iv. եթե պետական մարմինները նախադպրոցական կրթության ոլորտում չունեն անմիջական իրավասություն, աջակցել եւ (կամ) նպաստել վերոնշյալ i– iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը.

404. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ փոքրամասնությունների լեզուներով համապատասխան նախադպրոցական կրթության համակարգի ստեղծմանն աջակցելու եւ (կամ) նպաստելու համար:

405. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզրփերենով նախադպրոցական կրթություն կազմակերպելու հարցը կանոնավոր կերպով քննարկվել է տեղական իշխանությունների հետ, սակայն երեխաների թիվը չափազանց փոքր է՝ նման կրթություն կազմակերպելու համար: Արդյունքում, եզրփերենը դեռ չի գործածվում նախադպրոցական կրթության մեջ: Հաշվի առնելով, որ եզրի փոքրամասնությունը ակնհայտորեն Հայաստանի ամենախոշոր ազգային փոքրամասնությունն է, (2001 թվականի մարդահամարի տվյալներով՝ ավելի քան 40000 մարդ), Փորձագետների կոմիտեն անհավանական է համարում այն փաստը, որ չափազանց փոքր թվով ընտանիքներ են պոտենցիալ կերպով հետաքրքրված եզրփերենով իրականացվելիք նախադպրոցական կրթության մեջ: Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է, եզրի փոքրամասնության ներկայացուցիչների հետ համագործակցելով, այդ լեզվով խոսողների շրջանում խթանեն եզրփերենով կրթության հնարավորությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

406. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին

խրախուսել եզդիերենի գործածությունը նախադպրոցական կրթության ոլորտում:

Տարրական կրթությունը

- բ. i. մափչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. մափչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- iii. տարրական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ*
- iv. կիրառել վերը նշված (i) եւ (iii) կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի խնդրանք են ներկայացրել, եւ որոնց թիվը համարվում է բավարար:*

407. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

408. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ 355 աշակերտ է ներգրավված այն տարրական դպրոցներում, որտեղ ուսուցանվում է եզդիերենը: Աշխատանքային այցի ընթացքում Փորձագետների կոմիտեն տեղեկացվեց, որ լեզուն ուսուցանվում է շաբաթական երկու ժամ, 21 բնակավայրերում՝ որպես արտաձրագրային առարկա: Փորձագետների կոմիտեն համարում է, որ 355 աշակերտը չափազանց փոքր թիվ է եզդիերենով խոսողների ընդհանուր թվի համեմատ:

409. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, եզդիերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, ընդլայնել եզդիերենի ուսուցման շրջանակը՝ դարձնելով այն ուսումնական պլանի անբաժանելի մաս:

Միջնակարգ կրթությունը

- գ. i. մարչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ,**
- ii. մարչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ**
- iii. միջնակարգ կրթության շրջանակներում նախատեսել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ**
- iv. կիրառել վերը նշված i – iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընտանիքները այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար:**

410. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված:

411. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզրիերենը դասավանդվում է ընդհանուր թվով 435 աշակերտի Արմավիրի, Արարատի եւ Արագածոտնի մարզերի միջնակարգ դպրոցներում: Փորձագետների կոմիտեն տեղեկություններ չունի այն մասին, թե շաբաթական քանի դասաժամ է այն դասավանդվում: Փորձագետների կոմիտեն համարում է, որ 435 աշակերտը չափազանց փոքր թիվ է՝ եզրիերենով խոսողների ընդհանուր թվի համեմատ:

412. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին, համագործակցելով եզրիերենով խոսողների ներկայացուցիչների հետ, ընդլայնել եզրիերենի դասավանդման առաջարկը:

Տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը

- դ. i. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ**

ii. մարչելի դարձնել տեխնիկական եւ մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական եւ մասնագիտական կրթության շրջանակներում նախատեսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերը նշված i- iii կետերով նախատեսված միջոցառումներից մեկն առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք կամ, անհրաժեշտության դեպքում, որոնց ընտանիքները այդպիսի ցանկություն են հայտնում, եւ որոնց թիվը համարվում է բավարար:

413. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին շարունակել իրենց ջանքերը փոքրամասնությունների լեզուներով կամ այդ լեզուների դասավանդման առաջարկը տեխնիկական եւ մասնագիտական կրթության ծրագրում ապահովելու ուղղությամբ:

414. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզդիերենով կրթություն ստանալու համար դիմումներ չեն ներկայացվել տեխնիկական եւ մասնագիտական կրթության ոլորտներում: Երեւանի Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջի եզդիերենի բաժինը դադարեցրել է իր գործունեությունը՝ պայմանավորված դիմորդների թվի պակասով, սակայն բավարար դիմումների առկայության պարագայում կարող է վերսկսել այն: Հայաստանի իշխանությունները նշում են, որ իրենք հաճախ են կազմակերպում այցեր եզդիախոս քաղաքային համայնքներ եզդիերենով խոսողների՝ փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: 8(1)(ա) (iii) հոդվածի հիման վրա կատարված դիտարկումների համաձայն՝ եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը վավերացրել է այս պարտավորությունը, Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները, եզդիերենով խոսողների հետ համագործակցությամբ, պետք է եզդիերենով խոսողների շրջանում խթանեն եզդիերենով կրթություն ստանալու հնարավորությունը տեխնիկական եւ մասնագիտական դպրոցներում::

415. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, եզդիերենով խոսողների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, տեխնիկական եւ մասնագիտական կրթությունը եզդիերենով մատչելի դարձնելու կամ այդ լեզվի դասավանդումը որպես առարկա նախատեսելու համար:

Համալսարանական եւ բարձրագույն կրթությունը

- ե. i. մատչելի դարձնել համալսարանական եւ բարձրագույն կրթության մյուս տեսակները տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ*
- ii. հարմարություններ ապահովել այդ լեզուների՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկայի ուսուցման համար*
- iii. եթե բարձրագույն ուսումնական հաստատությունների ոլորտում պետության ունեցած դերակատարման հեղուկացումը հնարավոր չէ կիրառել i եւ ii ենթապարբերությունները, ապա խրախուսել եւ (կամ) թույլատրել համալսարանական կամ բարձրագույն կրթության այլ ձևերի ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ ապահովել հարմարություններ՝ որպես համալսարանական եւ բարձրագույն կրթության առարկա այդ լեզուներն ուսուցանելու համար,*

416. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է գործնականում չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին առավել մեծ ջանքեր գործադրել համալսարանական եւ բարձրագույն կրթությունը եզդիերենով մատչելի դարձնելու համար, մասնավորապես՝ ուսուցիչների վերապատրաստման ոլորտում:

417. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզդիերենը որպես պարտադիր առարկա դասավանդվում է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում, եթե այդ լեզվի ուսուցանումը համապատասխանում է ուսանողի ընտրած մասնագիտությանը: Եզդիերենը նաեւ դասավանդվում է Երեւանի մենեջմենթի համալսարանում: Փորձագետների կոմիտեն

որել տեղեկություն չի ստացել ուսուցիչների վերապատրաստման մասին:

418. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որպեսզի համալսարանական եւ բարձրագույն կրթությունը հասանելի լինի եզդիերենով, մասնավորապես՝ ուսուցիչների վերապատրաստման առումով:

Չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթությունը

գ. iii. աջակցել եւ (կամ) նպաստել Կոմիտեի լեզուների առաջարկի ապահովմանը՝ որպես չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության առարկաներ, եթե պետական մարմիններն անմիջական իրավասություն չունեն չափահասների համար նախատեսված կրթության ոլորտում:

419. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

420. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզդիերենով չափահասների համար նախատեսված կամ շարունակական կրթության պահանջարկ չկա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է այս պարտավորությունը, Փորձագետների կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է փոքրամասնություն կազմող եզդիների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, եզդիերենով խոսողների շրջանում ապահովեն չափահասների համար նախատեսված եւ շարունակական կրթության մեջ եզդիերենի առաջարկի խթանումը:

421. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Հողված 9. Դատական մարմինները

Պարբերություն 1

Կողմերը պարտավորվում են՝ այն դատական տարածքներում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, այդ լեզուներից յուրաքանչյուրի հետ կապված իրավիճակին համապատասխան եւ պայմանով, որ սույն պարբերությամբ նշված հարմարությունների կիրառությունը չհամարվի դատավորի կողմից որպես արդարադատության պարզաճ իրականացումը խոչընդոտող հանգամանք՝

Քրեական վարույթը

ա ii. երաշխավորել մեղադրյալի՝ իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը

422. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ 9(1)(ա)(ii) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով հանրությանը եւ դատարաններին փոքրամասնությունների լեզուները դատարաններում գործածելու իրավունքի մասին: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին»:

423. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

424. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին տեղեկացնել եզրփերենով խոսողներին եւ դատարաններին դատական վարույթներում եզրփերենի գործածության իրավունքի մասին:

iii. ապահովել, որ հարցումները եւ ապացույցները (գրավոր թե բանավոր) անընդունելի չհամարվեն զուտ այն պատճառով, որ դրանք ձեւակերպված են փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով

425. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

iv. պահանջի դեպքում՝ համապատասխան փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով կազմել դատական վարույթներին առնչվող փաստաթղթեր:

426. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է տեսականորեն կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ձեռնարկել նախաձեռնողական բնույթի միջոցներ՝ 9(1)(iv) հոդվածում նշված պարտավորության գործնականում կատարումն ապահովելու համար, օրինակ՝ իրազեկելով դատարաններին վարույթների ընթացքում փոքրամասնությունների լեզուներով փաստաթղթեր կազմելու պարտականության մասին:

427. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 72-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

428. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է տեսականորեն կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին, պահանջի դեպքում, դատարաններին տեղեկացնել եզրփերենով քրեական վարույթների հետ կապված փաստաթղթեր կազմելու իրենց պարտականության մասին:

Քաղաքացիական վարույթները

բ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջև կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու:

429. Գնահատման երկրորդ զեկույցում, անդրադառնալով 9(1)(ա)(ii) հոդվածում նշված իր դիտարկումներին, Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին տեղեկացնել հանրությանը եւ դատարաններին՝ դատարաններում քաղաքացիական վարույթների ժամանակ փոքրամասնությունների լեզուները գործածելու իրավունքի մասին եւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ նաեւ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու համար: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին «**ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում եւ տեղեկացնել դատարաններին ու հանրությանը Խարտիայի 9-րդ հոդվածին առնչվող իրավունքների եւ պարտականությունների մասին**»:

430. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում այդ պարտավորությունների գործնական իրականացման վերաբերյալ նախկինում կատարված դիտարկումներին եւ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին իր հանձնարարականներին (տե՛ս 82-րդ, 74-րդ պարբերությունները), որոնք կիրառվում են համապատասխանաբար:

431. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հստակեցնելու իրավիճակը ազգային օրենսդրության մեջ եւ տեղեկացնել եզրիերենով խոսողներին քաղաքացիական վարույթներում եզրիերենի գործածման իրենց իրավունքի մասին:

Վարչական վարույթները

գ. ...

ii. թույլատրել, որ դատարանի առջեւ կանգնելու դեպքում դատավարության կողմը խոսի իր փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, եւ (կամ)

iii. թույլատրել, որ փաստաթղթերը եւ վկայությունները ներկայացվեն փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, անհրաժեշտության դեպքում՝ կատարելով բանավոր եւ գրավոր թարգմանություններ:

432. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն սույն պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

433. Համաձայն երրորդ պարբերական զեկույցի՝ վարչական վարույթներն իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հետեւաբար, Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 9(1)(բ)(ii) հոդվածի (տե՛ս 82-83–րդ պարբերությունները) առնչությամբ կատարված իր դիտարկումներին եւ հանձնարարականներին, որոնք համապատասխանաբար կիրառվում են:

434. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներպետական օրենսդրության մեջ իրավիճակը հստակեցնելու եւ եզրիերենով խոսողներին վարչական վարույթներում եզրիերենը գործածելու իրենց իրավունքի մասին տեղեկացնելու համար:

դ. քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ վերոհիշյալ (բ) եւ (գ) պարբերությունների (i) եւ (iii) ենթապարբերությունների կիրառությունը եւ, ցանկացած դեպքում, բանավոր թարգմանիչների ծառայություններից եւ գրավոր թարգմանություններից օգտվելու անհրաժեշտությունը համապատասխան անձանց համար չառաջացնեն լրացուցիչ ծախսեր:

435. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել:

436. Քանի որ Փորձագետների կոմիտեն բազմիցս եւ ապարդյուն խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ, այն ստիպված է եզրակացնել, որ պարտավորությունը չի կատարվել:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հասանելի դարձնել ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը, ինչպես նաեւ այն ակտերի, որոնք վերաբերում են մասնավորապես այդ լեզուներով խոսողներին, եթե դրանք այլ կերպ չեն տրամադրվում:

437. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի գործընթաց, որի նպատակն է ազգային ամենակարեւոր օրենսդրական ակտերի տեքստերը հասանելի դարձնել եզդիերենով:

438. Երրորդ պարբերական զեկույցում նշվում է, որ ազգային օրենսդրական ակտերի տեքստերը չեն թարգմանվել եզդիերեն ֆինանսական միջոցների եւ ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների կողմից նման պահանջարկի բացակայության պատճառով: Բացի դրանից, իշխանությունները նշել են, որ դժվարություններ են առաջացել Սահմանադրությունը եզդիերեն թարգմանելիս՝ կապված եզդիերեն իրավաբանական եզրույթների հետ: Այս տեղեկությունների համաձայն՝ Փորձագետների կոմիտեն ընդգծում է, որ այս պարտավորության նպատակը ոչ միայն ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողներին իրենց լեզվով ազգային օրենսդրական ակտերի տեքստերի մասին տեղեկացնելն է, այլ նաեւ այդ լեզվով իրավաբանական եզրութաբանություն մշակելը եւ կիրառելը: Իրավական ոլորտում փոքրամասնության լեզուների գործածությունը կարեւոր նշանակություն ունի ազգային փոքրամասնության վարկանիշը հասարակության մեջ բարձրացնելու եւ հանրային կյանքի մի շարք ոլորտներում դրա կիրառությունն ապահովելու առումով:

439. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին նախաձեռնել մի

գործընթաց, որի նպատակն է III բաժնի լեզուներով գրված ազգային օրենսդրական ամենակարեւոր ակտերի տեքստերը հասանելի դարձնել եզրիերենով:

Հոդված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Պետական մարմինները

Պարբերություն 1

Պետության այն վարչական շրջաններում, որտեղ ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, եւ յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ Կողմերը, ողջամիտ հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

ա ...

iv. ապահովել, որ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. ապահովել, որ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողները կարողանան սահմանված կարգով փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով,

440. (ա)(iv) եւ (ա)(v) պարտավորություններն այլընտրանքային տարբերակներ են: Քանի որ Հայաստանն ընտրել է (ա)(iv) տարբերակը, (ա)(v) տարբերակն ավելորդ է դառնում: Հավատարիմ մնալով իր գործելակերպին՝ Փորձագետների կոմիտեն կուսումնասիրի միայն (ա)(iv) տարբերակը:

441. Գնահատման իր երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված: Այն, այնուամենայնիվ, կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ 10-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների գործնական կատարումը խթանելու համար:

442. Դիտանցման երրորդ փուլում Փորձագետների կոմիտեն եզրինների նկատմամբ այս պարտավորության կիրառման վերաբերյալ որեւէ լրացուցիչ տեղեկություն չի ստացել եւ դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք այդ տեղեկությունները տրամադրեն հաջորդ պարբերական զեկույցում:

բ. բնակչության համար հասանելի դարձնել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերը եւ ձեւաթղթերը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ երկլեզու տարբերակներով,

443. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

444. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ բնակչությանը հասանելի չէ լայնորեն կիրառվող որեւէ վարչական բնույթի տեքստ կամ ձեւաթուղթ եզրիերենով կամ երկլեզու տարբերակներով:

445. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին՝ բնակչության համար ապահովել լայնորեն կիրառվող վարչական բնույթի տեքստերի եւ ձեւաթղթերի հասանելիությունը եզրիերենով կամ երկլեզու տարբերակներով:

Պարբերություն 2

Այն տեղական եւ տարածքային մարմինների առումով, որոնց տարածքում ստորեւ նշված միջոցների կիրառությունը հիմնավորվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածող բնակիչների թվով, Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել.

բ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների՝ այդ լեզուներով բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնելու հնարավորությունը,

446. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ. տեղական իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովների

ընթացքում իրականացվող քննարկումների ժամանակ՝ միեւնույն ժամանակ չբացառելով պետության պաշտոնական լեզվի (լեզուների) գործածումը,

447. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

է. տեղանունների ավանդական եւ ճշգրիտ ձեւերի գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ դրանց ընդունումը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնական լեզվում (լեզուներում) առկա անվանումների հետ համատեղ:

448. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց կողմից մատուցված հանրային ծառայությունների առնչությամբ, այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան՝ կողմերը, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են.

զ. թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողներին հայտ ներկայացնել այդ լեզուներով

449. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 4

Իրենց կողմից ընդունված՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների դրույթները գործողության մեջ դնելու նպատակով՝ կողմերը պարտավորվում են ձեռնարկել հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

զ. հնարավորության սահմաններում բավարարել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ:

450. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին մշակել կառուցվածքային քաղաքականություն՝ համապատասխան փոքրամասնության լեզվին տիրապետող հանրային ծառայողների շարժունությունը խթանելու համար:

451. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ Քաղաքացիական ծառայության խորհուրդն առաջարկել է թափուր աշխատատեղերի համար մրցույթներում նախապատվությունը տալ, մասնավորապես, եզդիերենին տիրապետող թեկնածուներին:

452. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին հնարավորության սահմաններում բավարարել եզդիերենին տիրապետող հանրային ծառայողների խնդրանքները՝ կապված տվյալ լեզվի գործածության տարածքում պաշտոնի նշանակվելու հետ, եւ հաջորդ պարբերական զեկույցում նշել, թե գործնականում ինչ միջոցներ են կիրառվել:

Պարբերություն 5

Կողմերը պարտավորվում են շահագրգիռ փոքրամասնությունների պահանջով թույլատրել ազգանունների գործածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ՝ դրանց ընդունումը:

453. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Հոդված 11. Լրատվամիջոցները

Պարբերություն 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության տարածքներում, հաշվի առնելով այդ լեզուներով խոսողների շահերը, ցանկացած լեզվի իրավիճակ, ինչպես նաեւ պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած ուղղակի կամ անուղղակի իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի

դերակատարության սահմաններում եւ պահպանելով լրատվամիջոցների անկախության ու ինքնավարության սկզբունքը՝ Կողմերը պարտավորվում են՝

ա. ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից հանրային ծառայությունների մատուցման գործառույթի շրջանակներում՝

...

iii. ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հեռարձակող կազմակերպությունները հաղորդումներ հեռարձակեն փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

454. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է մասամբ կատարված: Այն հորդորել է Հայաստանի իշխանություններին մշակել համակարգեր, որոնք կխթանեն հեռուստահաղորդումների հեռարձակումը եզդիերենով: Ավելին, Նախարարների կոմիտեն առաջարկել է Հայաստանին միջոցներ ձեռնարկել՝ **հեռուստատեսությամբ եզդիերենի գործածությունը բարելավելու համար:**

455. Հայաստանի օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման տեւողության սահմանափակումների առնչությամբ՝ Փորձագետների կոմիտեն հղում է կատարում 117-րդ պարբերության մեջ կատարված իր դիտարկումներին: Գործնական իրականացման առումով՝ Հայաստանի հանրային ռադիոյով յուրաքանչյուր օր եզդիերենով հեռարձակվում են 15 րոպե տեւողությամբ հաղորդումներ: Հանրային հեռուստատեսությամբ հաղորդումներ չեն հեռարձակվում եզդիերենով:

456. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված՝ հանրային ռադիոյի առնչությամբ եւ չկատարված՝ հանրային հեռուստատեսության առնչությամբ:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի հանրային հեռարձակողները հեռուստատեսային, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված ծրագրեր առաջարկեն եզդիերենով:

բ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումների հեռարձակումը

457. Մասնավոր ռադիոընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում եզրփերենով:

458. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել եզրփերենով մասնավոր ռադիոհաղորդումների հեռարձակումը:

գ. ...

ii. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը,

459. Մասնավոր հեռուստաընկերությունները հաղորդումներ չեն հեռարձակում եզրփերենով:

460. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին խթանել եզրփերենով մասնավոր հեռուստահաղորդումների կանոնավոր հեռարձակումը:

ե. i. խրախուսել եւ (կամ) խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով առնվազն մեկ թերթի լույս ընծայումը եւ (կամ) դրա հետագա գործունեությունը, կամ

461. Փորձագետների կոմիտեն ընդգծում է այն հանգամանքը, որ «թերթը», ըստ դրա ընդհանրական մեկնաբանության, այս պարտավորության շրջանակներում պետք է հրատարակվի առնվազն շաբաթական պարբերականությամբ:¹⁷

¹⁷ Տե՛ս, օրինակ, Փորձագետների կոմիտեի՝ Ռումինիայի վերաբերյալ առաջին զեկույցի (ECRML(2012)3) 174-րդ պարբերությունը

462. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

463. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզրփերենով հրատարակվող թերթ դեռևս գոյություն չունի:

464. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խորհրդակցել եզրփերենով խոսողների ներկայացուցիչների հետ այն մասին, թե ինչպես պետք է այս պարտավորությունն իրականացնել գործնականում:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել եզրփերենով հրատարակվող առնվազն մեկ թերթի լույս ընծայումը:

Պարբերություն 2

Կողմերը պարտավորվում են երաշխավորել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների անարգել և ուղիղ հեռարձակումը փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ դրան համարժեք լեզվով, ինչպես նաև չխոչընդոտել հարեան երկրներից ռադիոհեռուստատեսային հաղորդումների՝ այդպիսի լեզվով վերահեռարձակումը: Նրանք պարտավորվում են նաև բացառել որևէ սահմանափակման կիրառումը փարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի հետ նույնական կամ նույնատիպ լեզվով հրատարակվող տպագիր մամուլում խոսքի ազատության ու տեղեկությունների ազատ շրջանառության նկատմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ազատությունների ապահովումը սերտորեն կապված է որոշակի պարտականությունների և պատասխանատվության հետ, այն կարող է ենթակա լինել այնպիսի վարչարարության, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, փարածաշրջանային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարքերի պահպանման, այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի ստացված տեղեկության արտահոսքի կանխման կամ դատական իշխանության հեղինակության ու

անկողմնակալության պահպանման համար:

465. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Կողմերը պարտավորվում են ապահովել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացվեն կամ հաշվի առնվեն լրատվամիջոցների ազատության ու բազմակարծության երաշխավորման համար պատասխանատու այնպիսի մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծվել օրենքին համապատասխան:

466. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն Հայաստանի իշխանություններին կոչ է արել ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը:

467. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը երաշխավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկված չեն, եւ այն հատուկ ուշադրություն չի դարձնում փոքրամասնությունների շահերին:

468. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովում հաշվի առնվեն եզրիերենը գործածողների շահերը:

Հոդված 12. Մշակութային գործունեություն եւ մշակութային կառույցներ

Պարբերություն 1

Մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների, հատկապես՝ գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների եւ կինոթատրոնների, ինչպես նաեւ գրական ստեղծագործությունների ու ֆիլմերի արտադրության, ժողովրդական արտահայտչաձևերի, փառատոնների եւ մշակութային արդյունաբերության՝ ներառյալ, մասնավորապես, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, այդ լեզուների գործածության տարածքում Կողմերը, պետական մարմինների՝ այս ոլորտում ունեցած իրավասությունների, լիազորությունների կամ որոշակի դերակատարության սահմաններում՝ պարտավորվում են՝

ա. խրախուսել այնպիսի արտահայտչաձևերի ու նախաձեռնությունների կիրառությունը, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաեւ ապահովել այդ լեզուներով ստեղծված ստեղծագործությունների հասանելիությունը տարբեր եղանակներով,

469. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է կատարված, քանի որ աջակցություն էր տրամադրվել մի շարք փառատոնների, թատերական ներկայացումների, գրական եւ այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը: Փորձագետների կոմիտեն ակնկալում է տեղեկություններ ստանալ մշակութային գործունեության ֆինանսավորման ծավալն ավելացնելու վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն նաեւ խրախուսել է Հայաստանի իշխանություններին փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ միասին իրականացնել նրանց կարիքների գնահատում՝ հետագայում վերջիններիս լեզուների եւ մշակույթների պահպանման ու զարգացման համար մեխանիզմներ եւ աջակցության ծրագրեր մշակելու նպատակով:

470. Ինչպես փորձագետների կոմիտեն նկատել է վերոնշյալ 7(1)(գ) հոդվածում՝ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալը մնացել է անփոփոխ այն չափով, որը թերեւս բավարար չէ եզդիերենի կիրառությունը խթանելու համար:

471. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է մասամբ կատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել

եզդիերենով իրականացվող մշակութային գործունեության եւ մշակութային կառույցների համար իրենց կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալը:

դ. ապահովել, որ տարատեսակ մշակութային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց աջակցելու համար պատասխանատու մարմինները պատշաճ կերպով հաշվի առնեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ մշակույթների իմացությունն ու գործածումը՝ ընդգրկելով դրանք իրենց կողմից կամ իրենց աջակցությամբ կազմակերպվող միջոցառումներում:

472. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

զ. խրախուսել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն գործածողների համայնքի ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը մշակութային կառույցների տրամադրման եւ մշակութային միջոցառումների պլանավորման գործընթացին,

473. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 2

Այն տարածքներից բացի, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներն ունեն ավանդական գործածություն, այլ տարածքների առումով՝ Կողմերը, նախորդ պարբերությանը համապատասխան, պարտավորվում են թույլատրել եւ խրախուսել իրականացնելու համապատասխան մշակութային գործունեություն կամ տրամադրել համապատասխան մշակութային կառույցներ, եթե դա հիմնավորվում է տվյալ տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թվով:

474. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Պարբերություն 3

Արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս՝ Կողմերը

պարտավորվում են համապատասխան պայմաններ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւ դրանց միջոցով արտահայտվող մշակույթների համար:

475. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

476. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում է, որ ստանձնելով այս պարտավորությունը, Հայաստանի իշխանությունները պարտավորվում են Հայաստանում փոքրամասնությունների լեզուների առկայության փաստն արտացոլել արտերկրում Հայաստանը ներկայացնող միջոցառումներում:

477. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին արտերկրում իրենց մշակութային քաղաքականությունն իրականացնելիս, ապահովել համապատասխան պայմաններ՝ եզդիերենի եւ այդ լեզվով արտահայտվող մշակույթի համար:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Պարբերություն 1

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ՝ կողմերը պարտավորվում են ամբողջ երկրի տարածքում՝

...

բ. արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում եւ առանձին փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը՝ առնվազն նույն լեզուն գործածողների շրջանում բացառող կամ սահմանափակող որեւէ դրույթ ներառելը

478. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

գ հակազդել տնտեսական եւ հասարակական գործունեության ոլորտում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը խոչընդոտող գործելակերպին,

479. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

դ. խթանել եւ (կամ) խրախուսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը վերոնշյալ ենթապարբերություններով սահմանված միջոցներից տարբեր՝ այլ միջոցներով:

480. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված: Այն կոչ է արել Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել եզդիերենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

481. Երրորդ պարբերական զեկույցում գետեղված՝ այս պարտավորությանն առնչվող տեղեկությունները վերաբերում են ոչ թե տնտեսական ու հասարակական, այլ մշակութային գործունեությանը: Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել որեւէ միջոցառման մասին, որի հիման վրա այս պարտավորությունը կհամարվեր կատարված:

482. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն հորդորում է Հայաստանի իշխանություններին խթանել եւ (կամ) խրախուսել եզդիերենի գործածությունը տնտեսական եւ հասարակական գործունեություն իրականացնելիս:

Պարբերություն 2

Տնտեսական եւ հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմիններն իրավասու են, Կողմերը, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության տարածքներում, ողջամիտ հնարավորության սահմաններում, պարտավորվում են՝

...

բ. իրենց (պեղական հատվածի) անմիջական հսկողությամբ՝ կազմակերպել փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող միջոցառումներ տնտեսական եւ հասարակական ոլորտներում,

483. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այդ պարտավորության կատարման մասին եզրակացություն անելու համար հնարավորություն չի ունեցել: Այն Հայաստանի իշխանություններին խնդրել է հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ տրամադրել եզդիերենի գործածման մասին հանրային ծառայությունների մատուցման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք հասարակական տրանսպորտը, փոստային ծառայությունները եւ օդանավակայաններն են:

484. Փորձագետների կոմիտեն երրորդ պարբերական զեկույցում առկա տեղեկություններից եզրակացնում է, որ համապատասխան որեւէ գործողություն չի իրականացվել:

485. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված: Այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին իրականացնել եզդիերենի գործածումը խթանող միջոցառումներ իրենց անմիջական հսկողության տակ գտնվող՝ տնտեսական եւ հասարակական ոլորտներում, ինչպես օրինակ՝ տրանսպորտի եւ փոստային ծառայությունների ոլորտներում:

գ. ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողներին ընդունելու եւ նրանց բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

486. Գնահատման երկրորդ զեկույցում Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարել է չկատարված:

487. Երրորդ պարբերական զեկույցի համաձայն՝ եզդիերենը հիվանդանոցներում չի գործածվում: Փորձագետների կոմիտեն եւս մեկ անգամ նշում

է, որ Հայաստանի ստանձնած պարտավորության համաձայն՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ հիվանդանոցների կամ ծերանոցների անձնակազմի անդամները (բժիշկները, բուժքույրերը եւ այլք) ունենան անհրաժեշտ հմտություններ խնամքի կարիք ունեցող՝ որեւէ փոքրամասնության պատկանող անձանց սպասարկումն այդ անձանց մայրենի լեզվով իրականացնելու համար: Հայաստանի իշխանությունները պետք է ուղիներ գտնեն՝ այս պարտավորությունն առավել համակարգված մոտեցման կիրառմամբ աստիճանաբար իրականացնելու համար:

488. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է չկատարված:

Փորձագետների կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ սոցիալական խնամքի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք հիվանդանոցները, ծերանոցները եւ հանրակացարաններն են, հնարավորություն ունենան վարառողջության, ծերության կամ այլ պարճառներով խնամքի կարիք ունեցող՝ եզրիերենը գործածողներին ընդունելու եւ նրանց բժշկական սպասարկումն իրականացնելու այդ անձանց մայրենի լեզվով:

Հոդված 14. Անդրսահմանային կապերը

Կողմերը պարտավորվում են՝

ա. կիրառել գոյություն ունեցող երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերը, որոնցով նրանք պարտավորություններ են ստանձնում այն պետությունների նկատմամբ, որոնցում այդ լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեւով, կամ, անհրաժեշտության դեպքում, կնքել այդպիսի համաձայնագրեր՝ համապատասխան պետություններում միեւնույն լեզուն գործածողների միջեւ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման եւ հարատեւ կրթության բնագավառներում կապերի հաստատմանը նպաստելու նպատակով,

489. Ինչպես դիտանցման նախորդ փուլում, այնպես էլ այժմ այս

պարտավորությունը համարվում է կատարված:

բ. հոգույր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ իթանել եւ (կամ) ընդլայնել անդրսահմանային համագործակցությունը, մասնավորապես, տարածաշրջանային կամ տեղական այն մարմինների միջեւ, որոնց տարածքում միեւնույն լեզուն գործածվում է նույնական կամ նույնատիպ ձեւով:

490. Ինչպես դիտանցման նախորդ փուլերում, այնպես էլ այժմ այս պարտավորությունը համարվում է կատարված:

Գլուխ 4. Փորձագետների կոմիտեի եզրակացությունները դիտանցման երրորդ փուլում

Ա. Փորձագետների կոմիտեն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի իշխանություններին աշխատանքային այցի նախապատրաստման եւ կազմակերպման առումով բարձր մակարդակի համագործակցության համար: Փորձագետների կոմիտեն ավստասանքով է նշում այն մասին, որ երրորդ պարբերական զեկույցը ներկայացվել է գրեթե 20 ամիս ուշացումով եւ որ զեկույցը ոչ բոլոր դեպքերում էր պարունակում Խարտիայի կիրառության վերաբերյալ համապարփակ եւ թարմացված տեղեկություններ:

Բ. Փորձագետների կոմիտեն տեղյակ է այն ֆինանսական դժվարությունների մասին, որոնց առջեւ կանգնում են Հայաստանի իշխանությունները Խարտիայի որոշ պարտավորություններ կատարելիս եւ շնորհակալություն է հայտնում նրանց այն ջանքերի համար, որոնք նրանք գործադրում են՝ չնայած տնտեսական դժվար պայմաններին: Այնուամենայնիվ, Հայաստանի իշխանությունները շատ սահմանափակ ֆինանսական միջոցներ են տրամադրում Ազգային փոքրամասնությունների հարցերը համակարգող խորհրդում ներկայացված ազգային փոքրամասնություններին:

Գ. Հայաստանը մշակել է իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակ իր տարածքում գործաձվող փոքրամասնությունների լեզուները պահպանելու եւ դրանց ավելի լայն գործածությանը խթանելու համար: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն եզրակացրել է, որ իրավական շրջանակը թերի է Խարտիայով կարգավորվող մի շարք ոլորտների առնչությամբ: Համակարգված քաղաքականությունն անհրաժեշտ է կրթության ոլորտում, դատական համակարգում, վարչական մարմինների հետ հաղորդակցվելիս, հասարակական եւ տնտեսական կյանքում փոքրամասնությունների լեզուների գործնական գործածումն ապահովելու համար :

Դ. Կրթության ոլորտում ռուսերենի իրավիճակը կարծես թե բավարար է: Հայաստանի իշխանությունները նոր ուսումնական նյութեր են հրատարակել որոշ փոքրամասնությունների լեզուներով: Այնուամենայնիվ, չնայած գործադրված

ջանքերին, դեռեւս առկա են թերություններ: Դեռեւս բացակայում են ամբողջ ուսումնական պլանի համար նախատեսված ուսումնական նյութեր՝ ասորերենով, հունարենով, քրդերենով եւ եզդիերենով, ինչպես նաեւ նկատվում է լավ վերապատրաստված ուսուցիչների պակաս: Սա մասամբ պայմանավորված է զբաղվածության եւ վճարման առկա համակարգով, որտեղ հաշվի չեն առնվում փոքրամասնությունների լեզուների ուսուցման առանձնահատկությունները: Բացի դրանից, նախադպրոցական կրթության ծրագրում հիմնականում ներառված չեն փոքրամասնությունների լեզուները:

Ե. Իշխանությունները հստակեցրել են, որ դատական վարույթների ընթացքում բանավոր եւ գրավոր թարգմանությունը տրամադրվում է անվճար: Այնուամենայնիվ, լիովին պարզ չէ, թե իրականում որ փոքրամասնությունների լեզուներն են գործածվում քրեական, քաղաքացիական եւ վարչական դատարաններում: Դատարաններում փոքրամասնությունների լեզուների գործածմանն առնչվող ներպետական օրենսդրությունը պետք է հստակեցվի: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ դատարաններում այս լեզուների գործածումը խթանելու, ինչպես նաեւ դատարանների աշխատակազմի եւ հանրության համար տեղեկատվական քարոզարշավներ իրականացնելու համար:

2. Փոքրամասնությունների լեզուները գրեթե չեն գործածվում վարչական մարմինների հետ հաղորդակցվելիս: Համակարգված քաղաքականությունն անհրաժեշտ է՝ հեշտացնելու համար 10-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների գործնական կատարումը, ինչպես նաեւ ապահովելու համար, որ փոքրամասնությունների լեզուները գործածվեն տեղական եւ տարածքային մարմինների հետ հաղորդակցվելիս այն շրջաններում, որտեղ առկա են փոքրամասնությունների լեզուներով խոսողներ:

Է. Փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների հետ կապված ոչ բավարար իրավիճակը դեռեւս չի շտկվել: Պետք է ապահովվի փոքրամասնությունների լեզուների գործածումը ռադիոյով եւ, հատկապես, հեռուստատեսությամբ: Ռուսերենով տպագրվում են թերթեր, սակայն չկան այլ փոքրամասնության լեզուներով տպագրվող շաբաթաթերթեր:

Ը. Մշակույթի ոլորտում անհրաժեշտ է բարձրացնել մշակութային գործունեության համար հատկացվող ֆինանսական աջակցության ծավալը:

Թ. Փոքրամասնությունների լեզուները տնտեսական եւ հասարակական կյանքում գրեթե չեն գործածվում: Մինչդեռ ուսերենը լայնորեն գործածվում է:

Ժ. Հիմնվելով նոր տեղեկությունների վրա՝ Փորձագետների կոմիտեն համարում է, որ ուկրաիներենը եւ գերմաներենը Խարտիայի իմաստով տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ են եւ, ըստ այդմ, կարգավորվում են II մասով: Իշխանությունները պետք է նոր պարզաբանումներ ներկայացնեն այն մասին, թե արդյոք վրացերենը, լեհերենը եւ իդիշը համապատասխանում են Խարտիայում նշված՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների սահմանմանը:

ԺԱ) II մասի առումով՝ Հայաստանի իշխանությունները տրամադրում են ֆինանսական աջակցություն՝ փոքրամասնությունների լեզուներով նորությունների թողարկումների, գրքերի հրատարակման եւ մշակութային միջոցառումների անցկացման համար: Գերմաներենը պետական կրթական համակարգում ուսուցանվում է որպես կամընտրական առարկա եւ այն կարելի է սովորել համալսարանում: Բացի դրանից, փոքրամասնությունների ընկերակցությունները կազմակերպում են այսպես կոչված կիրակնօրյա դպրոցներ:

Խարտիայի 16.3 հոդվածի համաձայն՝ Հայաստանի կառավարությունը հրավիրվել է մեկնաբանելու սույն զեկույցի բովանդակությունը: Ստացված մեկնաբանությունները կցված են II հավելվածին:

Սույն զեկույցի եւ իր կողմից արված եզրահանգումների հիման վրա՝ Փորձագետների կոմիտեն Նախարարների կոմիտե է ներկայացրել Հայաստանին ուղղվելիք հանձնարարականների հետ կապված իր առաջարկությունները: Միեւնույն ժամանակ այն շեշտում է, որ Հայաստանի իշխանությունները, ի հավելումն այս ընդհանուր հանձնարարականների, պետք է հաշվի առնեն զեկույցի հիմնական մասում ներառված առավել մանրամասն դիտարկումները:

Նախարարների կոմիտեն 2014 թվականի հունվարի 15-ի կայացած իր 1188-րդ

Նիստի ընթացքում ընդունել է Հայաստանին ուղղված իր հանձնարարականը, որի մասին նշված է սույն Փաստաթղթի Բ մասում:

Հավելված I. Վավերացման փաստաթուղթ



Հայաստան

Վավերացման փաստաթղթում ներառված հռչակագիր, որն ի պահ է հանձնվել 2002 թվականի հունվարի 25-ին, բնօրինակը՝ անգլերեն

Խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտատարում է, որ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի իմաստով, Հայաստանի Հանրապետությունում փոքրամասնությունների լեզուներն են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը եւ քրդերենը:

Ընդգրկված ժամանակահատվածը՝ 01.05.2002 թվական

Վերոնշյալ հայտարարությունը վերաբերում է հետեւյալ հոդվածին (հոդվածներին)՝ 3

Վավերացման փաստաթղթում ներառված հռչակագիր, որն ի պահ է հանձնվել 2002 թվականի հունվարի 25-ին, բնօրինակը՝ անգլերենով

Խարտիայի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ պարտավորվում է կիրառել Խարտիայի հետեւյալ դրույթները ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի եւ քրդերենի վերաբերյալ՝

Հոդված 8. Կրթությունը

Ենթապարբերություններ 1(ա)(iv), 1(բ)(iv), 1(գ)(iv), 1(դ)(iv), 1(ե)(iii), 1(զ)(iii):

Հոդված 9. Դատական մարմինները

Ենթապարբերություններ 1(ա)(ii), (iii), (iv), 1(բ)(ii), 1(գ)(ii) եւ (iii) 1(դ):

Պարբերություն 3.

Հողված 10. Վարչական մարմինները եւ հանրային ծառայությունները

Ենթապարբերություններ 1(ա)(iv) եւ (v), 1(բ), 2(բ), 2(գ), 2(է), 3(գ), 4(գ):

Պարբերություն 5.

Հողված 11. Լրատվամիջոցներ

Ենթապարբերություններ՝ 1(ա)(iii), 1(բ)(ii), 1(գ)(ii), 1(ե):

Պարբերություններ 2 եւ 3:

Հողված 12. Մշակութային գործունեություն եւ մշակութային կառույցներ

Ենթապարբերություններ 1.ա.դ.գ. (*)

Պարբերություններ 2 եւ 3:

Հողված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Ենթապարբերություններ 1(բ), 1(գ), 1(դ), 2(բ), 2 (գ):

Հողված 14. Անդրսահմանային կապերը

Պարբերություններ (ա) եւ (բ):

[(*) Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից ուղարկված 2004 թվականի մարտի 23-ի վերբալ հայտագրում ներառված հռչակագիրը, որը փոխանցվել է Հայաստանի մշտական ներկայացուցչության 2004 թվականի մարտի 31-ի վերբալ հայտագրով՝ գրանցվել է Գլխավոր քարտուղարությունում 2004 թվականի ապրիլի 1-ին, բնօրինակը՝անգլերեն

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Գլխավոր քարտուղարության ուշադրությունը հրավիրում է Հայաստանի՝ Խարտիայի վավերացման փաստաթղթում առկա տեխնիկական սխալի վրա:

Վավերացման փաստաթուղթն ի պահ հանձնելիս՝ տեղի է ունեցել թարգմանության սխալ, այն է՝ Հայաստանը ստանձնել է Խարտիայի 12-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները, որում ներառված է եղել (գ)

Ենթապարբերությունը: Իրականում, Ազգային ժողովի 2001 թվականի դեկտեմբերի 28-ի N-247-2 որոշմամբ, Հայաստանը ստանձնել է 12-րդ հոդվածի (դ) ենթապարբերությամբ սահմանված պարտավորությունը:]

Ընդգրկված ժամանակահատվածը՝ 01.05.2002 թվական -

Վերոնշյալ հայտարարությունը վերաբերում է հետևյալ հոդվածին (հոդվածներին)՝ 2

Հավելված II Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները

Հոդված 8. Կրթությունը

47. Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մակարդակով նախատեսվել է իրականացնել ուսուցիչների վերապատրաստում ասորերենի բոլոր մակարդակների համար՝ ժամանակակից ուսումնական նյութերի օգտագործմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 892-Ն որոշմամբ սահմանվում են 2013 թվականի գործողությունների ծրագիրը եւ առաջնահերթությունները: Սույն Փաստաթղթի համաձայն՝ 2013 թվականին կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունների դպրոցների եւ ուսուցիչների վերապատրաստման համար նախատեսվել է 2 միավոր դասագիրք:

51. Ասորի աշակերտները սովորում են միջնակարգ դպրոցներում, որոնք նաեւ իրականացնում են ավագ դպրոցի ծրագիր:

53. 2013 թվականի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առաջնահերթություններից (կետ 39) նախադպրոցական կրթությունն առավել հասանելի դարձնելն ամրագրված է որպես առաջնահերթ խնդիր, որը նպատակաուղղված է նախադպրոցական կրթությանն առնչվող ծառայությունների կազմակերպմանը Հայաստանի Հանրապետության մարզերում, որտեղ չկան նախադպրոցական հաստատություններ կամ կան ոչ բավարար թվով աշխատողներ եւ սակավ հնարավորություններ ունեցող մանկապարտեզներ:

Ներկա փուլում՝ 2013 թվականի ընթացքում, Հայաստանի Հանրապետության 10 մարզերի 72 հիմնարկներում իրականացվում են նախադպրոցական հաստատությունների համար հատկացված տարածքների վերանորոգման եւ կահավորման աշխատանքներ:

Հիմնարկները կհամալրվեն ուսումնական բնույթի դիտողական նյութերով, պարագաներով, ինչպես նաեւ ուսումնական պլանով եւ մեթոդական

գրականությամբ: Կսկսեն գործել նախադպրոցական նոր հաստատություններ, որոնցում նախատեսված է ներառել ավելի քան 1800 երեխաների, այդ թվում՝ սոցիալապես խոցելի եւ ազգային փոքրամասնության պատկանող ընտանիքներից: Նոր կարճաժամկետ մոդելի համաձայն՝ գործարկված խմբերի համար նախատեսված կրթական ծախսերը, պայմանավորված նախադպրոցական կրթության չափորոշիչը կիրառելու անհրաժեշտությամբ, ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Ինչ վերաբերում է քրդերենով եւ ասորերենով իրականացվող նախադպրոցական կրթական ծրագրին եւ դրա հետ կապված ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակմանը, ապա հարկ է նշել, որ տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ուսումնամեթոդական ձեռնարկների մշակումը ներկայումս ընթացքի մեջ է եւ ամրագրված է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2009թթ. ռազմավարական ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 13-ի թիվ 10 արձանագրային որոշման մեջ: Այդ գործընթացի ավարտից հետո կնախատեսվեն եւ կիրականացվեն նախադպրոցական կրթության, այդ թվում՝ ասորերենի, քրդերենի, եզդիերենի ուսուցման համապարփակ ծրագրեր:

Նույն համատեքստում, համապատասխան ուսուցչական անձնակազմի վերապատրաստումը պետք է նաեւ իրականացվի Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության ազգային ինստիտուտում:

54. Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը, ասորերենի լեզվակիրների, դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների հետ համագործակցությամբ, տարրական դասարանների ծրագրում նախատեսել է ասորերենի ուսուցման դասաժամեր:

Հոդված 11. Լրատվամիջոցներ

Զեկույցի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության 117-րդ կետում նշվում է հետեւյալը՝

««Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով (28-րդ հոդված), այնուամենայնիվ, հեռարձակող կազմակերպությունների համար փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող եթերային ժամանակի հետ կապված սահմանափակում է նախատեսվում, համաձայն որի *յուրաքանչյուր լեզվով* հեռարձակվող հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը»:

Այստեղ ոչ միայն հոդվածն է սխալ նշված (26-րդ հոդվածի փոխարեն նշված է 28-րդ հոդվածը), այլ նաեւ բովանդակությունը ենթարկված է իմաստային էական փոփոխության, քանի որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանվում է, որ եթերային ժամանակ պետք է տրամադրվի Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի եւ հաղորդումների հեռարձակման համար: *Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը* (ոչ *յուրաքանչյուր լեզվի համար*) չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանվում է հետեւյալը՝

«1. Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի եւ պատմության, մարզական, ժամանցային եւ հանրության համար կարեւոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:

Հանրային հեռուստառադիոընկերությունը գործում է սույն օրենքին, իր կանոնադրությանը եւ Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերին համապատասխան:

2. Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստահաղորդումների արտադրության եւ հեռարձակման բնագավառում գործունեությունն իրականացնում է Հանրային հեռուստաընկերությունը, իսկ ռադիոհաղորդումների բնագավառում՝ Հանրային ռադիոընկերությունը: Հանրային հեռուստաընկերության եւ Հանրային ռադիոընկերության ղեկավարման մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է»:

Վերոնշյալ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի եւ հաղորդումների հեռարձակման համար: Ուստի, Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը պետք է նաեւ ներգրավված լինի Ձեկույցում նշված հարցերում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 հոդվածով սահմանվում է հետեւյալը՝

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) ձեւավորման սկզբունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով: Ազգային հանձնաժողովի անդամներից 4-ին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, իսկ մյուս 4-ին ընտրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Ազգային ժողովը Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացնում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով, մինչդեռ հաղթող թեկնածուն հանրապետության Նախագահի կողմից Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ է նշանակվում Նախագահի կողմից հաստատված մրցակցային ընտրության գործընթացին համապատասխան: Այդ տեղեկատվությունը՝ անհրաժեշտ հիմնավորումներով, հրապարակվում է մամուլում եւ զանգվածային այլ լրատվամիջոցներով: Հասարակական կազմակերպությունները նույնպես մասնակցում են Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների նշանակման գործընթացին՝ տրամադրելով նրանց երաշխավորագիր-նամակներ մրցույթին մասնակցելու համար:

Այսպիսով, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների կազմի այդօրինակ ընտրությամբ, առանց որեւէ խտրականության, ապահովվում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմում հասարակության բոլոր խմբերի ներկայացվածությունը:

2010 թվականին ՀՌԱՀ-ն իրականացրել է 25 մրցույթ՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի համաձայն, թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար: Արդյունքում հեռարձակող կազմակերպություններից հաղթող են ճանաչվել 21-ը, իսկ վերահեռարձակողներից՝ 4-ը: Լիցենզառուի ընտրության ժամանակ ՀՌԱՀ-ը հաշվի է առել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված պայմանները. մրցույթի մասնակիցներին այլ պայմաններ չեն առաջադրվել: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ հեռարձակող հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների նկատմամբ գործում են ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման հետ կապված սահմանափակումներ: Բացի դրանից, գրեթե բոլոր ընկերություններն իրենց հայտերում նշել են, որ պատրաստ են գտնել մշակութային, պատմական, տեղեկատվական բնույթի եւ այլ հաղորդումներ ազգային փոքրամասնությունների համայնքների համար եւ միեւնույն ժամանակ պատրաստ են եթերային ժամանակ տրամադրել այդ նպատակով:

Բոլոր հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները պարբերաբար

հեռարձակում են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքների՝ նրանց պատմության, կրթության, մշակույթի, լեզվի եւ իրավունքների վերաբերյալ հաղորդումներ: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում չկան զանգվածային լրատվամիջոցներ, որոնք տարածում են բացասական կարծրատիպեր ազգային փոքրամասնությունների մասին, ինչպես նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, արգելվում է հեռուստահաղորդումներն օգտագործել ազգային, ռասայական եւ կրոնական թշնամանք կամ երկպառակտություններ սերմանելու նպատակով:

Հոդված 12. Մշակութային գործունեություն եւ հաստատություններ

Փորձագետների կողմից Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի վերաբերյալ 3-րդ պարբերական զեկույցի՝ մշակույթի ոլորտին վերաբերող հարցերին առնչվող «Մշակութային գործունեություն եւ հաստատություններ» վերնագրով 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված պարտավորությունների շրջանակներում իրականացվում են հետեւյալ գործողությունները՝

- 2011 թվականին պետական աջակցություն է տրամադրվել «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ-ին՝ Բելառուսում անցկացվող՝ «Բելառուսկայա զորկա» (« Բելառուսական աստղ») փառատոնին մասնակցելու համար,
- 2012 թվականին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը «Մշակույթի միջոցով դեպի հանդուրժողականություն» նախագծի շրջանակներում աջակցություն է տրամադրել Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիաներում կազմակերպված համերգներին, ինչպես նաեւ Թբիլիսիում, Երուսաղեմում եւ Թել Ավիվում Վիլի Վայների համերգներին՝ կոմպոզիտոր Վիլի Վայների, դաշնակահարուհի Անահիտ Ներսիսյանի եւ

գեղարվեստական ղեկավար Արմեն Արնաուտով-Սարգսյանի մասնակցությունն ապահովելու հարցում:

Հոդված 13. Տնտեսական եւ հասարակական կյանքը

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի Փորձագետների կոմիտեի կողմից ընդունված զեկույցի 150-րդ, 151-րդ, 257-րդ, 260-րդ, 261-րդ, 351-րդ, 353-րդ, 354-րդ, 485-րդ կետերի առնչությամբ կցանկանայինք տեղեկացնել, որ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում, Երեւանի թիվ 1, Նորքի, ինչպես նաեւ Գյումրու տուն-ինտերնատներում, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո, բնակվում է ազգությամբ ոչ հայ 19 թոշակառու: Նշված թոշակառուներից տասներեքը՝ ռուսներ, երեքը՝ եզդիներ, մեկը՝ ասորի, մեկը՝ լատվիացի է, որոնք տարիներ շարունակ ապրել են Հայաստանի Հանրապետությունում, տիրապետել են հայերենին եւ հաղորդակցվելու հետ կապված որեւէ խնդիր չեն ունեցել:

Ինչ վերաբերում է զեկույցի 19-րդ հոդվածին, որտեղ Փորձագետների կոմիտեն եզրակացրել է, որ ուկրաիներենը և գերմաներենը Խարտիայի իմաստով տարածաշրջանային լեզուներ են, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ցանկանում է ներկայացնել 2011 թվականին իրականացված մարդահամարի տվյալներ պարունակող հետեւյալ աղյուսակները:

2011 թվականին Հայաստանում իրականացված մարդահամար

Մշտական բնակչություն՝ ըստ տարիքի և էթնիկ ծագման

Էթնիկ ծագումը	Ընդամենը	Տարիքը						
		0-9	10-19	20-29	30-39	40-49	50-59	60+
ՀՀ	3,018,854	387,501	411,712	564,163	410,426	388,024	412,290	444,738
Հայեր	2,961,801	379,155	403,277	553,964	402,434	380,840	405,656	436,475
Եզդիներ	35,308	5,984	6,236	6,795	5,193	4,645	3,624	2,831
Ռուսներ	11,911	1,160	1,088	1,669	1,481	1,299	1,745	3,469
Ասորիներ	2,769	371	374	514	331	320	394	465
Հույներ	900	79	71	112	121	100	121	296

Ուկրաինացիներ	1,176	65	55	101	131	167	199	458
Քրդեր	2,162	437	373	398	300	255	198	201
Վրացիներ	617	36	43	94	110	77	98	159
Պարսիկներ	476	44	51	175	93	71	26	16
Լեհեր	124	9	10	21	19	11	13	41
Բելառուսներ	214	10	7	18	25	23	34	97
Հրեաներ	127	18	11	18	9	10	15	46
Գերմանացիներ	67	5	7	3	8	12	16	16
Այլ	1,102	116	100	257	158	177	137	157
Հրաժարվել են պատասխանել	100	12	9	24	13	17	14	11

Մշտական բնակչությունը՝ ըստ էթնիկ ծագման եւ մայրենի լեզվի

Էթնիկ ծագումը	Ընդամենը	Մայրենի լեզուն																
		ՀԱՅԵՐԵՆ	ԵՂԵՐԵՆ	ՌՈՒՍԵՐԵՆ	ԱՍՈՐԵՐԵՆ	ՀՈՒՆԱՐԵՆ	ՌԻԿՆԵՐԵՆ	ՔՐԴԵՐԵՆ	ԼԵՐԵՆ	ԲԵԼԱՐՈՒՍԵՐԵՆ	ՎՐԱՅԵՆ	ԵՐԱՐԵՆ	ԱՆԳԼԵՆ	ՖՐԱՆՍԵՆ	ԳԵՐՄԱՆԵՆ	ՊԱՐՍԿԵՆ	ԱՅԵՆ	Հրատարակել են պատասխանել
ՀՀ	3,018,854	2,956,615	30,973	23,484	2,402	332	733	2,030	64	107	455	14	491	94	85	397	549	29
Հայեր	2,961,801	2,948,766	249	11,862	124	78	106	22	21	21	14	5	357	44	33	4	88	7

Մշտական բնակչությունը՝ ըստ էթնիկ ծագման եւ օտար լեզուների իմացության

Էթնիկ ծագումը	Ընդամենը	Օտար լեզուների իմացությունը																			
		ՀԱՅԵՐԵՆ	ԵՉԴԻԵՐԵՆ	ՌՌՒՍԵՐԵՆ	ԱՍՈՐԵՆ	ՀՈՒՆԱՐԵՆ	ՌԻՎԻՆԵՆ	ՔՐԴԵՆ	ԼԵՀԵՐԵՆ	ԲԵԼՈՒՍԵՐԵՆ	ՎՐԱՅԵՐԵՆ	ԵԲՐԱՆԵՐԵՆ	ԱՆԳԼԵՆ	ՖՐԱՍԵՆ	ԳԵՐՄԱՆԵՐԵՆ	ԻՍՊԱՆԵՐԵՆ	ՊԱՐՍԵՐԵՆ	ԹՈՒՐԵՆ	ԱՅԼԵՆ	Հրաժարվել են պատասխանել	Օտար լեզուների իմացության բացակայություն
ՀՀ	3,018,854	43,420	5,370	1,591,246	1,468	2,136	1,151	1,309	1,133	225	6,151	434	107,922	10,106	6,342	1,767	4,396	3,465	3,315	0	1,227,498
Հայեր	2,961,801	7,486	3,026	1,585,567	1,365	1,996	1,006	956	1,112	202	5,974	414	107,013	10,056	6,216	1,731	4,352	3,420	3,234	0	1,216,675
Եզդիներ	35,308	26,524	2,317	2,022	10	5	6	16	0	2	85	5	47	9	22	4	3	1	1	0	4,229
Ռուսներ	11,911	5,317	17	1,026	8	7	56	0	6	7	25	1	349	15	70	1	0	6	26	0	4,974

Ասորիներ	2,769	1,126	0	1,193	82	0	1	2	0	0	4	0	13	0	1	0	1	1	1	0	344
Հույներ	900	223	1	343	3	125	1	0	1	0	0	0	29	2	0	2	1	1	1	0	167
Ուկրաինացիներ	1,176	487	0	408	0	1	72	2	3	0	3	0	23	1	4	0	1	0	1	0	170
Քրդեր	2,162	1,520	6	59	0	0	0	33	1	0	2	4	4	0	1	0	9	16	0	0	207
								3													
Լեհեր	124	35	0	46	0	0	2	0	10	0	0	0	5	2	1	0	0	0	0	0	23
Բելառուսներ	214	99	1	54	0	0	1	0	0	13	1	0	8	0	0	0	0	0	0	0	37
Վրացիներ	617	129	0	147	0	0	0	0	0	0	57	7	12	1	2	0	0	0	0	0	262
Հրեաներ	127	20	0	52	0	0	1	0	0	0	0	3	6	1	2	0	0	3	2	0	37
Գերմանացիներ	67	28	0	13	0	0	0	0	0	0	0	0	7	0	10	2	0	0	1	0	6
Պարսիկներ	476	127	1	34	0	0	2	0	0	0	0	0	18	4	0	1	28	14	2	0	82
Այլ	1,102	292	1	237	0	1	3	0	0	1	0	0	216	18	12	26	1	3	45	0	246
Հրաժարվել են պատասխանել	100	7	0	45	0	1	0	0	0	0	0	0	6	0	1	0	0	0	1	0	39

Այսպիսով, հաշվի առնելով Հայաստանում մշտապես բնակվող գերմանացիների (67) եւ ուկրաինացիների (1176) փոքր թիվը, որոնցից միայն 20 գերմանացի եւ 606 ուկրաինացի են գերմաներենը եւ ուկրաիներենը համարում իրենց մայրենի լեզուն եւ, հաշվի առնելով այն փաստը, որ գերմաներենն ու ուկրաիներենը ավանդաբար չեն գործածվել Հայաստանի տարածքում, ինչպես պահանջվում է Խարտիայի 1-ին հոդվածով, նշված լեզուները չեն կարող համարվել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ:

Բ. Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը

«Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ» Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի CM/RecChL(2014)2 հանձնարարական

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2014 թվականի հունվարի 15-ին, նախարարների տեղակալների 1188-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն,

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն,

հաշվի առնելով Հայաստանի կողմից 2002 թվականի հունվարի 25-ին ներկայացված վավերացման փաստաթուղթը,

հաշվի առնելով Հայաստանի կողմից Խարտիայի կիրառման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի իրականացրած գնահատումը,

հաշվի առնելով, որ այս գնահատումը հիմնված է Հայաստանի կողմից իր երրորդ պարբերական զեկույցում ներկայացված տեղեկությունների, Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված հավելյալ տեղեկությունների, Հայաստանում օրենքով սահմանված կարգով ստեղծված մարմինների եւ ընկերակցությունների կողմից ներկայացված տեղեկությունների, ինչպես նաեւ Փորձագետների կոմիտեի աշխատանքային այցի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների վրա,

հաշվի առնելով Հայաստանի իշխանությունների կողմից Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ արված մեկնաբանությունները,

առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտարկումները եւ հանձնարարականները եւ, որպես առաջնային

խնդիր՝

1. խթանեն ասորերենի, քրդերենի եւ եզդիերենի գործածումը նախադարոցական կրթության ոլորտում եւ ընդլայնեն տարրական ու միջնակարգ մակարդակներում ասորերենի, հունարենի, քրդերենի եւ եզդիերենի դասավանդման առաջարկը,

2. ապահովեն ասորերենի, քրդերենի եւ եզդիերենի ուսուցիչների պատշաճ վերապատրաստում,

3. ապահովեն պատշաճ պայմաններ, որպեսզի հեռարձակողները հեռուստատեսային հաղորդումներ առաջարկեն ասորերենով, հունարենով, քրդերենով եւ եզդիերենով ու բարելավեն III մասում նշված լեզուների գործածությունը ռադիոյով,

4. մշակեն համակարգված քաղաքականություն եւ տրամադրեն հստակ իրավական հիմք՝ դատարաններում եւ պետական մարմիններում փոքրամասնությունների լեզուները գործածելու համար՝ 9-րդ եւ 10-րդ հոդվածների համաձայն պարտավորությունների գործնական իրականացումը դյուրացնելու նպատակով,

5. տրամադրեն համապատասխան ֆինանսավորում ազգային փոքրամասնությունների ընկերակցություններին՝ Էսարտիայի համաձայն փոքրամասնությունների լեզուների գործածումը խթանելու նպատակով: